



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՍԵՆԵՐ  
303


14  
79







7703





ԳՈԹՈՂԻԱ

ՈՂԵՆՐԳՈՒԹԻՒՆ Յ. ՌԱՍԻՆԻ

ԵՐԱՅԵՐԱՅԵ

ԳՈԹՈՂԻԱ

ՈՂԵՆՐԳՈՒԹԻՒՆ Յ. ՌԱՍԻՆԻ



ՍՆՐԵՔ

303

47

# ԳՈԹՈՂԻԱ

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ Յ. ՌԱՍԻՆԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԳԵՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻԻԶ

ԱՐԿԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՆԵԱՑ

693



Վ. ԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

1864



1036

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



303



303-2003

(3940)  
41

7

h. 302.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Թագաւորութեանն Յուդայ՝ որպէս յայտնի է ամենեցուն՝ երկուք ևեթ ՚ի ցեղիցն էին՝ Բենիամինին և Յուդայի։ Իսկ յայլոց ՚ի տասանց ցեղիցն որք նկատեցին զԽորովամ, եկաց թագաւորութիւնն Իսրայելի։ Եւ զի թագաւորք Յուդայ ՚ի տանէ Դաւթի էին, և Երուսաղէմ՝ և տաճարն սուրբ ՚ի նոցա բաժնին, քահանայք և զևտացիք համօրէն առ նոսա Ժողովեալք՝ ոչ ևս մեկնեցան ՚ի նոցանէ։ Յետ շինութեան Սոլոմոնեան տաճարին ոչ ևս օրէն էր այլուր զոհ մատուցանել, և սեղանք կանգնեալք Աստուծոյ ՚ի լերինս՝ Բարձուրքն կոչեցեալք ՚ի գրոց, ատելիք էին նմա։ Վասն որոց արտաքոյ Յուդայ ոչ ուրեք մատչէր Աստուծոյ պաշտօն օրինաւոր։ և տան ցեղք առ հասարակ՝ բաց ՚ի սակաւուց ոմանց՝ զիցապաշտք էին և հերեսիովսք։

Բայց և քահանայիցն և զևտացոց ցեղ մեծ էր յոյժ՝ որպէս զմի ՚ի բազմամբոխ ցեղիցն, որոց ՚ի խումբս խումբս բաժանեալ՝ շաբաթ ՚ի շաբաթէ կային փոխանակաւ ՚ի սպաս տաճարին։ Քահանայք յորդոց Ահարոնի էին և նոցա գործ էր զզոհսն մատուցանել։ Իսկ զևտացիք ՚ի ձեռանէ նոցա կային ՚ի սպասու ՚ի պատրաստութիւն երգոց, ՚ի հանդերձանս զոհից և ՚ի պահպանութիւն տաճարին։ այլ բազում այն է՝ զի ցեղն ողջն միով հասարակաց անուամբ զևտական կոչէր։ Շաբաթաւորացն՝ որպէս և քահանայից բնակութիւն շուրջ զտաճարան էր ՚ի գաւիթս նորին։ Տաճարն ողջն տեղի սուրբ կոչէր հասարակաբար, այլ ըստ առաւելութեան՝ ներքին կողմն տաճարին՝ ուր էին տապանակն ոսկի և սեղանքն խնկոց և հացին առաջաւորութեան, յորմէ անջրպետեալ բաժանէր Սրբութիւնն սրբութեանց, ուր քահանայապետին միայնոյ էր մտանել միանգամ ՚ի տարւոյ։

Էր և այս աւանդութիւն հաստատութեամբ ընկալեալ՝ զի՛ ՚ի լեառնն յոր երբեմն Աբրահամ զորդի իւր զԻսահակ մատուցանէր պատարագ, անդ կառուցեալ էր և տաճարն :

Չայտոսիկ մանրապատում՝ առնել հարկ համարեցայ՝ զի որք ընդ աղօս ունիցին զյիշատակ անցից հնոց կտակարանաց, յընթեռնուէն զողբերգութիւնս զայս մի՛ ոտնառեսցեն :

Եւ պատճառք ողբերգութեանս է յայտնութիւն Յովնայ եւ դահակալէլ նորին . նմին իրի պատշաճագոյն թերես էր՛ ՚ի նորս անուն կոչել զողբերգութիւնս զայս ՅովվԱՍ . բայց զի յորովից ընդ անուամբ Գոթոն զիայ ծանօթ են իրքն, ոչ՛ ՚ի դէպ թուեցաւ ինձ ընդ այլով անուամբ ընծայեցուցանել նոցա զայն :

Բազում ինչ իրք նախաշաւիղք են մեծի այսր գործոյ՝ յորոց ահա կարևորագոյնքն ՚ի մասնէ :

Յովրամ՝ արքայ Յուդայ՝ որդի Յովսափատայ՝ եօթներորդ ՚ի Դաւթայ ամուսնանայ զԳոթոնիա գուտոր Աքաբու և զՅեզաբելայ որք թագաւորէին յԵզրայէլ երկզքին ևս անուանիք՝ այլ մանաւանդ Յեզաբել հալածիչն և արեանարբու մարդարէից, որ ամբարշտութեամբ համանմանեալ մօր իւրոյ՝ զառածեցոյց զայր իւր զՅովրամ ՚ի կռապաշտութիւն և ետ կառուցանել յԵրուսակէմ՝ մեհեան Բահաղու գից Տիւրոսի և Սիդոնի ուստի ինքն էր : Յովրամ յետ կոտորածի որդւոց իւրոց արքայազանց ՚ի սուր Ասորոց և փոքր տացոց՝ յորոց Ոքոզիա միայն ապրեցաւ, ոչ յերկարս կեաց լեալ մեռանի չարաչար՝ ախիւ որովայնի հաշեալ : Ոքոզիա ազետալի մահուամբ հօր իւրոյ ոչ կասեցաւ ՚ի հետոց չարեաց նորին և ոչ յամբարշտութեանց մօր իւրոյ Գոթոնիայ, և յառաջնում ամի թագաւորութեան իւրոյ ելեալ տեսանել զարքայն Իսրայելի զեզբայր Գոթոնիայ՝ անդ համակործան ընդ տանն Աքաբու կորեաւ հրամանաւ Յեուայ, զոր էօծ Տէր ՚ի ձեռն մարդարէից իւրոց ՚ի թագաւոր Իսրայելի լինել իւր պաշտօնեայ վրէժինդիր : Յեու հարսպառեսց զտուն Աքաբու, ևս ընկենուէլ զՅեզաբել զահալէժ ընդ պատուհան, զորոյ զմարմինս՝ ըստ կանխագոյժ սպանալեաց Եղիսայի, լափեցին շունք ՚ի վիճակին Նաբովթայ, զոր նա ինքն սպանեալ էր և կալեալ

զժառանգութիւննորա : Ընդ ժառանգել գութի կոտորածին յԵրուսակէմ՝ յարեաւ և Գոթովիա և սպան զորդիս Ոքողիայ զԹոռունս իւր առ 'ի շիջուցանելոյ 'ի սպառ զճրագ տանն Գաւթի . բոյց դէպք 'ի բարի յաջողեցին Յովսափէթի, քեռ Ոքողիայ առ 'ի հօրէ, հասանել 'ի վերայ կոտորածի եղբօրորդւոց իւրոց, և գողացեալ ճարտարութեամբ զՅովսա մանուկ ստընդիաց 'ի միջոյ կոտորելոցն, ետ զնա դայեկաւն հանդերձ առն իւրում՝ Յովիդայեայ, որ առ Թագոյց զնոսա 'ի տաճարին : Անդ սնաւ Յովսա 'ի Թագստեան մինչև եկաց Թագաւոր Յուդայ յեօթներորդում՝ ամի տիոց իւրոց, որպէս աւանդեն Գիրք : Բայց յունարէն բնագիր գրոցն մնացորդաց՝ որում զհետ երթայ և Սեւերոս Սուլբիկիոս՝ յութերորդում՝ ամի տիոցն ասեն զնա Թագաւորեալ : Յայս ապաստան համարձակեցայ և ես տալ նմա զամս ինն՝ զի բաւական իցէ տալ պատասխանի հարցմանցն եղելոց առ նա : Եւ Թէպէտ չէք՝ որպէս կարծեմ՝ յամենայն խօսեցեալն 'ի նմանէ բարձրագոյն ինչ քան զտիս մանկան տասնամենի որոյ իցէ հանձար բնատուր, սակայն Թէ և բարձրագոյնս ինչ առեալ իցեմ՝ նմա խօսել, յուշ լիցի զի չէք նա որպէս զմի ոք 'ի հասարակաց մանկաւոյ . այլ սնե՞լ 'ի տաճարի և ընդ ինամօք մեծի քահանայապետի, որ զմիակ յոյս ազգին 'ի մատաղ տիոցն նախակրթէր 'ի հրահանգս կրօնից և օրինաց Թագաւորութեան : Թող զում ասել՝ զի ոչ որպէս ենն առ մեզ յողովագոյնք 'ի մանկանց, նոյնպէս և առ եբրայեցիսն էին . զի առ նոսա՝ այն ինչ 'ի չափ հասեալ մանկաւոյն, մանաւանդ Թէ՝ զի առաքելական բանիւն վարեցայց, կաթընկերք դեռևս՝ վարժէին 'ի սուրբ գիրս . և հրէից ամենեցուն պարտք էին դէթ միանգամ 'ի կեանս իւրեանց օրինակել բովանդակ զգիրս օրինաց : Նոյն պարտք 'ի վերայ կային և Թագաւորաց երկիցս օրինակելոյ զնոյն : Այլ զի է ինձ լուել աստանօր՝ զի Գաղղիա ինքնին որ բերկրին արդ 'ի Թագաժառանգ իւր պայազատ, որոյ ութ և կէս ամբ են դեռ ևս, յայանապէս տեսանէ 'ի նմա Թէ դաստիարակութիւն գեղեցիկ՝ զուգակցեալ ընդ բնատուր հանձարոյ օրջափ ինչ գիտիցէ ներգործել 'ի մանուկ մատաղ . և զի ոչ ոք կարէ սագտանել զիս իրաւամբք աննմանս ինչ ճշմարտութեան գործեցեալ՝ տա



ըով մանկան Յովատու զնոյն հանձար և զնոյն իմաստուածիւն՝ որչափ ինչ նշողենն արդ յանակնկալ պատասխանիս մանկանն արքայորդւոյ :

Իսկ Զաքարիայ որդւոյ քահանայապետին քանզի չիք ուրեք սահմանեալ չափ հասակին, կայլի ոք զնա որպէս և ախորժէ՝ երկուք կամ երիւք ամօք երկցազոյն քան զՅովաս :

Հաւանեալ եմ՝ բանից քաջահմուտ մեկնչաց՝ որք ՚ի բանից իսկ սուրբ գրոց առնուն ցուցանել՝ զի զօրականն որոց բաշխեաց Յովկիպոյէ զգէնսն նուիրեալս Աստուծոյ ՚ի Գաւթայ, ամենեքեան քահանայք էին և զԼատացիք՝ նոյնպէս և հրամանատարք նոցուն հինգ զօրավարք : Քանզի ՚ի գործ մի սուրբ այնպիսի՝ հարկ էր, ասեն, զի ամենայն ինչ սուրբ իցէ և անսուրբ ինչ մի խառնեցի ՚ի նմա : Քանզի գործ աւաջի կայր նոցա ոչ միայն պահէլ տան Գաւթի զգաւազանն արքունի, այլ և զանրնդհատ յաջորդութիւն սերնդոց մեծի արքային, յորմէ դալոց էր Մեսիայն : Քանզի խոստացեալն այն յաճախ Մեսիա ՚ի զաւակէ Աբրահամու՝ նոյն և Գաւթի և Թազաւորաց ամենեցուն Յուգայ ծնանելոց էր որդի : Ասան որոյ և մեծանուն հայրապետն Մելտայ Պոմիւէ, զորոյ զբանն արդ ՚ի կիր առնում, կոչէ ըզ-Յովաս « Տանն Գաւթի նշխար ցանկալի. զնոյն ասէ և Յովսէպոս, զնոյն յայտ առնեն և սուրբ դիրք յասելն, « Ոչ կամեցաւ Տէր սատակել զտուն Յովրամայ վասն սւխաին զոր էդ ընդ Գաւթի տալ նմա ճրագ և որդւոց նորա » . և զի՛նչ այլ ճրագն էր՝ բայց լոյսն որ յաւուր միում ծագելոց էր ՚ի նմանէ ազգաց և ազանց :

Թէ յորում աւուր Թազաւորեաց Յովաս՝ սուրբ դիրք ոչ նշանակեն. և ոմանց ՚ի մեկնչաց Թուեցաւ կարծել յաւուր տօնականի, և ինձ յարմարագոյն օրն Պենտեկոստեից, որ մի յերկց աւագագոյն տօնիցն էր առ հրեայս ՚ի յիշատակ օրէնսգրութեանն ՚ի Սինէ. և զի ՚ի նմին իսկ աւուր մտաչէր Աստուծոյ ՚ի սեղան հացն սուղաւորութեան ՚ի նորահաս արմտեաց, Եղախայրեաց ևս կոչեցաւ տօնն այն, և ես ընտրեցի զայն օր, զի յարակից հանգամանօք աւուրն փոփոխումն առցեն պարերգութիւնք :

Զպարն յօրինեն դատերք զԼատացւոց, յորոց միումն տուեալ զգէմն քեռ Զաքարիայ՝ կարգեմ նոցա պա-



րագլուխ • նա մուծանէ զնոսա առ մայր իւր, երգակից լինի նոցա, խօսի փոխանակ նոցա, և համայն՝ գործէ զամենայն զոր ինչ երբեմն առ նսինեօք պարագլուխն անուանեալ *χοροφαιος* *թօփֆէոս* : Փորձեցայ զարձեալ պահել յողբերգութեանս զմիութիւն իրի և տեղոյ որպէս նախնեացն էր սովորութիւն, առ որս ոչ գատարկանայր երբէք թատրն, և հանդէսք իւրաքանչիւր ընդմիջէին երգովք և վսեմախօս խմաստիւք ըստ իրացն պաշաճի :

Բայց այն ինձ թերևս գրեցի՝ ի յանդգնութիւն՝ զի մարգարէ աստուածախօս դուշակ հանդերձեցոյ մուծանեմ՝ ի թատր • սակայն զգուշացեալ եմ և յայնմ՝ ոչինչ առաւել քան զոր մարգարէքն խօսեցան տալ նմա բարբառել : Եւ թէպէտ սուրբ զիրք չասեն յայտնապէս և զՅովիդայ որպէս զորդոց նորա՝ ունել հոգի մարգարէութեան, բայց որպէս զայր աստուածարեալ ընծայեցուցանեն զնա յամենայնի • ո՛չ և Աւետարանական բանք յայտ առնեն՝ զի որպէս քահանայապետ՝ մարթէր նմա մարգարէանալ : Այսր աղադաւ համարիմ աստուածաղգեցիկ հոգւով կանխատես լեալ նորահանդերձեցոյ աղետալի յեղափոխութեանն Յովասայ, որոյ զամս երեսուն թագաւորեալ բարեպաշտութեամբ, զառածաւ ապա՝ ի հրատոյրս չարեաց ամբարիշտ խորհրդականացն, և շաղախեաց զձեռս իւր յարիւն Զաքարիայ որդոց քահանայապետին որ յաջորդեացն զնա : Սպանութեամբն այնուիկ գործեցելով ի տաճարին գրգռեցաւ ցասումն բարկութեանն Աստուծոյ ի վերայ Հրէից և եկին հասին նոցա որ ինչ յես այնորիկ ավետք • և որպէս աւանդի՝ յայնմ՝ օրէ և առ ապա լռեցին ի սպառ պատգամբ աստուածախօսք ի Դաբիրայն : Այսոցիկ աղադաւ համարձակեցայ և ես տալ Յովիդայեայ նախապատմել զկործանումն տաճարին և զաւերած Երուսակեմի : Եւ զի սովորութիւն էր մարգարէից ընդ սպառնալիս խառնել և միխթարականս, և զի որ գահակալէրն մի որ ի նախահարց Մեսիային էր, աստի պատճառս առեալ յաւելի մուծանել ի ներքս զլիշատակ գալստեան Միսիթարչին որ ակրնկալութիւնն էր համօրէն արգարոց :

Ընդ մարգարէութեան կցորդի ինքնին և երաժրչտութիւն ի Տեսլեանս յայսմիկ • որ զի մարգարէք ի

ձայն նուազաց աստուածարեալք յաճախ՝ յափշտակէին հողւով՝ վկայ բանիցս պար մարգարէիցն ելելոց ընդ առաջ Սաւուլայ և առաջի նոցա սրինգ և թրմբուկ և փող և քնար․ վկայ և Եղիսէ՝ որոյ հարցեալ 'ի թագաւորացն Իսրայելի և Յուդայ զլինելոցն, « Ածէք, առէ, սարմոսասաց » : Թողից ասել զի մարգարէութեանս այսորիկ ազգեցուծիւն մեծ է յողբերգութեանս՝ արհաւիրս և կիրս պէսպէս 'ի պարաւորսն և յառաջնորդս գործոյն յուզելով :

## Ա Ն Ձ Ի Ն Ք

- ՅՈՎԱՍ, Արքայ Յուդայ, որդի Ոքողիայ :
- ԳՈԹՈՂԻԱ, կին Յովբամայ, հանի Յովասայ :
- ՅՈՎԻԿԱՅԷ, Քահանայապետ :
- ՅՈՎՍԱԲԷԹ, Հօրաբոյր Յովասայ և կին Յովիդայեայ  
քահանայապետի :
- ԶԱԲԱՐԻԱ, որդի Յովիդայեայ և Յովսաբեթի :
- ՍԱԼՈՄԷ, քոյր Զաբարիայ :
- ԱԲԵՆՆԵՐ, 'ի զօրավարաց արքայից Յուդայ :
- ԱԶԱՐԻԱ, ԻՍՄԱՅԷԼ և երեք այլք 'ի զլսաւորաց քահանայիցն և զևտացւոց :
- ՄԱԹԱՆ, քահանայ ուրացող քուրմ Բահաղու :
- ՆԱԲԱԼ, մտերիմ Մաթանայ :
- ԱԳԱՐ, նաժիշտ Գոթողիայ :
- ԴԱՍ քահանայից և զևտացւոց :
- ԹԻԿՆԱՊԱՀԲ Գոթողիայ :
- ՍՏՆՏՈՒ դայեակ Յովասայ :
- ՊԱՐ մատաղերամ դատերաց զևտացւոց :
- Տեսարանն է յԵրուսաղէմ 'ի տաճարին 'ի գաւիթ  
բնակութեան քահանայապետին :

# ԳՈԹՈՂԻՍ



## Հ Ա Ն Դ Է Ս Ա Ռ Ս Զ Ի Ն



### ՏԵՍԻԼ Ա.

ՅՈՎԻԴԱՅԷ, ԱՌԵՆՆԵՐ

ԱՌԵՆՆԵՐ

Այո՛ երկըրպայեւ զամ՝ Անմահին յիւր տաճար,  
Եւ ըստ նախնեաց օրինի Հանդիսակից ձեզ աստանօր՝  
Տօնախըմբել ըզյիշատակ Հրաշից աւուրն այն մեծի,  
Յոր ի Սինէ զաստուածագիծ օրէնս էառ խորայէլ:  
Այլ քանի՞օն յեղափոխեալ արդ ժամանակք. անդ ի նախնու մն  
Ի հընչել փողոցն սըրբոյ զմեծի աւուրքս տարեդարձ,  
Ժողովուրդ սըրբեալ զեղոյր այսր ի սըրահըս տաճարիս  
Շուրջ զարդարեալս ի ծաղկանց շքեղաշուք ի դրասանգ.  
Եւ մատուցեալ այր ըստ առնէ առաջի սուրբ սեղանոյն,  
Ձօնէին զիւրաքանչիւր անդոց խայրիս նախընծայ,  
Յաճախաւոր զոհիցն ի սպաս ոչ բաւէին երիցունք:  
Այլ ժըպրհուծեամբ կընոջ միոյ տաճարս այժմիկ անմարդա-  
Եւ աւուրք պայծառագեղք նըսեմաստուեր խըրթնացան. [ցեալ  
Նուազունք ոմանք նախանձայոյզք ի կրօն՝ Հազիւ թէ իշխեն  
Ձառաջնոց ժամանակաց ըստուերազրել զաղօտ փայլ.  
Այլոց բնաւից արկեալ զԱստուած ի մոռացօնս աղետալի,  
Եւ կէսք ի մեհեանս իսկ Բահաղու խուռն ընթանան  
Նըւիրիլ ի պաշտամունս ամօթապարտ պըղծու թեանց՝  
Հայհոյելով զանունըն սուրբ զոր հարք իւրեանց կարգային:  
Եւ զի մի ինչ թագուցից ի քէն, երկիւղ է ինձ յոյժ,  
Գուցէ եւ զքեզ Գոթոզիա բարձցէ ի սուրբ սեղանոյս,  
Եւ զբըռնազբօս մեծարանաց ի բաց եղեալ ըզդիմակ,  
Ձօրհասարեր վըրիժօցն ի քեզ տացէ ի սպաս ըզյազուրդ:

## Յ Ո Վ Ի Դ Ա Յ Է

ԱՅԼ ուստի՞ շարագուշակդ ի սերկեանք քեզ այդ կասկած :

## ԱՐԵՆՆԵՐ

Եւ կարծիցեն անպատու հաս ի նմանէ գոլ սուրբ եւ արդար .  
 Ի բազմաց հետէ ռխայ նա նոգ արու թիւնքն չըքնաղ ,  
 Որով ըզխոյրքն սուրբ 'ի փառս Յովիդայէ ամբառնայ .  
 Ի վաղուց նա զանվէհեր նախանձաւորրդ կրօնից  
 Ոտիս թագին իւր համարի եւ պարագլուխ սալոտամբաց :  
 Դըշխոյն այն մախացող ընդ պերճ վաստակս առաքինեաց ,  
 Ատել ատեայ զամուսինդ հաւատարիմ՝ ըզՅովսաբէ թ .  
 Ըզմեծին Ահարոնի Յովիդայէ տանի զխոյր ,  
 Եւ վերջնոյն թագաւորաց մերոց է քոյր Յովսաբէ թ :  
 Թող զայս , եւ ինքն Մաթան , Մաթան երէցն ուխտագրուծ  
 Ժանտաժուտ քան ըզդըշխոյն կայ առ նրմա միշտ եւ քրսէ :  
 Մաթան դասակիք ի սուրբ մերոց սեղանոց ,  
 Եւ ռխերիմ թըշնամի առաքինեաց բոլորեցունց ,  
 Ոչ միայն ըզխոյր օտար ածեալ ի զլուխ իւր զեւտացին ,  
 Պաշտէ զԲահաղ , այլ եւ խեթիւ նա ի տաճար յայս ակնարկէ .  
 Ամբարիշտն այն ոչ կամի զի գուցէ Էն գոր ինքն ելէք :  
 Ձիք 'ի հնարից գոր ի կորուստ քոյին նա ոչ նիւ թեսցէ .  
 Է՛ զի բողոք ըզքէն կալեալ մեր թ յաճախէ դըբուտիս .  
 Պատիբ ի քեզ քաղցրութիւն վեր ի վերոյ կերպարանեալ ,  
 Ըզմաղձին իւր դառնութիւն հնարի այնուիկ թաքուցանել ,  
 Մեր թ ահարկու նա ըզքեզ նըկարագրէ առ դըշխոյն ,  
 Եւ մեր թ ի խայծ քաղցու նորին անյագելոյ առ ոսկի՝  
 Բանսարկէ առ ի Գաւթէ մթթերեալ գանձ բազմափար թամ  
 Յանձանօթ ուրեք վայրի թագուն , եւ քեզ եւեթ յայտնի :  
 Աւուրք երեք են այսօր՝ զի գոռոզն այն Գոթոզիա  
 Թըլի ի հոգ վարանական խորասուզեալ . տեսի երէկ  
 Ի սըբբավայր այսր ըզնա խոժոռ դիմօք ակընկառոյց ,  
 Իւրու այն՝ թէ ի խորրս լայնատարրր տաճարիս  
 Վըրէժխընդիր նրմա երկինք թագուցանեն ըսպառագէն :  
 Հաւատա ինձ , որչափ խորհիմն՝ այնչափ թըլի ինձ աներկբայ  
 Ձի ցասման նորա շանթիք ընդ հուպ ի քեզ ճայ թեսցեն .  
 Եւ դուստր Յեզաբելայ արիւնրուշտ յանդըզնեսցի  
 Դիմել աստուածընդէմ՝ ի սըբբարան այսր նորին :

## Յ Ո Վ Ի Դ Ա Յ Է

Որ զամեհի ալեաց ծովու սանձակօժէ զմոլեզնութիւն ,  
 Նոյն եւ զգաւանս ամբարըշտաց գիտէ հանել ի գերեւ .



Սըրբութեան կամաց նորա ըստորանկեալ գողութեամբ՝  
 Երկընչիմ՝ ես ի նմանէ, չիք այլուստեք ինձ երկիրդ :  
 Այլ շնորհապարտ քեզ գրտանիմ՝ զի բազեւէր նախանձու  
 Ըզվըտանգս ինձ ազդ առնեա ի զգուշութիւն, իմն Արեւններ .  
 Այդպէս ուրեմն իարայելեան դեռ բարակէ սիրտ ի քեզ,  
 Եւ զայրանաս ըռեւելայն ընդ ապիրատ չարեաց խոհեր .  
 Գոհութիւն Անմահին, այլ այդ զանխուլ զայրոյթ քոյն  
 Եւ բարութիւն սըրտի անգործ իցէ թէ քեզ թուեացին ինչ շատ  
 իցէ թէ սին յարդեանց հաւատք՝ իցէն հաւատք անկեղծիկ :  
 Ութեակ այժմիկ բոլորին ամբ զի ամբարիշտ եկ օտար  
 Ըզդութեան գաւազանին բռնակալեալ զիրաւունս,  
 Մոլեզնի անպատուհաս յարիւն մերոց արքայազանց :  
 Վիրագ անիծապարտ, թոռանց իւրոց կենազբաւ,  
 Աստուածընդդէմ՝ իսկ յաւակնի ամբառնալ ձեռն ամբարիշտ :  
 Եւ դու մի հաստարանաց խարխալելոյ պետութեանս,  
 Որ զինուորեալ է բանակ Յովսափատայ սուրբ արքային,  
 Որ զօրավար կացեալ զօրուն որդւոյ նորա Յովքամայ,  
 Եղեր միայն դու ասրաւէն խուճապելոց քաղաքաց,  
 Ի լինել Ոքոզիայ յանկարծամահ, մինչ զօրք նորա  
 Վայրապատին առհասարակ դնային հանդէպ սրոյն Յէուայ,  
 Երկընչիմ դու յԱստուծոյ, դու ըննախանձ իւր նախանձիս :  
 Լուր ապա՝ զոր ինչ Աստուածն այն քեզ ինեւ տայ պատգամ .  
 » Զի՛ յօրինացս իմոց ի զուր պարծիք յուզել ի նախանձ .  
 » Մեծարել զիս կարծիցէք ի նուէր ուխտից ձերոց սնտակաց .  
 » Զի՛ կայ իմ՝ եւ բոլորից բնուից զոհիցդ յաճախելոյ,  
 » Մի՛թէ կարօտ երընջոցդ իցեմ՝ արեան եւ նոխազաց .  
 » Թագաւորաց ձերոց արիւն գոչէ՛ եւ չիք որ լրսիցէ .  
 » Խըզցէք նախ ըզարեաց կընճիւն եւ զդաշն անօրէն,  
 » Բնաջինջ յիարայելէ բարձէք զեղեռն եւ զոճիք,  
 » Եւ ապա՝ թէ մատուցեալ հանջիք ինձ զոհ ի սեղանս :

ԱՌԵՆՆԵՐ

Այլ զի՛նչ առնել իցէ ինձ ի մէջ ազգիս վատթարելոյ,  
 Չիք զօրութիւն ի բննիամին, ոչ քաջութիւն ի Յուդա .  
 Յորմէհեաէ թագաւորաց նոցա շիջաւ ազգատոհմ,  
 Շիջաւ եւ արութեան նոցա եռանդըն նախնի .  
 Եւնք, ասեն, ըզմեզ Աստուած, զարձոյց զերեսս իւր ի մէնջ .  
 Որ երբեմն իարայելի փառացն այնքան վրէժխընդիր,  
 Անկարեկիր արդ տեսանէ ըզմեծութիւն նորա զգեանեալ .  
 Ոչորմութիւն իւր պարտասեալ՝ ոչ եւս ահեղ բազկաւ իւրով  
 Պակուցանէ անթիւ հրաշիւք ի վրէժ մեր զազգ եւ զազինս .  
 Լռեաց Գարիբըն սըրբութեան, ոչ եւս ազդէ մեզ պատգամ :  
 ԳՈԹՈՂԻԱ



## ՅՈՎԻԴԱՅ:

Այլ քան զայժմուս փարթամագոյն ի հրաշս իցէ՞ ժամանակ .  
 Ե՛րբ ճոխագոյն արար հանդէս բարձրեալն իւրոյ զօրութեան .  
 Ազգ ապաշնորհ, եւ մինչեւ ցե՛րբ փակեցես զաչս ի տեսանել,  
 Յե՛րբ խընտասիրտ կացցես ի լուր հրաշից ձեռինքն մեծազօր .  
 Իցէ՛ ինչ հարկ, Աբեններ, յիշատակել քեզ մի առ մի .  
 Որ ինչ յաւուրս մեր գործեալ ըսքանչեւիս մեծահրաշ .  
 Զաշխարհալուր պատուհաս բըռնաւորացն իսրայելի .  
 Ի լըրումքն կանխագոյժ աստուածասաստ ըսպառնալեաց ,  
 Զամբարըշտին Աբաարու ըզկործանումքն դիտապաստ ,  
 Եւ զգրաւեալն ըսպանութեամբ ներկեալ յարին նորա զվիճակ .  
 Առ նոզին աղիտաբեր այգւով անկեալ ըզՅեզարէլ .  
 Առաթուր երկվարաց կոխան եղեալ ըզգըշտոյն ,  
 Ի խուժադուժ յարին նորա յազեալ լավիէզ շանց ըզճարաւ ,  
 Եւ զսոսկելի դիակն անդամ՝ անդամ՝ յօչեալ ընկեցիկ .  
 Ըզսուտ մարգարէից խայտառակեալ ըզնախիր ,  
 Եւ ըզբողոյն ի յերկնից էջս յողջակիւղին ի սեղան .  
 ԶԵղիս իշխանօրէն պատգամատու տարերաց ,  
 Եւ ի բարբառ նորին եղեալ զերկինքս ձոյլ պղղընձի .  
 Զեռամեոյ երաշտ երկրի ի յանձրեւոյ եւ ի ցօղոյ ,  
 Եւ զմեռելոց յառնել ի ձայն Եղիսէի վերկենցաղ :  
 Յայսքանեաց հրաշից ի ցոյց, Աբեններ, ո՛չ ծանիցես ,  
 Զի որ ինչ էրն ի սկզբանէ Աստուած է նոյն եւ այսօր ,  
 Եւ զի փառաց իւրոց գիտէ առնել հանդէս երբ կամի ,  
 Եւ չառնէ երբէք անտես , ոչ մոռանայ զիւր ժողովօրդ :

## ԱՅԵՆՆԵՐ

Այլ ո՛ր իցեն փառքն այնքանիցըս խոստացեալ առ Գաւիթ .  
 Եւ առ որդի նորին դարձեալ կանխաձայնեալ առ Սողոմոն :  
 Աւաղ, մէք ակն ունէաք ի բարեփառ տոհմէ անտի  
 Թագակալ պայազատաց ըզհետ միմեանց յաջօրդելոյ .  
 Եւ միոյ ի նոցանէ միահեծան տիրապետեալ  
 Իսրայելեան ցեղից բնաւից եւ ակիւռ աղցաց եւ ազանց ,  
 Տարազիր ըզպատերազմ՝ եւ զհեռ յերկրէ բառնալոյ ,  
 Եւ հանուրց թագաւորաց դիմելոյ յսաբս նորա :

## ՅՈՎԻԴԱՅ:

Առ ի՛նչ իցէ քեզ թերանալ արդ յերկնաւոր խոստմանէն :

## ԱՅԵՆՆԵՐ

Եւ ուրանօր մեզ ի դաւթեան զարմէն խընդրել պայազատ .

Վարիցե՞ն երկինք ինքնին ըզզօսացեալն արմատաքի  
 վերականգնել ըզբուն զարմին նորարողքոջ ի սերունդ :  
 Հեղձոյց Գոթողիա եւ զբատընդեայն ի յորրանի ,  
 Եւ յարիցե՞ն մեռեալք ըզհետ ութից ամաց ի շիրմէ :  
 Ո՛հ թէ յանկարծ ի մոլեկան բռնութենէ նորին վրիպեալ  
 Շիթ մի միայն էր մեզ մնացեալ յարքայազարմ յարենէն , . . .

ՅՈՎԻԴԱՅԷ

Եւ զի՞նչ յայնժամ առնէիր դու :

ԱՌԵՆՆԵՐ

Օրն այն ինձ զի՞ երանաւեա .  
 Դիմէի առ նա անձկաւ որպէս առ բնիկ իմ թագաւոր .  
 Անշուշտ եւ ցեղք մեր համօրէն ճեպէին յօտըս նորա . . . .  
 Այլ զի՞ ի դուր ինձ յայտասիկ յանիք ի ցնորբս թարթափել .  
 Յաղթական թագաւորաց մերոց ժառանգ աւաղելի  
 Որողիա եւեթ մընայր արքայազարմ ճընընդովք .  
 Ի Յէուսոյ նետից ըզհայրն աչք իմ տեսին հարեալ ի մահ ,  
 Եւ ի յանգութ մօրէն զորդիս դու իսկ տեսեր վարեալ ի սպանդ :

ՅՈՎԻԴԱՅԷ

Այժմ՜ ես քեզ ոչ յայտնաբանեմ . բայց օրակշիռ արփենոյն  
 Զերկնաճեմ ասպարիզին այն ինչ զերիր մասն հոլովեալ ,  
 Մինչ ժամ երբորդ առնէ հրաւէր հասարակաց աղօթից ,  
 Կանխեսջիր այսր ի տաճար դո՞վին վառեալ նախանձու ,  
 Եւ մեծազօր աջոյն շնորհաց զերահրաշից ի տեսիլ  
 Խեղամուտ լիցիս զի բանք իւր հաստատունք են ոչ վրիպին :  
 Երթ արդ եւ թող ինձ պատրասեալ մեծի աւուրս ի պաշտօն .  
 Այգն աւասիկ ճառագայթեալ ըզգըմբէթաւ տաճարիս :

ԱՌԵՆՆԵՐ

Եւ զի՞նչ շընորհքն այն իցեն որոց չկարեմ կալ ի վերայ .  
 Այլ Յովսաբէթ ահա տիկինըն մեծ առ քեզ դիմեալ գայ .  
 Բարեաւ մընա . գնամ խառնիլ եւ ես ի գունդ երկիրաշածաց ,  
 Զորս աստանօր համախըմբէ տօնականի աւուրս հանդէս :

### ՏԵՍԻԼ Բ

#### ՅՈՎԻԴԱՅԷ, ՅՈՎՍԱԲԷԹ

##### ՅՈՎԻԴԱՅԷ

Տիկին, Հասեալ է ժամանակն՝ արդ ժամ է մեզ խօսելը .  
 Ոչ եւս է մարթ թագաւոցանեւ ըզքոյդ գողօն երջանիկ .  
 Աստուածամարտ անօրինաց եղեռնաւոր ժըպրհու թիւն  
 Խորըռութեամբս այսուիկ եւ եւս ընդդէմ նորին յանդըզնեալ,  
 Սուտ ի բազմաց հետէ զխոստմունքս նորա լեալ Հայհոյեն .  
 Նա աւանիկ զայրոյթ նոցին յաջողութեամբն խրախուսեալ .  
 Մինչ ի սեղան այսր ի մեր ժըպրհի մօրս . քո ժանտաժուտ  
 Արկանեւ դիցըն Բահաղու աստանօր խունկ կռապարիշտ .  
 Օ՛ն ի տեսիլ անցուք զարքայն մանուկ զըր ձեռք քո կեցուցին,  
 Որ ընդ թեւօք խնամոց Էին ի տաճարի աստ սընեալ .  
 Լիցի ժառանգ նա արութեան թագաւորաց մերոց Յուդայ .  
 Գեր ի վերայ տիոցն այժմէն լուսափայլէ ի նմա Հանճար .  
 Մինչեւ ըզբազդ նորա ինձէն անեալ ի լուր Հըռչակաւ,  
 Ընծայեցից ընա Տեառն՝ իւ թագաւորք թագաւորեն .  
 Եւ գբահանայս եւ զլեւտացիս մեր հուպ ընդ հուպ համախըմ .  
 Զարքայից իւրեանց ժառանգ անից նոցա ի տեսիլ : [բեալ,

##### ՅՈՎՍԱԲԷԹ

Եւ գիտիցէ՞ մանուկն ըզզարմ իւր արքունի եւ զանուն :

##### ՅՈՎԻԴԱՅԷ

Ելիակիմ՝ անուանն եւեթ նա ձայն դեռեւս տայ ի կոչ .  
 Եւ համարի զինքն ի մանկանց զըք ընկեցիկ ի մօրէ,  
 Զոր ժողովեալ իմ գըթութեամբ յանձանձիցեմ հայրօրէն :

##### ՅՈՎՍԱԲԷԹ

Աւաղ, յորմէ վտանգէ թափեալ սպրեցուցի զնա մազապուր,  
 Եւ յորպիսի դարձեալ ի վտանգ արդ հանդերձի անկանեւ :

##### ՅՈՎԻԴԱՅԷ

Իսկ զիարդ այգպէս հաւատք քո սասանեալ դեղեւին :

##### ՅՈՎՍԱԲԷԹ

Ի քո խորհուրդս առաքինի, տէր, աւասիկ կամ ապաստան .  
 Յորմէ օրէ սպրեցուցի եւ ըզմանուկդ ի մահուանէ,

Ի ձեռքս քո բովանդակ ըզբաղդ նորա աւանդեցի ,  
 Եւ առ կասկած բըռնուի թեան խանդաղանաց սիրոյ սըրտիս ,  
 Յերեսաց նորին խուսեմ որչափ իցէ ինձ հընար ,  
 Ձի գուցէ ի տես նորին խոռով անխորհուրդ յուզեալ յիս ,  
 Ընդ արտասուս ածեալ ի յայտ եւ ըզգաղտնիս իմ մատնեցէ :  
 Ձայստսիկ մանաւանդ զերեսին տիւս եւ ըզգիշերս  
 Աղօթից եւ արտասուաց ընծայեցի բոլորանուէր :  
 Բայց թէ իցէ ինձ օրէն առնել քեզ զայս եւեթ հարցուած ,  
 Ո՛յք ի մըտերմաց իցեն պատրաստ քեզ օգնելոյ .  
 Աբեններ , քաջն Աբեններ իցէ եւ նա մեզ կուտակից .  
 Երգուան եւ ինքն արքայի հաւատարիմ՝ գոլ պաշտօնեայ :

## ՅՈՎԻԴԱՅԷ

Ընդ հաւատս Աբեններայ թէպէտ եւ չիք կասկածել ,  
 Սակայն եւ ոչ գեռ գիտէ նա զի է մեր բնիկ թագաւոր :

## ՅՈՎԱՍԲԷԹ

Յո՛ր ապա պահպանուի թիւն հաւատացես դու զՅովաս .  
 Ովբեդայ թէ Ամմոնի՝ ո՛ւմ յերկոցունց տացին փառքդ այդ .  
 Ի հօրէն իմմէ գործա՝ առատապէս բարերարեալք , . . .

## ՅՈՎԻԴԱՅԷ

Անօրինին Գոթողեայ վաճառեցան ի սարբկու թիւն :

## ՅՈՎԱՍԲԷԹ

Իսկ զո՛յս հանցես դու ի ճակատ արբանեկաց ոսոխին :

## ՅՈՎԻԴԱՅԷ

Ըզգեւտացիս եւ զքահանայս մեր , ո՛չ քեզ այժմ՝ ասացի :

## ՅՈՎԱՍԲԷԹ

Գիտեմ՝ զի այսքր ժողովեալ նոցա առ քեզ լլուելեայն ,  
 Նախահոգ քոյով խնամօք յաւելու թիւ նոցա կըրկին .  
 Եւ զի պարչեալք ի Գոթողեայ եւ կըցորդեալք ընդ քեզ սիրով ,  
 Ի հանդէս ուխտի երգուան կանխաւ այժմէն ծառայու թիւն  
 Հանդերձելոյ ի յայտնել նոցա դաւ թեան պայազատին :  
 Սակայն թէպէտ եւ վառեալ գոցա յեռանդն այդպիսի վեհ ,  
 Բաւեցեն վերամարտիկք գոլ արքայի միայնակք .  
 Առ գործ մի մեծ այդպիսի իցէ՛ նախանձ նոցա հերիք :  
 Ընդ շըշունջ համբաւոյ զի է որդի աստ Ոքոզիայ ,  
 Երկրայիցին զի զայլազգեաց իւրոց առեալ վայրագ խուժան ,  
 Գայցէ պատել Գոթողեայ զտաճարս , ըզգրուներս խորտակել .



Եւ տոկայցե՛ն սաշտոնեայքըդ սրբութեան ընդդէմ նոցա ,  
 Որոց զամբիծ ի վեր ըզձեռս իւրեանց առ Տէր ամբարձեալ  
 Հեծել եւեթ եւ քաւութիւն մեղաց մերոց գիտեն մաղթել .  
 Եւ որոց չէք երբէք եւ չէք բայց ըզգոհեց հեղեալ արիւն ,  
 Ի դոցա դիրկըս թէ յանկարծ հարեալ Յովաս կարեվէր , . . .

## ՅՈՎԻԴԱՅԷ

Սակայն ոչինչ գրեն դու զԱստուած որ մարտընչին վառն մեր  
 ՉԱստուած , անմեղութեան որբոց պաշտպան եւ խնամակալ .  
 Որ զօրութեան բազկի իւրոյ Հանդէս առնէ ի տկարութեան  
 ՉԱստուած՝ բռնաւորաց զանհաշտ սոսիս այն որ երգուաւ .  
 ԸզՅեզաբէլ եւ զԱբաբա կորուսանել ի Յեզայէլ .  
 ՉԱստուած՝ որ ըզփեսայ նոցին Յովբամ սատակեալ ,  
 Եւ ժանտաժուտ զարմին ի վրէժ յորդի նորին իսկ ոչ խնայեաց  
 ՉԱստուած՝ ղյր վրիժառու ձեռն առ վայրիկ մի զկայ առեալ ,  
 Սակայն ձըգի սպառնալից ի վերայ տանն ամբարընտի :

## ՅՈՎՍԱԲԷԹ

Այդ իսկ ցասունն աստուածասաստ ընդ բովանդակ տունն ար-  
 Խելթ ի սիրտ իմ արկանէ եւ վանն հիբի եղբօրորդւոյս . [քունի  
 Ո՞ գիտէ , դուցէ եւ ինքն ընդ մեղօք հարց իւրոց գրաւեալ ,  
 Անդբատին ի խանձարրոց իցէ՛նդ նոսա դատապարտեալ .  
 Եւ իցէ՛ զի հաճեացի Աստուած ի շնորհքս Գաւթի  
 Որոշել ըզբաղդ նորա յանիժապարտ զարմէ իւրմէ :

Եղուկ , տեսիլն այն քըստմնելի յոր ինձ ըզդա ցուցին երկինք  
 Լինի անդուլ ինձ յանդիման սարուռ . յոսկերս իմ արկեալ .  
 Աբբայորդիք ի սենկկի անդ տարածեալ սրախողխող ,  
 Սուբ ի ձեռնն Գոթողիա արձանացեալ անողբ ,  
 Խրախոյս ի կոտորած տայր խուժադուժ իւրոց դահճաց  
 Ի լուռն անել զարիւնարբու ոճիր իւրոց եղեռանց .  
 Յանկարծ Յովաս հարաւ աչացս անդ ընկեցիկ որպէս մեռեալ ,  
 Ակներեւ դեռեւս ինձ կայ դայեակ նորա ահաբեկեալ ,  
 Եւ առ ոտըս դահճաց անկեալ ի զուր ողորբաւոր ,  
 Մանկիկն ի տկար նորին բազուկս յետս ի նորա լանջըս շրջեալ .  
 Բարձի ըզնա արիւնաներկ , եւ մինչ զերեսսըն թանայի ,  
 Ի ցողել արտասուաց իմոց ոգի առեալ մանկանն  
 Յարհաւրաց դեռեւս արդեօք կամ թէ գըգուել զին կամելով  
 Չանմեղ բազուկսն ըզգայի զի տարածեալ փաբէր դինեւ :  
 Միթէ գորով սիրոյս , ով Տէր , աղիտաբէր լիցի նմա .  
 Հաւատարմին քոյոյ Գաւթի մնայ մեզ նըշխար սա ցանկալի ,  
 Ընդ հովանեաւ տան քո սրբոյ սընեալ ի սէր օրինաց քոց ,  
 Ըզբեզ միայն եւ ոչ զսլլ որ դեռեւս ի հայր իւր ճանաչէ :



Ահա հասեալ ժամ ի դըշխոյն մարդախողջ յարձակելոյ .  
 Յերեսաց վրտանդին եթէ հաւատք իմ սասանին ,  
 Եթէ մարմին եւ արիւն հարեալ ի խող յիս ի սերկեան ,  
 Տան առաւել քան զարժան հեղուլ արտօսք առ սէր նորա ,  
 Յիմ եւեթ անկցի ի գլուխ մեղաց իմոց պատուհաս ,  
 Եւ աջ քո , Տէր , յաւետեաց քոց ի ժառանգ հովանասցի :

ՅՈՎԻԴԱՅԷ

Չեն Յովսաբէթ , չեն արտասուքդ այդ գորովոյ քեզ ի մեզ ,  
 Այլ Տէր կամի ի հայրագութ ի ինամբս իւր յուսալ մեզ .  
 Գաւ ի նմանէ թէ զաշացու սրբամբանութեամբ խընդրիցէ  
 Ըզճօր ամբարբշտի ի յերկիւղած որդւոյ ըզվրէժ :  
 Որք միանգամ հաւատարիմք յԽրայելէ կաց եւ մնաց  
 Եկեացեն կըռել այսօր ուխտ , տալ երդումն արքայի .  
 Որչափ եւ պատուական նոցա զաւակն է Դաւթեան ,  
 Նոյնչափ դուստր Յեզարելայ դըժպչի նոցա եւ դարչելի .  
 Ազնուաշուք տեսլեամբն Յովսա ածցէ զիւրեւ ըզնոսին՝  
 Ըզիպալ զարմին իւրոյ գողցես 'ի դէմքս իւր բերելով .  
 Եւ ի բարբառ իւր զօրավիզքն մեզ եւ ինքն յաւելեալ ,  
 Ազդողագոյն ի սիրտ նոցա Տէր ի տաճար իւր խօսեսցի :  
 Արքայք կըրկին աստուածամարտք ըզճեստ միմեանց դահակա-  
 ժամ է արգ թագաւորի այնպիսուոյ կալ ինոյն դահ , [լեալ  
 Որ յիշեսցէ յաւուր միում զի Տէր ըզնա բազմեցոյց  
 Ի հայրենին իւր աթոռ քահանայից իւրոց ձեռամբ ,  
 Եւ զի ի ձեռքն նոցա զինքն ի յանյուշ շիրմէն կորզեալ ,  
 Նորանբշոյլ ըզշիջեալ ճըբագ Դաւթի անդրէն ելոյց :  
 Թէ կանխատես դիտես ահամբ զի անարժան իւրոյ զարմին ,  
 Ամենակալ Տէր , զարտուղի դա ի հետոց անկցի Դաւթի ,  
 Վաղավախ ճան հանգոյն պըտոցոյ խլեսցի անդէն իսկ ի ծնէ .  
 կամ ի խորչակ սխերիմ դեռ ի ծաղկի անդ խամբեսցի .  
 Իսկ թէ հնազանդ օրինացըզ քոց իցէ թէ լինիցի ,  
 Գործի պատկանաւոր երկնաւորաց քոց խորհըրդոց ,  
 Տուր , Տէր , զի թագն արքունական ի բնիկ ժառանգ իւր դարձցի .  
 Եւ զթըշնամիս նորա հըզօրս արկ ի տրկար ձեռս իմ այսբէն :  
 Ահ եւ խուճապ անկցին ի սիրտ անագորոյն դըշխոյին ,  
 Արկ , Տէր , ինա , արկ ի Մաթան , թէ իցեն ուխտք իմ լըսելի ,  
 Արկ ի նոսա հոգի մօլար եւ յետամիտ խորհըրդոց ,  
 Օրհասի թագաւորաց չարագուշակ կարապետ : [գերձ  
 Ողջամբ մընա , սուղ է ինձ ժամս . ահա որդին քո քերքն հան-  
 Ըզարբազան տոհմից դըստերց առեալ ըզպարն այսրբ դիմեն :



### ՏԵՍԻԼ Գ

ՅՈՎԱՍԵԷԹ, ԶԱՔԱՐԻԱ, ՍԱԼՈՄԷ, ՊԱՐՆ

ՅՈՎԱՍԵԷԹ

Զաքարէ որդեակ սիրուն, մի յամենար դու աստէն . [ըիմք  
 Երթ վեհափառ հօր քուժ ըզհետ : Դըստերք Ղեւեայ հաւատա-  
 Օրիորդաց պար՝ աստըստին վառեալք փառաց Տեառն ի նախանձ,  
 Որք ըստէս գայք հառաչել եւ տըրտմակից հեծել ընդ իս .  
 Դուք եւեթ ըսփոփանք սըրտիս ի վիշտս իմ՝ ընդերկար ,  
 Այդ որ ի ձեռքս ձեր ծաղկանց փունջք եւ ի գլուխս ձեր պը-  
 վայելուչք երբեմն էին շքքեղափառ մերոց տօնից . [սակք՝  
 Այլ արդ աւաղ , ի դառնաղէտ նախատանաց ժամանակիս  
 Զինչ քան զարտօսք աչաց իցէ ի նուէր տօնիս վայելուչ :  
 Այլ ինձ ձայն փողոց ազդի , փողն աւասիկ հընչէ սուրբ .  
 Բացցին դրունք արդ տաճարիս , եւ մինչ մեկնիմս ահա ի դնալ :  
 Դուք երգս առէք օրհնել ըղճեր յոյր ի խընդիր այսըր գայր :

### ՏԵՍԻԼ Դ

ՊԱՐ ԴՍՏԵՐԱՑ

ՊԱՐՆ ՄԻՍՀԱՄՈՒՌ


Լի սրանչելեօք փառաց նորա են տիեզերք ամենայն .  
 Երկիրպագցուք նըմա , յաւերթ զանուն նորա կարդասցուք .  
 Զի տէրութիւն նորա է նախ քան զամենայն յաւիտեան .  
 Նըմա յաւերթ երգս օրհնութեան  
 Հանցուք շնորհաց նորա փոխան :

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԻՆ

Ընդվայր բըռունք անհամբոյր  
 Փակեն ըզուրթն օրհներգու ,  
 Զանուն նորա օր աուր  
 Պատմէ յաւերթ անլեզու :

ՊԱՐՆ

Լի են փառօք նորա երկինք եւ տիեզերք համօրէն ,  
 Երգս օրհնութեան հանցուք նըմա փոխարէն :



## ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Նովաւ երվինազարդ նըկարին ծաղկունք ,  
 Պըճնին վարսագեղ ծանրանան կողերք պըտղովակաղճունք ,  
 Ընդունի երկիր շող յարեգակնէ , շող ի յաստեղաց  
 Եւ տայ տոկոսեօք ըզգերս արմըտեաց :

## ԱՅԼ ՈՄՆ

Հրաման նոյն ինքըն տայ արվուոյն կենազործել զհամագոյս ,  
 Նորին պարգեւ ձեռին է լոյս կենսածիր .  
 Այլ օրինաց իւրոց սըրբոց մեծ եւս է ձիր քան ըզլոյս ,  
 Եւ բնաւք ընդ այնրմ պարգեւք ոչ իսկ կարեն գալ ի կըշիտ :

## ՄԻՒՍ ՈՄՆ

Լեռքն Սինա բարձրադիտակ  
 Յաւերժացո ընդ մայրիս քո  
 Զմեծի աւուրս այս յիշատակ ,  
 Յոր ի հրադէզ քո գազաթան  
 Ընդ թանձրախիտ քողով ամպոց  
 Շողացոյց Տէր յաչըս մարդկան  
 Զաղօս նըշըլ փառաց իւրոց :  
 Առ ինչ բոցդ այդ աղէ , հրավառ  
 Զինչ այդ ցոլմունք փայլատականց ,  
 Փողոց հընչմունք , ճայթք որոտմանց  
 Եւ շառաչող հողմոց գուպար .  
 Մի տապալել զտարերց սահման ,  
 Կամ թէ զերկրի եկաւորէր  
 Քանդել զհիմունս յաւերժական :

## ԱՅԼ ՈՄՆ

Ոչ առ այդ ոչ՝ գայր նա միայն  
 Ընտրականի իւրոյ տուհմին  
 Օրէնըս տալ յաւերժական ,  
 Գայր ի ծագել առ հարըս մեր  
 Ըզլոյս իւրոց պատուիրանաց  
 Զանլոյծ սիրոյն տալ ըզպատուէր :

## ՊԱՐՆ

Ո վ աստուածագիծ օրէնք գեղազան ,  
 Ո վ արդարութիւն , ով խորք բարութեան .  
 Ո՛հ զի վայելուչ , զի արդ ցանկալի  
 Ուխտիւ հաւատոյ եւ բոլորանուէր  
 Յօդանալ սիրով յԱստուած կենդանի :

## ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Ի լրծոյն եգիպտական

Արար նա զՏարբս մեր ազատ .

Հաց նոցին ընդ անապատ

Զամենահամ ջամբեալ ըզման .

Իսկ մեզ զանձըն պարզեւեաց

Զանձն եւ զօրէնըս սրբութեան .

Այսբանեաց շնորհաց փոխան

Ոչինչ խընդրեալ սիրոյն ի բաց :

## ՊԱՐՆ

Ով աստուածագիծ օրէնք զեղազան

Ո՛հ զի՛ վայելուչ, զի՛արդ ցանկալի

Ուխտիւ հաւատոյ եւ բողոքանուէր

Յօդանալ սիրով յԱստուած կենդանի :

## ԱՅԼ ՈՄՆ

Զի՛ ծառայաբար հարկանիս ի դող

Ով ապաշնորհ յերախտիս .

Յայսբան բարութեանց Աստուածըն տըւող

Զի՛ որդեպէս ոչ հայիս .

Այդպէս դըժուարաւ սիրտ քո գելանի ,

Այդչափ անմէտ ես ի սէր .

Գերեաց է ընութիւն պատուել առ ահի

Լէր դու որդի հայրասէր .

Պարզեաց նորին դու ի յոյս եւեթ

Զիրկ ի սիրոյն կաս յաւետ :

## ՊԱՐՆ

Ով աստուածագիծ օրէնք զեղազան ,

Ո՛վ արդարութիւն , ո՛վ խորք բարութեան ,

Ո՛հ զի՛ վայելուչ եւ զի՛ ցանկալի

Ուխտիւ հաւատոյ եւ բողոքանուէր

Յօդանալ սիրով յԱստուած կենդանի \* :

\* Եանօթ իսկ է ընթերցողաց զեղեցիկ թարգմանութիւն Պարերգութեանցս այսոցիկ՝ որպէս և մարդարէական բանից Յովնդայեայ յ Գ Հանդիսին , արարեալ 'ի Գերսպ . Եղուարդայ Հիրմիւզեան : Այլ զի ազատաբար արարեալ է թարգմանութիւնն այն , ճշգրտելով իմ զայն բառ բնագրին՝ ընկալեալ է աստ :



# Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Կ Ր Ո Ր Գ



## Տ Ե Ս Ի Լ Ա

ՅՈՎՍԱԲԷԹ, ՍԱԼՈՄԷ, ՊԱՐՆ

ՅՈՎՍԱԲԷԹ

Բաւ է, գըստերք իմ, կացցեն օրհնեղութիւնք ձեր եւ նըւագք-  
ժամ է մեզ արդ դու ձայնակից հասարակաց աղօթից .

Այս է մեր ժամ, երթիցուք օն, տօնախըմբել զօրըս մեծ,  
Եւ ըստ կարգի մերոյ լինել տեսան Աստուծոյ յանդիման :

## Տ Ե Ս Ի Լ Բ

ՅՈՎՍԱԲԷԹ, ԶԱՔԱՐԻԱ, ՍԱԼՈՄԷ, ՊԱՐՆ

ՅՈՎՍԱԲԷԹ

Զի է քեզ, Զաքարիա որդեակ, առ ի՞նչ դարձ քո այսրէն .

Յ՛ր ըչտապես այգալէս հատեալ գոյն երեսացդ եւ շընչասպառ :

ԶԱՔԱՐԻԱ

Տիկին մայր :

ՅՈՎՍԱԲԷԹ

Զի՞նչ երբ եցեն :

ԶԱՔԱՐԻԱ

Տաճարըս սուրբ պըղծեցա :

ՅՈՎՍԱԲԷԹ

Ո՞րպէս :

ԶԱՔԱՐԻԱ

Եւ սեղանն տէրունեան կայ ամայի :

ՅՈՎՍԱՐԻԹ

Ըզդողանի հարկանիմ, ասա մեկին, յայտնեա մօր քում:

ԶԱՔԱՐԻԱ

Մինչ քահանայն մեծ՝ հայրն իմ՝ անդ ըստ պաշտամանն օրինի  
 Ընծայեալ տեառն Աստուծոյ՝ կերակրողին մարդկան աղզի,  
 Յերախայրեաց հընձոց ըզհացն առաջաւոր ի սեղան,  
 Եւ հաշտարար զոհից ընդերք յարխնոտ ձեռքն ծըխէին,  
 Առնթեր իւր ի սպասու կալով մանուկն Ելիակիմ,  
 Ըզպըճղնաւոր կտաւին արկեալ զիւրեւ ընդ իս ի միասին,  
 Եւ մինչդեռ այն ինչ քահանայք ի յարենէ անտի զոհից  
 Ըզսեղանով եւ զամենայն ժողովըրդեամբն սըրսկէին,  
 Շըռինդ իմնն խառնածայն հարաւ, եւ աչք յանկարծ եւ միտք  
 Ահաբեկեալ ժողովըրդեան անդ ի շըռինդըն կոյս դարձան,  
 Կին ոմն յայնժամ... ոհ, եւ շիցէ՞ ոճիր ըզնա անուանել,  
 Կին ոմն ահա... Գոթողիա, նա ինքն այս՝ Գոթողիա...

ՅՈՎՍԱՐԻԹ

Ո՛վ երկինք:

ԶԱՔԱՐԻԱ

Ի գաւիթ անդր արանց եւեթ մատչելի  
 Դէմ եղեալ գոռոզն այն կին գայ մըտանէ բարձր ի գլուխ.  
 Եւ անդրագոյն եւս ի խորանն սըրբութեանց աստուածանուէր՝  
 Պահեալ ի մուրս Ղեւտացոց՝ թեւակոխէր մըտաննէ,  
 Ժողովուրդըն զարհուրեալ յայս կոյս եւ յայն խուճապէին.  
 Իսկ հայրն իմ, ոհ, հրացայտ աչօք ծանրացասումն սըրտմըտեալ՝  
 Քան ըզՄովսէս առ Փարաօնն եւս առաւել ահարկու՝  
 » Ի բաց, ասէ, եւ դու գըշտոյդ, ի բաց յահեղ ի վայրէս,  
 » Ուստ արտաքսեն ըզբեզ բնութիւն քոյին եւ մարտ անընդդէմ:  
 » Ի նախաստէ՛լ գաս զԱստուծոյ կենդանւոյ զմեծ վայելչութիւնն:  
 Անդ գըշտոյն խոժոռ ի նա ակնարկեալ այն ինչ յանդըզներ  
 Բանալ ըզբերան իւր եւ անշուշտ ի հայհոյել,  
 Հրեշտակ արդեօք երկնառաք թէ մերկացեալ ըզքօզ ի բաց  
 Սուսեր փայլակնաձեւ եցոյց նըմա՝ ոչ գիտեմ,  
 Բայց ի քիմնս կըցեցաւ ըզգու նորա առժամայն,  
 Եւ ի գոռոզ խիզախմանէն նըկուս եղեալ խոնարհեցաւ.  
 Աւք նորա շըրտուցեալ ոչ եւլս շուրջ իշխէր հայել,  
 Մանաւանդ յԵլիակիմ թըւէին աչք իւր պըշտուցեալ:

ՅՈՎՍԱԲԷԹ

Եւ որպէս, երեւեցան նրմա աբեմն Ելիակիմ :

ԶԱՔԱՐԻԱ

Երկրբեան իսկ ի դըշտոյն անագորոյն ակընկառոյցք՝  
կայաք ըզնոյն զահի հարեալ. բայց քահանայք պատեալ ըզմեօք  
Հանին իսկոյն ըզմեզ ի բաց. որ ինչ յետոյ լեալ ոչ զիտեմ.  
Փութացեալ եկի առ քեզ պատմել զաղմուկըն դառնաղէտ :

ՅՈՎՍԱԲԷԹ

Եղուկ, անշուշտ գայ նա զմանուկն յախըտակեալ առ ի մէնջ.  
Ի խընդիր նորին մոլեալ գայ ի խորան սյսր հասանէ.  
Թեբեւս սյժմիկ իսկ այն որ գինք մեզ արտասուաց լեալ այնքա-  
Յիշեա, Տէր, ըզլիաւ ի թ, տես ըզտագնասպ սըրտի իմոյ: [նեաց,

ՍԱԼՈՄԷ

Ընդէր իցէ քեզ արտասուել :

ԶԱՔԱՐԻԱ

Ելիակիմ կայ ի վտանգի :

ՍԱԼՈՄԷ

Եւ իբր յուզել իսկ կարիցէ նա ըզզայրոյթ դըշտոյին :

ԶԱՔԱՐԻԱ

Եւ որ երկիւղ իցէ յանհայր եւ յանտէրունչ մանկանէն :

ՅՈՎՍԱԲԷԹ

Բարէ նա ինքն ահա դըշտոյն. մի աստ տեսցէ նա ըզմեզ :

ՏԵՍԻԼ Գ

ԳՈԹՈՂԻԱ, ԱԳԱՐ, ԱԲԵՆՆԵՐ, ԹԻԿՆԱՊԱՀՔ

ԱԳԱՐ

Դըշտոյ տիկին, առ ինչ իցէ քեզ ըզզայրօքքս գեգերել.  
Աստ ամենայն ինչ ի զայրոյթ են քեզ եւ զսիրտ քո հարկանեն.  
Թող ըզտաճարս ի քահանայս որ աստանօր կան ի սպասու,  
Երթ յաղմըկէ աստի ի բաց, խոյս յարբունիս քոյն տուր,  
Վըրգովելոյ սըրտիդ շնորհել խաղաղութիւն անդանօր:

ԳՈԹՈՂԻԱ

## ԳՈԹՈՂԻՍ

Ոչ կարեմ, ոչ տեսանես դու զտկարութիւն իմ եւ զտազնապ-  
 Երթ առաքեա զոր առ Մաթան զի փութասցի դալ այսր առ իս .  
 Ո՞տայր զտանեւ ինձ նովաւ ըզցանկալին խաղաղութիւն  
 Որում եմս ի խընդիր եւ խուսափէ նա միշտ յինէն : ( Նարէ )

## ՏԵՍԻԼ Դ

## ԳՈԹՈՂԻՍ, ԱՒԵՆՆԵՐ, ԹԻԿՆԱՊԱՀՔ

## ԱՒԵՆՆԵՐ

Ներեա զըլխոյ, թէ իշխեմ Յովիդայեայ կալ ջատագով .  
 Ընդ այնքան նորա նախանձն ոչ ինչ է պարտ քեզ զարմանալ .  
 Աստուծոյ որոյ մեքս եմք, այդ անյեղ լի են օրէնք .  
 Ըզտաճարին եւ զսեղանոյ իւրոյ ինքնին արեալ ըզձեւ ,  
 Որդւոց Ահարոնի ըզսըբութիւնս իւր ետ ի պահ ,  
 Եւ զեւտացւոց եցոյց ըզկայս իւրաքանչիւր եւ զըսպաս .  
 Արզելեալ եւ զաւակի նոցա մի սպաս հարկանել դից .  
 Այլ աղէ, թազաւորաց մերոց դու մայր եւ տիկին ,  
 Այքքան օտա՞ր որ ի միջի մերում զտանիս եւ որպէս հիւր  
 Անտեղեակ մերոց կարգաց, եւ պա՞րտ իցէ ինձ այժմիկ . . .  
 Բայց աւասիկ դայ քոյդ Մաթան, թողից ըզձեզ միայնակ :

## ԳՈԹՈՂԻՍ

Մի Աւեններ, կաց եւ դու աստ . քեզ իսկ կարօտ եմ աստանօր .  
 Օն անդր ի բաց թողցուք զյանդուզն ժպրհութիւն Յովիդայ-  
 Եւ ըզխուժան սնտոի ձերոց նանրահաւատ խըտրանաց [ եսյ ,  
 Որ այլազգեաց ամենեցուն փակեն ըզմուտքս տաճարիդ .  
 Այլ ինչ մեծ եւ կարեւոր յուզեալ ըզսիրտ իմ աղմբիկէ .  
 Գիտեմ զի Աւեններ ի սղայ տիոց զինուորեալ ,  
 Մեծախոհ է եւ արդար տալ զԱստուծոյն իւր Աստուծոյ ,  
 Եւ արքայից իւրոց համայն հատուցանել որ ինչ պարտին .  
 Կաց սպա :



# ՏԵՍԻԼ Ե

ԳՈԹՈՂԻԱ, ՄԱԹԱՆ, ԱԲԵՆՆԵՐ, ԹԻԿՆԱՊԱՀՔ

## ՄԱԹԱՆ

Այս քո տեղի իցէ դբշտոյ վեհափառ,  
 Աստ ի խռան թըշնամեաց ոյր ուրուք ելեալ ես ի խընդիբ.  
 Ո՛ր աղմուկ խռովէ ըզքեզ, ո՛ր արհաւիրք տազնապէն.  
 Զխա՛րդ իցէ քեզ ի շխեղի մօտեւ յանսուրբ յայտ ի տաճար.  
 Շիջա՛ւ ուրեմն ի քեզ նախկի ատելութեանըդ քո բորբոք :

## ԳՈԹՈՂԻԱ

Լուարուք ինձ երկոքեան եւ ունկըն՝ դէք բանից իմոց :  
 Չեն ինձ կամք նորոգել այժմ՝ ըզյիշատակ զանցելոց ,  
 Էւ ոչ զարեանցըն զոր հեղի տալ ձեզ այժմիկ ըզհամար .  
 Զոր ինչ եւ արարի՛ պարտ ինձ վարկայ զայն , Աբեններ ,  
 Էւ դատաւոր ինձ ըզուամիկն յանդըգնախօս ոչ կամիմ .  
 Որպէս եւ զինչ ըստ ժպրհուութեան իւրում՝ եհան դա համբաւ ,  
 Սակայն երկինք արդարութեան իմոյ եկաց ջատագով ,  
 Մեծափառ յաջողութեամբ զարքայութիւնս ամբացուցեալ  
 Ծովէ ի ծով արար զանուն Գոթողիայ պաշտելի .  
 Ինեւ վայելէ Սաղիմ՝ ի խոր խաղաղութեան .  
 Յորդանան ոչ եւս տեսցէ զարարացին թափառոտ  
 Էւ ոչ ըզխրոխտ փրղըշտացոյն զանդու՛ հինից ասպատակ ,  
 Աւեր զափամբք իւրովք ածեալ իբր առ ձերովք թագաւորօք . .  
 Ատրին զիս թագուհի եւ իբր ըզքոյր իւր մեծարէ ,  
 Էւ Յէու , գոռոզն Յէու զարմիս նենգող դաւաճան ,  
 Որ մինչեւ յիս էր հանդերձեալ ըզխուժադուժ ձեռն արկանել ,  
 Պաշարեալ շուրջանակի ի մեծագօր արդ ի դրացոյ ,  
 Զոր մարթանօք յարուցի ընդդէմ՝ վայրագ յելուզակին ,  
 Ահաբեկ ի խորս ահա կայ սասանեալ Սամարիոյ  
 Թողեալ ի վայրս յայտոսիկ միահեծան զիս տիրուհի :  
 Յարգասիս իմաստութեան իմոյ անխռով վայելէի ,  
 Այլ տազնապ ինձ անըմբեր հասեալ յաւուրց ինչ հետէ ,  
 Ըզաւտրաատեալն ի բաղդէն իմմէ զվայելլս վրդովէ :  
 Երազ տեսի , եւ ընաւ իսկ պարտ էր ինձ անտալ երազոյ ,  
 Երազ՝ որ ի վարանըս տազնապէ զիս ոգեսպառ .  
 Մերժեմ՝ ամեն ուրեք զայն , ամեն ուրեք ըզհետ իմ գայ :  
 Յարհաւիրս խոր զիշերոյ տեսի ըզմայր իմ Յեզարէլ



Դէմ յանդիման՝ որպէս յաւուր մահուն իւրոյ շքեղազարդ .  
 Չէր աղետից նորա նըկուն , ինչ ըզխրոխտումն իւր արարեալ .  
 Գեռեւս ի փայլ մուրացածոյ ցուայր ըստ իւրըն սովորոյ թ  
 Նըկարէն ի ծարիր եւ ի սընգոյր զեղերեսեալ  
 Բարեբեւ նորք զամաց զանջընջելի կարկամութիւն .  
 > Սոսկացիր , ասէ առ իս , Յեզարեւայ դուտոր արժանի .  
 > Խորայելի անգութն Աստուած եւ զքեւ կանգնէ յաղթանակ ,  
 > Դուտոր իմ , եղո՛ւկ , դու անփախուստ անկար ի ձեռքս նորա :  
 Եւ ահագին բանիցն ըզհետ՝ ըստուերն առ իս խոնարհեալ  
 կսյր առ մահճօքս , եւ իմ ըզձեռս առ նա ձրկեալ առ ի փարեւ  
 Ոչ ինչ այլ , բայց կոյտ իմն անդ զըտի սոսկման ինձ արարող .  
 կոյտ սակերտուոյ խառն ընդ շաղիղ տըղմութաթաւ ,  
 Յօշ յօշ անդամոց արիւնաթոր եւ քրտամենելի  
 Ի ճարակ լափիւզող շանց որ յիրերաց կորզէին զայն :

ԱՅՆՆՆԵՐ

Ո՛Վ Տէր :

Ինձ յայնքմ տաղնապի եկըն եկաց զառաջեալ .  
 Մանուկ առոյգ ի տին՝ արկեալ զիւրեւ պայծառ պըճոնաւոր ,  
 Չոր օրինակ եբրայեցւոցդ ըզգե՛նուն միշտ քահանայք .  
 Ի տես նորին արծարծեցաւ . յիս զօրութիւն իմ՝ նըւաղեալ ,  
 Եւ այն ինչ միտք իմ՝ յիս դարձան ի մահառիժ ամբողմանէն  
 Եւ զմայլէի ընդ քաղցրութիւն նորա , ընդ վէհ դէման եւ հա  
 Յանկարծակի էջ յիս հարուած մարդախոշոշ սուտերի , [մեսս  
 Չոր նենգաւորն նըստոյց ցերախակալ անգր ի կողս իմ :  
 Այսքանեաց բաղմազան ցնորից խառնուրդս այս անճոռնի  
 Իցէ թէ դիպուածոյ ինչ թըւեացին ձեզ արգասիք :  
 Ես ինքնին ամծթահար առ ժամանակ մի ընդ երկիւղս ,  
 Ի գօլըշեաց տըխրութեան կարծէի զայն յիս ներդործեալ .  
 Այլ յիշատակ նորին ազգոյ տըպաւորեալ ի միտս իմ ,  
 Երկիցս ի քուն դարձաւ անդրէն անդոհականն ինձ երազ ,  
 Երկիցս անդրէն աչք իմ՝ արխուր տեսին ըզոյն նըկարապիր  
 Մանկան ի կերպ ըզմահացուն զայն կըշուելոյ յիս ըզհարուած  
 Մինչեւ խոնջ եւ պարտասեալ ի կրից անդուլ արհաւրաց ,  
 Այն ինչ գնայի առ Բահաղ մայլթեւ կենաց պատըսպարան  
 Եւ առ ոտըս բաղնեաց նորա հանգիստ հետազօտեւ ,  
 ( Ո՛վ զհարդ բըռնակալէ երկիւղ ի սիրտ մահկանացուի ) ,  
 Այսր ի տաճար Հրէից վարեալ դամ՝ ի ներքին ազկեցմանէ ,  
 ՉԱստուծոյ նոցա զգայրոյթ սըրտմըտութեան ցածուցանել ,  
 Աձեալ ըզմըտաւ յողոք ըղնա աձեւ նուիրօք ,

Եւ որպիսի ինչ որ Աստուածն այն իցէ՝ Հաշտ առնել ընդ իս .  
 ( Երկրացեալք Բազաղու , տրկարութեան իմում ներեա ) :  
 Ի մուտս իմ անգր՝ ամբոխն ի բաց խուսափեաց , զոչք դադարեցին .  
 Եւ քահանայն մեծ մոլեղին յիս յարձակեալ մինչ բարբառէր ,  
 Դէպք յեղակարծ , սոսկումն ահեղ , տեսի զմանուկն որ ըսպառ-  
 Յար եւ նրման որպէս տեսեալ էր իմ ի քուն անդոհական . [ նայր  
 Տեսի՝ եւ ահա նոյն երեսք եւ նոյն պատմութեան ,  
 Եղն ճեմ՝ ոտին , նոյն աչք եւ նոյն Համայն նորին կերպարանք .  
 Եղն ինքն էր նա առ ընթեր քահանային մեծի կացեալ .  
 Այլ վաղ ընդ վոյթ յափըշտակեալ՝ եղև յաչացս իմ անհետ :  
 Այս աւասիկ տաղնապ սրբոսի տայ դեզերել ինձ աստանօր  
 Աս ի լըսել զայսմանէ եւ ըզկարծիս ձեր երկոցունց .  
 Զինչ արդ թըրի քեզ գուշակել Մաթան , տեսիլս այս նորահրաշ :

ՄԱԹԱՆ

Զարագուշակ թըրի տեսիլդ Հանգոյն ի քուն եւ յարթմընի :

ԳՈԹՈՂԻՍ

Իսկ քո տեսեալ է Աբեհներ , զանիծապարտք մանուկ ,  
 Ո՞ է եւ յո՞ր արեհէ եւ յո՞ր տոհմէ սերեալ ծընունդ :

ԱԲԵՆՆԵՐ

Մանկունք երկու անգ ի սպասու առ սեղանովն կային .  
 Յովիդայեայ է մին որդի եւ Յովաբէթ մայր նորա .  
 Անձանօթ երկրորդն է ինձ :

ՄԱԹԱՆ

Զինչ պէտք իցեն ընդ բանս ածել ,  
 Կըշխոյ տիկին , Հարկ յերկոցունց իսկ է քեզ զանձն ապահովել .  
 Ինձ քանիօն է մեծարոյ Յովիդայէ յայտ է ձեզ այն .  
 Ոչ ի վրէժ նորա ընդ իս թըշնամանացըն բարբառիմ ,  
 Արդարութիւն եւեթ ուղղեալ է խորհրդոցս եւ իշխեցող .  
 Սակայն նորին իսկ Հարազատ որդին թէ էր իւր զաւածան ,  
 Թողոյր անօրինին վայրիկ մի շունչ ի ռընգունս :

ԱԲԵՆՆԵՐ

Բայց զո՞ր եղև ըն գիտիցէ գործել մանուկ անտիական :

ՄԱԹԱՆ

Սուսեր ի ձեռին Երկինք ըզնա ցուցանեն մեզ ,  
 Երկինք արդար եւ իմաստուն չառնեն ինչ զուր տարապարտուց ,  
 Զինչ այլ խընդրես ինչ աւելի :

## ԱՅԵՆՆԵՐ

ԱՄԼ ի հաւատ երազոյ

Կամիցի՞ք դուք շաղախել ձեռն ի յարիւն մանկան տղայոյ ,  
 Ո՞յր անձանօթ է ձեզ եւ հայր , եւ ոչ զիտէք ո՛ր իցէ դա :

## ՄԱԹԱՆ

Կասկածելի է դա՛ շատ է . չին պէտք այլոյ ինչ քըննութեան .  
 Թէ հոյակապ ի նախնեաց առնու ծագումըն զարմ նորա ,  
 Ազգատուճ մին պայծառութիւն ճեպէ ըզնա վաղ ի կորուստ .  
 Իսկ թէ բաղդին ուամիկ ըզնա եւ աննըշան վիճակեալ ,  
 Մեծ ինչ իցէ թէ վայրապար արիւն անարգ հեղուցու .  
 Իցեն իսկ պարտ թագաւորաց յամըր գործել զարդարութիւն  
 Ո՞յց բազում այն է զի երագ պատուհասիւ փրկելին կեանք :  
 Մի տարապարտ յաւելուցումք նոցա տաղտուկ յոգնաթախիծ .  
 Ի՞ որ նոցա կեղակարծ , ոչ եւս իցէ անպարտական :

## ԱՅԵՆՆԵՐ

Բարէ , Մաթան քուրմ աստուածոց բարբառ իցի՞ զայդոսիկ .  
 Իմ ի գոռ մարտից սընեալ եւ ի նախճիրս արհաւրաց  
 Վրէժխընդիր պաշտօնեայ թագաւորաց ահեղ ցամամն ,  
 Պատըսպարան աստանօր կամ եղկելւոյն եւ բարեխօս ,  
 Իսկ դու ում պարտ էր հայրագութ բերել գորով եւ աղիս ,  
 Դու որ յաւուրըս ցամամն խաղաղութեան դոս պաշտօնեայ ,  
 Ընդ քօղով կեղծ նախանձու պատրուակեալ զոխութիւն ,  
 Յամք համարիս ըզհեղումն արեան պասքոյդ քո ի յագուրդ :  
 Հրաման ետուր , դըշխոյ տիկին , խօսել առ քեզ անպատրուակ  
 Արդ զի՞նչ իցեն պատճառք ծանուէք մեծի քոյոյ երկիրդիդ .  
 Անուրջք եւ տղայ ապիկար , զոր թերեւս աչք քո կանխակալ  
 ԱՄԼ ընդ այլոյ կարծեն ըզնոյն որ ի յանուրջս անդ երեւեալ :

## ԳՈԹՈՂԻԱ

Հաւանեալ եմ , Աբեններ , իցեմ թերեւըս խարեալ ,  
 Թերեւըս միտք իմ յանրընց անտի սնտուեաց էին գրաւեալ :  
 Քաջ է տեսցուք ապա զմանուկըն զայն աստէն միւսանգամ ,  
 Անվրդով զըննել ըզտիպ կերպարանացն ի մօտոյ .  
 Աճցին ապա օն ինձ այսրէն երկաքանչիւր զառաջեալ :

## ԱՅԵՆՆԵՐ

Խիթամ . . . .



## ԳՈԹՈՂԻԱ

Ընդէ՛ր, մի՛թէ հաճել ընդամուս իմ ո՛չ կամիցին .

Եւ զի՛նչ այն պատճառք իցեն տըմարդի այդըմ՝ հետուութեան .  
կասկած չարաչար յաւելցէ այդ մըտաց իմոց :

Հրաման է իմ, Յովիդայէ կամ Յովսաբէթ ածցեն ըզտղայս :

Յորժամ կամք իցեն գիտեմ իշխանաբար տալ հրաման :

Քահանայք ձեր Աւեններ, (կամիմ եւ զայս քեզ յաւելուլ),

Երթեալ եւ շնորհքս կալցին ըզգըթութեանց Գովթողիայ .

Գիտեմ ցորվայր գոցա ժըպիրհ յանդըգնութիւն ապարթանեալ

Ղուտայ ընդէմ՝ գնացից իմոց, ընդդէմ՝ թագիս արքունական .

Սակայն դեռեւքս շընչեն, դեռ կանգուն կայ տաճար գոցա .

Այլ աւասիկ քաղցրութիւն իմ հուպ ընդ հուպ ըսպառեսցի .

Գիտացէ Յովիդայէ զվայրագ նախանձ իւր սանձել,

Եւ մի թըշնամանօք դարձեալ զցատումն իմ յուզեսցէ .

Երթ . . .

## ՏԵՍԻՒԼ 2

## ԳՈԹՈՂԻԱ, ՄԱԹԱՆ

## ՄԱԹԱՆ

Այտուհետեւ կարեմ խօսել համարձակ ,

կարեմ զիրաց ճըշմարտութիւն յայտ յանդիման մերկանալ .

Հըրէչ դեռատուն ի տաճարի աստ տածի .

Մի սպասեր, դըշտոյ տիկին, սեաւ ամպրոտացըն պայթելոյ .

Աւեններ կանխեաց քան զելս արիւղն առ մեծ քահանայն .

Ոչ ինչ զանխուլ է ի քէն առ ընիկ արքայս իւր սէր նորա .

Ո՞ գիտէ զի հնարեցի Յովիդայէ յաթոռ նոցին

Փոխանակել ըզմանուկն ըսպառնացեալ քեզ ի յերկնից ,

Թէպէտ եւ իւր իցէ նա , թէպէտ այլոյ ուրուք որդի :

## ԳՈԹՈՂԻԱ

Այո , այժմիկ բանաս դու զաչս իմ եւ այժմիկ ազդումն երկնից  
ինձ լուսանայ . հասլա՛ զերծցուք ի վարանաց աստի մերոց .

Դքժուարաւ մանուկ տըղայ ծածկել ըզմիտըս իւր կարէ ,

Եւ յաճախ մեծաց դադտնեաց բան մի եւեթ է մատընտու :

Թող, սիրեցեալդ իմ Մաթան , զիս ընդ մանկանն ի հարցափորձ ,

Եւ դու երթ առ տիրացիսն իմ ազդ առնել լըռելեսայն ,

Զի զէն առեալ կազմ՝ եւ ստորատ կացցեն իմու՛մ հրամանի :

### ՏԵՍԻԼ Է

ՅՈՎԱՍՍ, ՅՈՎՍՄԱՐԷԷԹ, ԳՈԹՈՂԻԱ, ԶԱՔԱՐԻԱ

ՅՈՎՍՄԱՐԷԷԹ

Անմահին դուք պաշտօնեայք հըսկեացեն աչք ձեր անդադար  
Սիրելեացս այսոցիկ եւ պատուական մանկանցս ի խնամ:

ԱՐԵՆՆԵՐ

Իշխանուհիդ լեր աներկմիտ, էրաշխաւոր ես կամ դոցա:

ԳՈԹՈՂԻԱ

Բարէ քանիցս հայիմ ի նա, որչափ ի նա ակնարկեմ. . . .  
Այո նոյն ինքն է, արհաւիրք դեռ զսակերօքս ահա գան:  
Յովիդայեայ հարսնն, քո՞ իցէ մանուկդ այդ որդի. (Երանելիւմ  
ՎՅՈՒՄ):

ՅՈՎՍՄԱՐԷԷԹ

Իբըշոյ դա՞:

ԳՈԹՈՂԻԱ

Դա ինքն այո:

ՅՈՎՍՄԱՐԷԷԹ

Ոչ տիկին, շեմ՞ դորա ես մայր.  
Ահա որդի իմ: (Երանելիւմ ՎՅՈՒՄ):

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ քո, մանուկ դու ո՞վ է հայր ասա:

ՅՈՎՍՄԱՐԷԷԹ

Աստուած է ցարդ:

ԳՈԹՈՂԻԱ — ՅՈՒՄԷԷԹ

Զե՞րդու փոխան նորա փութաս պատասխանել  
Թող ինքնին խօսեցի դա:

ՅՈՎՍՄԱՐԷԷԹ

Սակայն ի տղայ մանկանէդ  
Զո՞ր հաւաստիս յուսայցես հետագօտել ճըշմարտութեան:

ԳՈԹՈՂԻՍ,

Չեւ եււս անմեղն այն եւ անկեղծ հասակ զիտէ զճշմարտութիւն  
խորամանկեւլ. թող որ ինչ անկն է իւր՝ ինքնին խօսեսցի :

ՅՈՎԱԲԷԹ

Դիր զիմաստութիւն քո ի բերան դորա , Տէր :

ԳՈԹՈՂԻՍ,

Մանուկ դու զի՞նչ անուն է քո :

ՅՈՎԱՍ

Ելիակիմ՝ անուն է իմ :

ԳՈԹՈՂԻՍ,

Իսկ հօրդ անուն :

ՅՈՎԱՍ

Ասն ի ծնէ զիս որբ մնացեալ եւ անտէրունչ  
Անկեալ ի գիրկս Աստուծոյ եւ ոչ ըզճնողս իմ՝ ծանուցեալ :

ԳՈԹՈՂԻՍ,

Չիցն քո ճնողք :

ՅՈՎԱՍ

Լըքին թողին ճընողք իմ՝ զիս :

ԳՈԹՈՂԻՍ,

Ե՛րբ կամ որպէս :

ՅՈՎԱՍ

Ի խանձարոց :

ԳՈԹՈՂԻՍ,

Գոնեայ չիցէ՞ ծանօթ գաւառ քո հայրենի :

ՅՈՎԱՍ

Տաճարս այս իմ են հայրենիք , այլ ինձ գաւառ ոչ զիտեմ :

ԳՈԹՈՂԻՍ,

Եւ ուրանօր աւանդեն տըւեալ բաղդին ըզքեզ ի գիւտ :

## ՅՈՎԱՍ

Ի մարդախանձ գայլաց վրհմակ պատրաստելոց ի կլանել զիս :

## ԳՈԹՈՂԻԱ

Ո՞ր տաճարս այսր ած ըզբեզ :

## ՅՈՎԱՍ

Կին որ բընաւ անծանօթ ,  
Որոյ ծածկեալ զանձն եւ զանուն , ոչ եւս ապա տեսաւ ուրբ :

## ԳՈԹՈՂԻԱ

Եւ ո՞յր ուրուք խնամարկեալ ըսկըզնաբոյս քո հասակիդ :

## ՅՈՎԱՍ

Մի՛թէ թողո՞ւ երբէք զորդիս իւր անխընամ Տէր ի կարիս .  
Ես եւ ձաղուց իսկ թըռչնոց շնորհէ ճարակ օր ըստ օրէ .  
Եւ պարզեւք նորա բաշխին ընդ տիեզերս առհասարակ .  
Առ նա կարդամ հանապազօր եւ հայրագութ ինքըն խնամով  
Կերակրէ զիս ի նըւիրաց անտի իւրոյ սեղանոյն :

## ԳՈԹՈՂԻԱ

Ջրնչ նորազբանչ յիս ներգործեալ տազնապէ զիս ի վարանս .  
Գեղ մանկութեան նորա եւ շնորհք երեսաց , քաղցըր բարբառ .  
Տակաւ ըզսիրտ իմ գողանան , ատելութեանս յաջորդէ . . .  
Իցէ թէ զըթու թեան տեղի տացէ Գոթողիս :

## ԱՐԵՆՆԵՐ

Գըշխոյ տիկին , ահա ոսոխ քոյին այնքան քեզ խիթալի .  
Խաբեպատիր երազոյդ ահա ցընորք քեզ ակներեւ .  
Մի արդեօք ըսպանայեացըն քեզ հարուած մահացու .  
Իցէ գորովդ այդ որ ըզսիրտ քոյին յուզեալ տազնապէ :

ԳՈԹՈՂԻԱ առ Յովա և Յովաբէթ :

Յով երթայք :

## ՅՈՎԱՍԱՅԻԹ

Շատ իսկ յայտնի եղև քեզ ցարդ մանկանքս բաղդ  
Մի գուցէ կալ սորա աստ տաղտուկ թուեսցի քեզ Գըշխոյիդ :

## ԳՈԹՈՂԻԱ

Ոչ այդպէս , դարձչէք այսրեն : Ջրնչ գօրծ է քո աստ զօրն ի բուն :



ՅՈՎԱՍ

Պաշտել զԱստուած եւ օրինաց նորա լինել խելամուտ,  
Աշակերտիլ աստուածայնոց ըն մատենից դպարութեան,  
Զորս ըսկըսեալ է իմ այժմէն ձեռամբ իմով գաղափարել:

ԳՈԹՈՂԻԱ

Զինչ քեզ օրէնքդ ուսուցանեն:

ՅՈՎԱՍ

Սիրել զԱստուած զի պարտք են,  
Զի է պաշտպան նա ինքն որոց երկիր շածաց, եւ վրէժխնդիր  
Ի հայհոյաց անուան իւրոյ սըբբոյ՝ կանուխ կամ անպան.  
Զի սպանողին տայ պատուհաս, եւ գոռողին է գըլխահար:

ԳՈԹՈՂԻԱ

Խելամուտ եմ, բայց զինչ ապակիդ այդ խըռնելոյ գործ իցէ աստ:

ՅՈՎԱՍ

Օրհնարանել գովել զԱստուած:

ԳՈԹՈՂԻԱ

Կամբ ուրեմն զի մարդիկ  
Աղօթից հանապազ եւ իւր ինքեան պարապեսցին:

ՅՈՎԱՍՔԻԹ

Այլն ամենայն գործ անսուրբ աստի ի բաց է արտաքսել:

ԳՈԹՈՂԻԱ

Զինչ ըզբօսանք իցեն քո աստ:

ՅՈՎԱՍ

Կալ մերթ ի սպաս սեղանոյն,  
Եւ մեծի քահանային պաշտել ի նուէր խունկ եւ աղ.  
Մերթ ըզմայլել ի լուր երգոց ին անբաւ մեծութեան,  
Եւ ի տեսիլ մեծահանգէս կարգաց նորին պաշտամանց:

ԳՈԹՈՂԻԱ

Եղուկ դու, եւ չիցեն քո քաղցրագոյն ինչ ըզբօսանք.  
Մորմնքիմ ընդ այդպիսի ողորմ՝ վեճակ քո պէս մանկան.  
Ե՛կ յարբունիս իմ՝ դու առ իս, տեսցես ըզխառս իմ անդանօր:

ՅՈՎԱՍ

Ե՛ն . եւ մոռացայց ըզբարերարն իմ զԱստուած :

ԳՈԹՈՂԻՍ

Ոչ, ոչ ըստիպեմք եզ մոռանալ զԱստուած քոյին :

ՅՈՎԱՍ

Այլ չաղօթես դու առ նա :

ԳՈԹՈՂԻՍ

Այլ կարիցես դու աղօթել :

ՅՈՎԱՍ

Սակայն տեսից զի դու այլում առնես աղօթս աստուծոյ :

ԳՈԹՈՂԻՍ

Ի՛մ աստուած զոր եւ պաշտեմ, եւ դու ըզբոյդ պաշտես զիբր,  
Երկաքանչիւր իսկ են հըզօրք :

ՅՈՎԱՍ

Այլ իմ Աստուած ճըշմարիտ,  
Յորմէ միայն է երկընչել . իսկ քոյդ չէ ինչ, դըշխոյ տիկին :

ԳՈԹՈՂԻՍ

Այլ բարութիւնք զեղցին ըզբեւ եթէ առ իս եկեսցես :

ՅՈՎԱՍ

Այլ բարութիւնք ամբարըշտաց հանգոյն ուղիսից հասեալ գնաց-  
[ցեն :

ԳՈԹՈՂԻՍ

Ո՛յք ամբարիշտքն իցեն . . .

ՅՈՎԱՍԵՒԵԹ

Դըշխոյ, ներեա տիտց մանկութեան :

ԳՈԹՈՂԻՍ

Հաճեալ եմ յոյժ ի տեսանել իբր ըզգոսա հրահանգէք :

Որդեակ Ելիակիմ, յոյժ դու եզեր ինձ սիրելի .

Չես յաննըշտանից դու որ անշուշտ ի մանկանց ,

Եւ որ խօսիմս ընդ քեզ դըշխոյս գիտես զի եմ անժառանգ .

Մերկացիր ըզպատմուճան քո, [Թող զանարգըդ զայդ պաշտօն,  
Եւ արարից մեծութեանց իմոց ըզքեզ Հաղորդակից.

Այսօր իսկ յարգասիւ խոստմանց իմոց վայելեացես,

Քարձակից ինձ ի սեղան իմ եւ Համայն ուրեք բազմեալ.

Եւ կամիմ գրգուել ըզքեզ իբր Հարազատ իմ որդի:

ՅՈՎԱՍ

Իբր որդի քո . . .

ԳՈԹՈՂԻԱ

Այո՛ եւ լուես:

ՅՈՎԱՍ

Եւ զարպիտի [Թողեց Հայր

փոխան . . .

ԳՈԹՈՂԻԱ

Ընդ փր, աղէ ասա:

ՅՈՎԱՍ

Ընդ որպիսում փոխան մօր:

ԳՈԹՈՂԻԱ — ՅՈՂՈՒՔԷՔ

Քաջառու պատանեկիկ, որ յամենայն ի խօսքս իւր

Ըզքո եւ ըզքոյդ Յովիգայեայ բերէ զոգի.

Այդպէս ապա երկաքանչիւր զեղծեալք շնորհիւս ի յանդորբու,

Պարապէք զեղծուցանել ըզպարզամիտ դուք ըզմանկտին,

Ըզզայրոյթ եւ ըզհեռ կանուխ ի սիրտ նոցին տածեալ.

Եւ զանուն Գոթողիայ ատնէք նոցա զարհուրելի:

ՅՈՎԱՍՅԵԹ

Չաշխարհալուր աղետից յորքս դըշխոյդ ինքնին պանծայր,

Իբր մարթէր [Թագուցանել ի նոցանէ ըզհամբաւ:

ԳՈԹՈՂԻԱ

Պանծամ այո՛ յիրաւացի սըրտմըտու [Թեանս ի զայրոյթ,

Որով ըզքէն վրիժու ճնողաց իմոց հանի ի սերբնդոց.

Եւ իբր էր ինձ տեսանել զեղբայր եւ զհայր իմ զիտասպատ.

Իբր ի վերուստ ապարանիցն հոսեալ ըզմայր իմ գահապէժ,

Եւ ի միում աւուր ու [Թսուն արքայորդիս ի միասին

Սրախողխող անկեալ, տեսիլ քըստմընելի, եւ առ իմէ.

ԳՈԹՈՂԻԱ

Առ ի վրէժ որպիսեաց ոչ գիտեմ արեան մարգարէից ,  
 Չորոց շամբուչ մնլեզնու թիւն էր մօրն իմնյ պատուհասեալ .  
 Իսկ ես դուստր օտարախորթ , իսկ ես դըշխոյ անկարեկիր ,  
 Առ իմէ գերի եւ սորուկ վատ եւ սնտոի դըթու թեան ,  
 Չառնէի գոնեայ զդարձուած մոլեզնու թեանքն վայրենւոյ ,  
 Մահ ընդ մահու եւ թըշնամանս հատուցանել թըշնամանաց ,  
 Իւ ըզնոյն փոխարինել կըշիւ . ձերոյ Գաւթի գրոհին ,  
 Չոր ընկալան Աքաբու մնացորդք զարմին հէք եւ թըշուառ :  
 Ո՛ր էր այժմիկ Գոթողիա թէ անձնատուր լեալ վատու թեան ,  
 Ըզմայրենին արիաբար չէր հեղձուցեալ գութ ի սըրտի .  
 Եթէ չէր իւրովի ի ընիկ արեանքն ճապաղիս՝  
 Ի հարուած քաջայանդուզն հանեալ ըզդաւ ձեր ի դերեւ :  
 Այլ Աստուծոյն ձերոյ անհաշտ վրէժ խընդրու թիւն հատ խը-  
 Չերկաքանչիւր տանց ի վերջէ զխընամեկան զօդ սիրոյ . [զեաց  
 Անուն Գաւթի սոսկումն է ինձ եւ պայազառք իւր արբունիք  
 Արեանառուք թէպէտ եւ իմ՝ օտարոտիք են յինէն :

ՅՈՎՍԱՐԷԹ

Իւ ամենայն քեզ յաջողեալ , ս՛հ տեսցէ Տէր եւ դատեսցի :

ԳՈԹՈՂԻԱ

Աստուծոյդ , յոր եւեթ էք դուք յուսացեալ ի վաղուց ,  
 Ո՛ր իցեն նախապատում խոսամանցն առ ձեզ արգասիք .  
 Թող յարուսցէ ձեզ թէ կարէ ըզխոստացեալն իւր ազգաց  
 Ըզպայազատքն Գաւթի զակընկալեալն զսցն ի ձէնջ . . . .  
 Այլ բաւ է արդ , տեսցուք զերեարքս վերըստին , բարեաւ մընա .  
 Հաճ իսկ մեկնիմ , տեսի ըզնա զոր տեսանելն խընդրէի :

ԱԲԵՆՆԵՐ ԽՈՒ ՅՈՎՍԱՐԷԹ

Ընկալ արկին զոր յերաշխի առ ի զաւանդըն պատուական :

ՏԵՍԻԿ Ը

ՅՈՎԿԻՒԱՅԷ, ՅՈՎՍԱՐԷԹ, ՅՈՎԱՍ, ԶԱՔԱՐԻԱ,  
 ԱԲԵՆՆԵՐ, ՍԱԼՈՄԷ, ՊԱՐՆ

ՅՈՎՍԱՐԷԹ ԽՈՒ ՅՈՎԻԴՅԷ

Լըւար տէր զամբարտաւան բարբառ զոռոզ դըշխոյին :

## ՅՈՎԻԴԱՅԷ

Լըսէի, եւ ընդ վիշաբս քոյին սիրտ իմ՝ մտմոքէր :  
 Ղեւտացիքդ եւ ես պատրաստ կայաք աստէն քեզ յօգնութիւն,  
 Ոգի ի բռին արիարար զընալ ընդ քեզ ի կորուստ :

(առ Յովնա՝ ընդ Գրկէլալ) :

Բարձրելոյն հովանասցի աջ ի վերայ քո ով մանկիկ,  
 Որ այդպէս ի հանդէս անուան նորա արիացար :  
 Քեզ շնորհասպարտ եմ Արեւներ, ընդ երախտեացրդ մեծի .  
 Յուշ լիցի քեզ յորում պահու Յովիդայէ քեզ մընայ :  
 Իսկ մէք յաղօթըս մեր դարձցուք զոր ամբարիշտն այն ամբոխեաց  
 Արինահազեղ կին՝ ի տեսիլ անսուրբ եւ զաչըս մեր պըղծեալ :  
 Եւ արիւն քառութեան ի ձեռանն իմմէ հեղեալ,  
 Լուսացէ եւ ըզքարինս եղեալ տոխց նորին կոխան :

## ՏԵՍԻԼ Թ՛

## ՊԱՐՆ

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԽԷ ՕՐԻՈՐԿԱՅ

Ձի՛ չըքնաղ նորոյդ փայլումն է աստեղ,  
 Ձի՛նչ յաւուր միում  
 Եղիցի մանկիկդ արդեօք հրաշագեղ  
 Ի միջի մերում :  
 Որ կանուխ այժմէն ըզսէգ պերճութիւն  
 Կոխէ առաթուր  
 Եւ որ ոչ համբուն  
 Տայ զունկն ի հրապոյր :

ԱՅԼ ՈՄՆ

Մինչ գեռ ի բագին դո՞թողեան կըռոց  
 Ճեպին խուռնընթաց նուիրաբերք խընկոց,  
 Արի պատանեակ բըրդի ի նախանձ  
 Քարոզ միայնոյ Անմահին փառաց .  
 Խօսի աներկիւղ իբր առ Յեզարէլ  
 Հրագէն մարգարէն երբեմըն սաստէր :

ՄԻԻՍ ՈՄՆ

Մարգարէի՞ սըբբոյ իցես դու շառաւեղ  
 Ո՞ղազատոհմ քո պատմեսցէ զաւակ անմեղ :



## ՍՅԼ ՈՄՆ

Միւս Սամուէլ զու պատանեակ սիրասուն  
 Ընդ հովանեաւ սընեալ սըրբոյ սեղանոյն ,  
 Ի սրայելին եղեւ նա յոյս եւ դարիւր ,  
 Մի՛ լեցի մեզ յուսալի քեզ ի նանիր :

## ՄԻԻՍ ՈՄՆ

Երանի մանկանքն բիւր երանի  
 Զոր սիրեաց Տէր, ում արար  
 Ըզձայն իւր վաղ լըսելի .  
 Ում հաճեցաւ Տէր ինքնին  
 Գաստիարակ կալ նրմին :  
 Սընեալ մեկուսի յանտուրբ աշխարհէ  
 Ճոխ երկնառատ պարգեւօք  
 Ի սկզբնարոյս հասակէ ,  
 Անապական է համբուն  
 Յամբարըշտաց ի ժանտ թոյն :

## ՊԱՐՆ

Երանի եւ բիւր նրմին երանի  
 Ոյր ինքն Տէր ուսուցիչ  
 Եւ ինքն է Տէր հովանի :

## ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Այգպէս աճէ գիրգ շուշան  
 Ամրածածուկ ի հովտի  
 Վըճիտ ալեաց առ ափան  
 Անմատոյց ժանտ հիւսիսի :  
 Սընեալ մեկուսի յանտուրբ աշխարհէ .  
 Ճոխ երկնառատ պարգեւօք  
 Ի սկզբնարոյս հասակէ ,  
 Անապական է համբուն  
 Յամբարըշտաց ի ժանտ թոյն :

## ՊԱՐՆ

Երանի քեզ բիւր երանի պատանեակ ,  
 Որում իւրոցն ուսոյց Տէր  
 Գող օրինաց հըպատակ :

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Առաքինութեան դեռ բողբոջ մատաղ  
 Ի՞ր յայսքան վըշտաց նեղի ի զըմբաղ .  
 Առիմէ, ով Տէր, ի խընդիր սիրւոյդ  
 Հանդիպին մարդոյ սյսքան խոչ եւ խութ .  
 Ընդէր ըզնովաւ պատին տարապարտ  
 Թըշնամիք ահեղ տալ ճակատամարտ .  
 Ծածկեցին զերկիր ժողովք ամբարիշտ ,  
 Ուր արդ սուրբք քոյին թագիցեն անվիշտ :

ԱՅԼ ՈՄՆ

Ով տուն Դաւթի, ով ցանկալին իւր քաղաք ,  
 Լեռաքն Սիոն աստուածարեանկ  
 Լեռանց հանուրց դերահընչակ,  
 Զխորդ ցասման երկնից եղեր նըպատակ :  
 Սիոն չըքնաղ եւ ցանկալի  
 Ի՞րբ հանդուրժես հայել զօտարն այն , աւաղ ,  
 Թագաւորաց քոց յարքունի  
 Բազմեալ ի գահ զաստուածամարտն ճիւաղ :

ԴԱՐՁԵԱԼ ԱՌԱՋԻՆ ԶԱՅՆՆ

Սըրբանըւէր երգոց փոխան  
 Ուր մարգարէն աստուածարեալ  
 Յօրհնեցութիւն ի զմայլական  
 Պաշտեր զԱստուած իւր ակեր եւ զհայր ,  
 Ով դու Սիոն քաղաք չըքնաղ  
 Ի՞րբ հանդուրժես լըսել , աւաղ ,  
 Զօտարտաի կռոց օրհնութիւն ,  
 Եւ զոր արքայք քո պաշտեցին  
 Հայհոյեալ անդ ըզսուրբ զանուն :

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Մինչեւ ցերբ , Տէր , մինչեւ ցոր վայր  
 Ժբպրհեցին անպատկառ  
 Թըշնամեաց քոց կաճառ  
 Քեզ Դիմամարտ բերել սպարար :  
 Գան մինչ ի յարկ քո վեհազայր  
 Նախատել ըզքեզ Տէր ,  
 Կոչել զառն ի յեպեր  
 Զերկըրպադուս քո զմեզ յիմար :  
 Մինչեւ ցերբ , Տէր , մինչեւ ցոր վայր

Ժլարհնային անպատկառ  
Թըշնամեաց քոց կաճառ  
Աստուածամարտ բերել պայքար :

## ԱՅՆ ՈՄՆ

Ձեզ ի կենաց պատի դըժնեայ  
Ո՞ր շահք իցեն, ասեն նորա,  
Ի բերկրութեանց առնուլ հրաժեշտ  
Եւ զհաճոյից մերժել ըզհեշտ .  
Եթէ նորօր վարելն էր պեղծ,  
Աստուածըն ձեր զի՞ զձեզ ըստեղծ :

## ՄԻԻՍ ՈՄՆ

Եկայք, ասեն, հըրճուեսցուք,  
Պէսպէս ծաղկանց բոլորիւք  
Ըզգլուխըս մեր պըճնեսցուք .  
Առուրց սահման վաղանցուկ  
Բաղդին ճըշդեաց մեզ հաճոյք,  
Թէ ոչ այժմէն փութացուք,  
Կենացս ընդ հուպ հասցեն շուք .  
Մի՛ յապագայն անըստոյգ  
Անմիտք ի զուր յուսացուք :

## ՊԱՐՆ

Սակայն, ով Տէր, մինչ հաճոյից անցցեն բոպէք  
Եւ ի բարեացըն կողոպուտ  
Ամբարըշտաց մնացեն ժողովք թըշուառ եւ հէք,  
Անտեք փառաց քոց անկապուտ  
Լացցեն նորա եւ սարսեսցեն երկիւղաբեկ .  
Յայնժամ յորդիս քո բերեալ գութ  
Փարատեսցես ի նոցանէ զաշացըն մէզ,  
Եւ ի վայելս անմահ լուսոյգ  
Օրհնեն ըզբեզ ի յարագուարճն այն իցերեկ :

## ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Հաճոյից նոցին վայելք զաղփաղփուն  
Ըստուերաց հանգէտ  
Փախիցեն անհետ  
Եւ զի՞նչ յայնցանէ թողացի նոցուն .  
Ա՞յն զոր ցայգական անուրջք խարերայք  
Թողուն ի ցերեակ  
Պատկեր անեակ

Մինչ ըզհետ քընոյ թըռչին փառքստեայք,  
 Ո՛վ անօրինին արթնու թիւն տըխուր .

Ի խրախուճս անճառ .

Աղքատըն թըշուառ .

Ընդ քեզ զուարճակից մինչ բազմի անդոյր ,  
 Քամե սցեն նորա մինչեւ ի յատակ

Զոր դըժոխըմբեր

Նոցին խառնեցեր

Յաւուր քո ցասման դառնութեան բաժակ :

Պ Ա Մ Ն

Երազ վաղանցիկ ,

Զարթումն ահաւոր

Աշխարհ խաբուսիկ :

# Հ Ա Ն Դ Ի Է Ս Ե Ր Ր Ո Ր Գ



## Տ Ե Ս Ի Լ Ա

ՄԱԹԱՆ, ՆԱԲԱԼ, ՍԱԼՈՄԷ, ՊԱՐՆ

ՄԱԹԱՆ

Երթայք դըստերք մատաղերամ առ Յովսաբէթ առնել ազդ ,  
Զի Մաթան խընդրէ խօսել աստ ընդ նըմա առանձին :

ՍԱԼՈՄԷ

Մաթան անտ . իցէ ով Տէր զի զնա յամեթ արասցես :

ՆԱԲԱԼ

Զի խուսափեն դորա եւ ոչ պատասխանի տըւեալ քեզ :

ՄԱԹԱՆ

Յառաջ անցցուք :

## Տ Ե Ս Ի Լ Բ

ԶԱՔԱՐԻԱ, ՄԱԹԱՆ, ՆԱԲԱԼ

ԶԱՔԱՐԻԱ

Յո՞ դու յանգուզըն դէմ՝ եղեալ ընթանաս .  
Յայգվայր սահման է քո , ըզգոյշ լեր մի այտի եւ այսր անցցես .  
Սուրբ է տեղիս այս եւ պահեստ պաշտօնէից Ստուճոյ .  
Զանսուրբս ի բաց աստի օրէնք զամենեսան արտաքսեն :  
Ո՞ր ի խընդիր եկեալ է քո . ի մեծի հայր իմ ի տօնիս  
Խոյս ի պըղծոց տայ կռակաշտից ի ժանտաժուտ տեսլենէ .  
Եւ մայր իմ արդ աղերսաւոր առաջի Տեառն մատուցեալ ,  
Զեղևէ թերի զպաշտօն իւր սուրբ թողուլ եւ զալ այսր առ քեզ :



## ՄԱԹԱՆ

Սպասեացուք նրմա, ընդէր է քեզ որդեակ իմ վերդովել.  
Պատգամաւոր ի դըշտոյէն գամ՝ ընդ տիկին մօր քում խօսել:

## ՏԵՍԻԼ Գ

## ՄԱԹԱՆ, ՆԱԲԱԼ

## ՆԱԲԱԼ

Տես աստըստին եւ զմանկըտւոյ դոցա գոռոզ յանդըզնու թիւն:  
Բայց Գոթողեայ այժմ՝ ըզքեզ այսր յղելոյ զի՛նչ խակ պատճառք.  
Ուստի՛ ի միտըս նորա անկեալ աղմուկդ այդ եւ վարանք:  
Ի ժըպիրհն Յովիդայեայ թըշնամանեալ նա այգուն,  
Եւ ի սաստից օրհասաբեր մանկան յանուրջն ահաբեկ,  
Զայրագին երթայր զենուլ ցամաման իւրոյ զՅովիդայէ,  
Եւ ըզիւհազաղ կացուցանել ի տաճարի աստ ընդ քեզ:  
Ո՛չ դու ինքնին զուրախու թիւն քո ընդ այս ինձ յայանեցեր.  
Ակն ունէի հաւասարել եւ ես փարթամ աւարիդ.  
Ո՞ ի տարտամ խորհրդոցն ըզնա այդպէս յեղափոխեաց:

## ՄԱԹԱՆ

Աւուրք երկու են բարեկամ, զի զնա ոչ եւրս ճանաչեմ.  
Ոչ եւս ինձ նոյն թըլի դըշտոյ քաջախորհուրդ եւ արի,  
Որ զկանացի գերազանցեալ ընու թեամբ ազգին վեհերոտ,  
Արագ արագ ըզթըշնամիս իւր յեղակարծ ըզգետնէր,  
Եւ զվայրկենից պատեհու թեան կորուսելոց գիտէր ըզյարգ.  
Այլ արդ հոգին այն վեհ ի խէթ իւրըճի սնտուոյ խուճապեալ,  
Վարանի, յարածըփի եւ պարզ ասել կին է արդ.  
Ի զայրոյթ եւ ի լեղի գառնու թեան դոյզն ինչ յառաջ  
Լըցի ըզսիրտնորա յուզեալ վաղ յերկնասաստ ի սպառնալեաց,  
Մինչեւ ըզհոգ վըէժ իւրնդրու թեան իւրոյ նա յիս ապաստանեալ,  
Հրաման ինձ ետ ձայն տալ հապճեպ թիկնապահացըն գընդի:  
Բայց մանկանն այնորիկ զոր ընկեցիկըն համբաւեն,  
Տեսիլ արդեօք, յորժամ՝ ածաւ նա զառաջեաւ աստ իւրով,  
Զանդոհական անբըջոցն ի նմա մեղկեալ զազդեցու թիւն,  
Թէ հրապոյրք գաղանի ըզսիրտ իւր գողացեալ ի դու թ նորա  
Զունիմ՝ ասել բայց տեսի զնա զի թուլացեալ ի ցամամանէն,  
Ի վաղուէ ի վաղիւ տարտամ ըզվըէժ իւր արկանէր,  
Տատանեալ յուզեալ ի ծուփա ընդդիմամարտ խորհրդոց.

- Ասեմ՝ « Գըշխոյ, իմ ըզմանկանն Հետագօտեալ ըզբարդ՝ ծա- »
- » Զի այժմէն իսկ զարմ նորա ի դով առեալ հըռչակի. [ նեայ »
- » Յովիդայէ երբէք երբէք ցուցանէ զնա դաւակցաց »
- » Միւս այլ Մովսէս իսրայելի գոգցես ըզնա պատրաստեալ . »
- » Եւ զօրաւիզըն դաւոյն առնու պատգամըս սրտսյօր : »
- Ի լուր բանիցս այտցիկ երեսք նորա շառագունին .
- Սըտութեան ո՛ւր իսկ երբէք այսպէս երազ յաշողեալ ելք .
- » Եւ ընդէր է մեզ, ասէ, կալ ի վարանըս լըքեալ .
- » Ելլուք ի տագնապէ աստի ելլուք ի յանդորր .
- » Դու ինքնին առ Յովսարէթ երթ զայս յինէն տալ պատգամ .
- » Կայ սուսեր թերաբամեալ, ի պատրաստի հուր լուցեալ .
- » Զիք որ զտաճար իւրեանց թափէ յայրեացաւեր կործանմանէ, »
- » Թէ ոչ աննենգ հաւատոց տացեն ըզտղայն ինձ դրաւական » :

ՆԱԲԱԼ

Վասն անծանօթ մանկան զոր դէպք թերեւս ի ծոց նոցա ար-  
իցէ թէ տայցեն նոքա զտաճար իւրեանց յաւեր : [ կեալ ]

ՄԱԹԱՆ

Գոռողադոյնն ի մահացուաց՝ ո՛հ, անծանօթ է քեզ դեռ եւս,  
Տեսցես ընդ հուպ զի մըտադիւր Յովիդայէ լեալ կըտտամահ,  
Եւ չառնուցու յանձն աւանդել մեզ իւրովի ըզտըղայն .  
Թող զայս՝ եւ գու՛թ սիրոյ նոցին առ պատանեակն՝ է ակներեւ .  
Եւ թէ քաջ վերահասու իցեմ՝ բանից դըշխոյին ,  
Գիտէ ինչ Յովիդայէ զազգէ մանկանն եւ լըռէ .  
Իցէ որ ինչ էն, այլ չարոյ լիցին նոցա իրացն ելք .  
Ժըխտեցեն նոքա ըզտղայն , այլն ամենայն յիմ՝ վերայ .  
Յուսամ զի ոչ եւս յամեսցեն ըզդըժպըհին աչաց իմոց  
Ըզտաճար նոցին զայս անհետ առնել հուր եւ սուսեր :

ՆԱԲԱԼ

Այլ ուստի՞ ատելութեան այդբանոյ բուռն ի քեզ գըրգիւ .  
Իցէ թէ Բահաղու նախանձ փառաց ըզքեզ գըրգէ .  
Իմ՝ յիմացելէ՛ որպէս գիտես իսկ սերեալ,  
Ոչ զԱստուածն իսրայելի պաշտեմ եւ ոչ ըզԲահաղ :

ՄԱԹԱՆ

Եւ կտրծիցես զու սիրեցեալդ իմ՝ զի սնտտի նախանձու  
Շլացեալ Մաթան եւ դրօշընոցըն փուտ փայտից մոլիցի զհետ,  
Կըռոց ապիկարաց , յորըս խընամք իմ՝ վատնեալ,  
Եւ ի ճարակ որդանց ծախին հանապազորդ ի բազնի :  
Պաշտեցելոյն աստ Աստուծոյ Մաթան ի ծնէ պաշտօնեայ՝

Նըմին եւ այս օր իսկ թերեւս ոչ հրաժարէր տանել պաշտօն ,  
 թէ մեծութեան իղձ , եթէ սէր իշխանութեան բարձրագահ  
 Ընդ խըստակրօն լըծոյ նորա միարանել կարէին :

Իցէ ինչ հարկ ի յուշ ածել քեզ ստտանօր , ո՛րպաւ ,  
 Չալխարհագոյժ վէճն օր յուղեալ 'դ Յովիդայէ եւ ընդ իս  
 Ըզխընկոցըն նըւիրաց երբ վիճէի ընդ նըմա .

Յուշ քեզ ածել ըզմարտ եւ զճիգն իմ եւ զարտօսք յուսահատ :

Յայնժամ պարտեալ ի յոտիւն մըտի ի նոր ասպարէս .

Եւ լեալ անձնատուր բողբանուէր ի յարբունիս ,

Մերձ ի լըսելիս թագաւորաց մատեայ տակաւ ,

Իղեն պատգամ բանք իմ ընդ հուպ , ուսայ ըզսիրտըս նոցին ,

Շողովէի զհաճոյս նոցա , եւ զգահավէժ վախից եզերս

Առ ոտըս նոցին յօրինէի ոահ ծաղկասփիւռ .

Ոչ ինչ ի սըրբութեանց խնայեալ ախտից նոցին ի նուէր ,

Չափ եւ կըշիւ յարմարէի նոցա անձնիւր ըստ հաճոյս .

Յովիդայէ որչափ իւրով սօպոն անողոր խըստութեամբ

Գըմնեայ ի լուր էր գոռոզիցըն մեղկասէր լըսելեաց ,

Նոյնընեաւ ճարտարութեամբ բանից էի ես զիւրալուր ,

Ըզտըխուր ճըշմարտութեան գէմս ի նոցունց գողացեալ ,

Եւ զեղեռնն նոցին գեղերեսեալ ի շրպար ,

Մանաւանդ զարեան հիբաց շըռայլելով ճապարհիս :

Գոթողիս յետոյ ուրեմն օտարուոյ աստուծոյն՝

Չորոյ ինքն եմոյժ պաշտօն , կառոյց մեհեան իւրակերս .

Հեծեաց Սաղիմ ի սըրբութեանցըն պըղծելոց ի տեսիլ .

Ճիչ մեծադոչ բարձին յերկինս որդիք Ղեւեայ սուկացեալ .

Ես միայն պակուցելոց Հրէից կացի օրինակ ,

Լըքի զնոցին օրէնս ի բաց՝ հաւան ընդ գործ զըշխոյին ,

Եւ փոխարէն ընկալայ զփառըս քըրմութեան քահաղու .

Նախանձորդին իմում՝ եղեալ այնուհետեւ ահաւոր՝

Եղայ ըզխոյր եւ գնամ նըմին գուգապատիւ ճոխածեմ :

Այլ ի ծայր սյսըր փառաց վերամբարձեալ՝ ոչ ժթտեմ

Չի Ատուծոյն յորմէ ուրաստ եղէ խեթկիչ յիշատակ

Ոչ գագարէ գեռեւս ըզսիրտ իմ՝ տագնասպէլ արհաւիրք .

Եւ է իսկ այս ատելութեան իմոյ զըրգիւ եւ ճարակ .

Իցիւ ի լըումն ածեալ ըզվրէժ ընդդէմ՝ իւրումըն տաճարի ,

Չատելութիւն նորա լիցի ինձ յայտ առնել ապիկար ,

Եւ եղեռան յաճախութեամբ յաղթեալ ի ըզճիւս կըռփանաց ,

Հեղձօցանել զայն ի նախաճիրս արեանց յաւեր ի փլատակ .

Այլ ահա գայ Յովսաբէթ :

## ՏԵՍԻՒ, Գ

## ՅՈՎՍԱԲԷԹ, ՄԱԹԱՆ, ՆԱԲԱԼ

Ի գըշխոյէն առարեալ՝  
 Կայկայել զխաղաղութիւն եւ զհեռ ի բաց վնտարեւ,  
 Մի զարմասցիս՝ իշխանուհի՛ եթէ առ քեզ գամ խօսել,  
 Ու՛մ Երկինք ետուն հոգի հեղահամբոյր այդպիսի:  
 Համբաւ իմըն սըտայօդ, որպէս կարծեւ արժեմ,  
 Հաստատեալ զանըրջական ազգեցութիւն գըշխոյին,  
 Ըզցասման նորա մըրրիկ յուզեաց ընդդէմ՝ Յովիդայեայ,  
 Որ վաղ իսկ յեղեռնաւոր ամբաստանեալն էր ի դաւ:  
 Ճոխանալ ինձ ի վաստակս իմ աստ առ ձեզ շէն ինձ կամք.  
 Յովիդայեայ չարեացն առ իս թէպէտ շիցեմ անտեղեակ,  
 Սակայն չարեաց վտարինել պարտ եւ արժան է բարիս.  
 Արդ աւասիկ խաղաղութեան բանիւք առ ձեզ հասեալ կամ,  
 Կելով կեցջիք եւ զտօնըս ձեր կատարեցէք աներկիւղ.  
 Ըզմի ինչ խընդրէ ի ձէնջ գըշխոյն ի գրաւ հաւատոց,  
 Եւ զայն իսկ դուն ես իմովսանըն գործեցի խափանել,  
 Այլ խընդրէ զպատանեկիկն որբ զոր ետես աստանոր:

## ՅՈՎՍԱԲԷԹ

ԶԵԼԻԱԿԻՄ:

## ՄԱԹԱՆ

Ինձ իսկ ամօթ ածէ խընդիր գըշխոյին.  
 Իլուրհաւան արդեօք սնտոեաց ինքն անըրջոց գըտանի,  
 Բայց դուք ոսոխք կենաց նորին երեւեսջիք յիսրիմք,  
 Թէ ոչ ի ձեռս իմ առժամայն ըզպատանեակն աւանդէք,  
 Նորա անժոյժ ակընկալեալ պատասխանույ առ ի ձէնջ:

## ՅՈՎՍԱԲԷԹ

Այդ աւասիկ խաղաղութեան մեզ ի նմանէ աւետիք:

## ՄԱԹԱՆ

Երկմըտիցէք իսկ եւ վայրիկ մի առ ի զայն ընդունել, [մամբ]:  
 Եւ ծանրագին ինչ ձեզ թուեսցի ըստանալ զայն գոյզն գիջ-



ՅՈՎՍԱՐԷԹ

Չարմանայի զի զնենդ ի բաց եղեալ եւ իբլը Մաթան  
Ըզբնակաւոր իւր զօրացեալ էր ի նուաճել ըզչարուծիւն .  
Եւ բիւրուց օրհասարբեր աղունց զըտակն եւ գործօն  
Իբր ըստուերաց ինչ բարւոյ լինել պատճառ գոյր բաւական :

ՄԱԹԱՆ

Ըզմէ իցէ քեզ բողոքել, յարձակիցիք որ ի քեզ  
Յափըշտակել ուժգին զորդի քո ըզ Զաքար ի գըրկաց .  
Ո՞ այդքանեաւ միւսդ այդ մանուկ սիրով ի քէն սիրեցեալ .  
Ինձ զարմանալ գայ մեծապէս ընդ այդչափ գուծ գորովոյ .  
Իցէ ինչ գանձ ձեզ այդքան մեծ, այդքան դա ձեզ պատուական .  
Իցէ ազատարար ձեզ պատրաստեալ ի յերկնից .  
Տեսլիք զի մի գուցէ զհամբաւն ըստուգիցէք հետեւըսլ  
Որ այժմէն ի խուլ շրշունջ ամէ տակաւ թեւա ի սիխու :

ՅՈՎՍԱՐԷԹ

Ո՞ր այն համբաւ :

ՄԱԹԱՆ

Զի ի տոհմիկ զարմէ մանուկն իցէ ճընունդ .  
Զի ի մեծ ինչ սահմանեալ յառնէ քու մէջ պատրաստի :

ՅՈՎՍԱՐԷԹ

Եւ Մաթանայ զայրոյթ տուեալ իւր ըզհամբաւն օգնական . . .

ՄԱԹԱՆ

Քո է, տիկին, քո ի խաբից աստի զիս զերծ կացուցանել .  
Գիտեմ զի Յովսարէթ ոտիս անհաշտ սրտուծեան ,  
Ապաքէն ի պահանջել հարկին եւ զանձն իւր տացէ ,  
Փոխանակեալ զայն ի վերայ անկեղծութեան մըտադիւր ,  
Քան ընդգէմ ճըշմարտութեան նենդել եւ դոյզն ինչ բանիւ .  
Հապա իցէ բաղդ պատանւոյդ ի սպառըսպուս իսկ անյայտ .  
Իցէ թէ զաբմ՝ դորին ի թանձըր ծածկիցի ի գիշեր .  
Իցէ եւ ձեզ իսկ անձանօթ յորոց ծնողաց գա սերեալ ,  
Յոյր ձեռանէ Յովիգայէ զմանկիկդ ի գիրկս ընկալաւ .  
Խօսեաց աղէ, ի լըսել կամ եւ հաւատալ բանից քոց ,  
Խօսեաց եւ տուր իշխանուհիդ փառս Աստուծոյ զոր պաշտես :

ՅՈՎՍԱՐԷԹ

Զհարդ իշխես դու անօրէն կարդալ զանուն Աստուծոյ  
ԳՈԹՈՂԻԱ



Ձոր ամբարիշտ շքրթունք քոյին ուսուցանեն հայ հոյեւ  
 Եւ զխորդ ճըշմարտութեան նորա վկայել կարիցես  
 Վատշուէր դու, որ ի ժանտից նըստեալ հանգչիս ի յաթոռ,  
 Ուր սըտութիւն բըռնակալեալ սըփուէ ըզժահըր մահու,  
 Եւ որ սնանխըզ դու ի դաւ ու ի խորամանգ նենգութիւն:

### ՏԵՍԻԼ Ե

#### ՅՈՎԻԴԱՅԷ, ՅՈՎՍՍԲԷԹ, ՄԱԹԱՆ, ՆԱԲԱԼ

##### ՅՈՎԻԴԱՅԷ

Ո՛ւր իցեմ, զո՞ տեսանեմ, ո՞չ Բահաղու է դա քուրմ.  
 Եւ դու դուստըր Գաւթի կան ընդ ուխտադրուծն եւ խօսիս,  
 Հանգուրժեն ի լուր բանից դորա եւ ո՞չ երկընչիս  
 Ձի ընդ ոտիւք անօրինին բացեալ երկիր ի հիմանց,  
 Բոցաշունչ բերանացի կլանել յանկարծ եւ ըզքեզ.  
 Ձի կործանեալ յարկդ ըզդըխով գորին եւ զքեզ ճըմլեսցէ.  
 Ձի ի ընդդէրէ դա, իբր անպատկառ աստուածամարտը ժըպրհի  
 Գալ այսրէն ապականել զայերս ի շունչ իւր ի ժանտ:

##### ՄԱԹԱՆ

Է իսկ ծանօթ Յովիդայէ յայդ ի յախուռն իւր ի թափ.  
 Սակայն արժան էր աստ նըմա ըզզօնագոյն խորհրդով  
 Ի դըշխոյէն գէթ ակն ածել եւ մի յոխորտ յարձակիլ  
 Յոր հաճեցաւ նա հրամանաց իւրոց ընտրել պատգամաւոր:

##### ՅՈՎԻԴԱՅԷ

Քաջ է, լուիցուք որ ինչ դարձեալ տայ դըժպըհի մեզ հրաման.  
 Իցեն հանգոյն պաշտօնէի նորին դըժնեայ եւ պատգամք:

##### ՄԱԹԱՆ

Ասացի ցՅովսաբէթ զոր պատուիրեաց ինձ դըշխոյն:

##### ՅՈՎԻԴԱՅԷ

Եւ դու ապա, եւ յերեսաց իմոց՝ ճիւաղ ամբարիշտ,  
 Երթ ի լընուլ ըզտոսկալի եղեռնութեանց քոց ըզչափ.  
 Յաւեցէ ընդ հուպ եւ զքեզ Տէր ի խուժանն ուրացող  
 Ի Գազան եւ յԱբիրոն, յԱքիտովէլ, ի Դոպիկ.  
 Ահա շունք ոյց արկ ի կուր ըզՅեզաբէլ աջ նորին,  
 Սպասեն սըրտմըտութեան նորա ի քեզ թափելոյ.  
 Կան աւարին իւրեանց առ դուրըս քո պատրաստք ի խընդիր:

ՀԱՆԴԻՍ ԵՐՐՈՐԴ

41

ՄԱԹԱՆ

Մինչև և արիւղյն ի մուտս եղեալ... տեսցի թէ ո՞ր յերկոցունցս  
Հասցէ... այլ օն ելցուք Նարալ:

ՆԱԲԱԼ

Յո՞ ընթանաս զարտուղի.

Ըզգայու թեանց քոց ապշեցոց զինչ այդ աղմուկ որ տիրէ .  
Աւասիկ ընդ այս են ելք :

## ՏԵՍԻՒ Զ

ՅՈՎԻԴԱՅԷ, ՅՈՎՍԱԲԷԹ

ՅՈՎՍԱԲԷԹ

Բսկիզբն է արդ մըրբրկին .

Գոթողիա ցասմամբ մեծաւ զելիակիմ պաշանջէ .

Զարմի մանկանն եւ խորհրդոց քոց գան ի յայտ արդ գաղտնիք .  
Փորբը միւս եւս եւ զհայր մանկանն ինձ անուանէր աստ Մաթան:

ՅՈՎԻԴԱՅԷ

Եւ ո՞ր ուրուք անօրինին զայն Մաթանայ է յայտնեալ .

Մի՞ արդեօք աղմուկ սըրտիդ ի խօսըս քո լեալ մատընտու :

ՅՈՎՍԱԲԷԹ

Ես իմովանըն ջանացայ նուաճել ըզկիրս իմ ի յիս .

Բայց զիտասջիր զի մծտալուտ մեզ ի վերայ կայ վըտանգ .

Այլում պատեհ ժամանակի կացցէ մանուկդ ի պաշեստ .

Մինչ անօրէնք խորհուրդ ի մէջ առեալ երկննն գեռ չարիս ,

Չեւ պաշարեալ ըզնա , մինչև եւ յափըշտակեալ առ ի մէնջ՝

Թոյլ աուր ինձ զայս երկրորդ անգամ ունել ըզնա ի ծածուկ .

Դեռ համարձակ են ճանապարհք , դըրունք դեռ բաց են նըմա :

Յանապատ իսկ ամայի թէ զնա ածել հարկ իցէ ,

Աւասիկ կամ , եւ զգողուղի ելա իսկ գիտեմ փախըստի ,

Ընդ որ անտես յաչաց զանխուլ անցեալ ընդ ձոր Կեղրոնի ,

Անկցուք ի յանապատ անգր ուր երբեմըն Դաւիթ

Հալածեալ ի հայրանննդ որդւղյն լալեօք խուսափեր

Փախըստեամբ իբրեւ ըզմեզ ի ընդրեւ անձին ապաւէն :

Արջք ինձ ու առիւծք վասըն նորա իցեն նըազ ահարկուք... .

Սակայն ընդէր իցէ մեզ ոչ ապաւինիլ առ Յէու .

Թերեւս ի յուշ քեզ արկանեմ յանկարծ խորհուրդ փրկուէս .  
 Աւանդապահ հանձուս մեծի արասցուք զինքն իսկ Յէու .  
 Այսօր իսկ մարԹ է անկանել մեզ ի սահմանըս նորին ,  
 Սուղ ինչ ուղին է ի միջի որ զմեզ առ նա ուղերձէ :  
 Յէու չէ որ անկարեկիր , չէ նորա սիրտ անողոր .  
 Սերեւի իսկ է նրմա ԴաւԹի անուանըն յիշատակ .  
 Բարէ , եւ ո՞ր անագորոյն եւ խըստասիրտ Թագաւոր ,  
 Եթէ միայն չիցէ նորա լեալ մայր միւս այլ Յեզարէէ :  
 Ում այսբանոյ աղերսարկուի ոչ գուԹ ի սիրտ արկցեն աղէտք .  
 Ոչ իսկ նորա հասարակաց է արքայից հանուրց դատ :

## ՅՈՎԻԴԱՅԷ

Զոր այդ խորհուրդ ինձ Թեւադրես Թերահաւատ երկիւղի .  
 Եւ իշխիցեն գու հաստատել ըզյոյս քոյին ի Յէու :

## ՅՈՎԱՍԿԻԹ

ՄիԹէ Աստուած արդելուցո՞ւ ի սպառ ըղինամ նախահոյ .  
 Ոչ Թըշնամանք իցեն նրմա յանդուզն ի նա վրտահել .  
 Ոչ եւ ինքըն իսկ ի ըլումն աստուածայնոցըն խորհրդոց  
 Ըզմարդիկ ի կիր առեալ զինուորեաց զաջ Յէուայ :

## ՅՈՎԻԴԱՅԷ

Յէու , զոր անքընին իմաստութիւնն իւր ընտրեաց ,  
 Յէու , յոր ականանեմ այդպէս ըզքեզ մեծայոյս ,  
 Մտացոնս ապախաւոր հատոյց շնորհաց փոխարէն .  
 Յէու եթող յանդորրու զդուստր Աբաարու ժանտաժուտ .  
 Եւ զարքայիցն իտրայելի մտլեալ ըզհետ պղծութեան ,  
 Խնայեաց ի զիցն Եզիպտոսի անդոնելեաց ի մահան .  
 Յէու եւ ի վերայ բարձանց ժըպիրհ խունկ ի նուէր ,  
 Յորմէ դարչի Աստուած , իշխեաց ի պաշտօն զիցն արկանել .  
 Ոչ սիրտ ուղիղ , ոչ ձեռք նրմա են սուրբ հերիք ի խընդրել  
 Ըզվրէժ փառաց Էին եւ կալ պաշտպան նորին իրաւանց .  
 Զէ իսկ եւ չէ մեզ արժան վըստահել յայլ որ բայց ի Տէր .  
 Յուցցուք զԵլիակիմ եւ փոխանակ Թաղբատի ,  
 Աբրուհական պրտակ ի գլուխ գայցէ նա այսր ի տեսիլ . [Ժամ,  
 կամք իսկ են ինձ կանխել ի նոյն քան զսահմանեալն յինէն  
 Մինչեւ իցէ ՄԹանայ ըզնենգ դուռն իւր պատրաստեալ :

### ՏԵՍԻԼ Է

ՅՈՎԻԴԱՅԷ, ՅՈՎՍՍԲԷԹ, ԱԶԱՐԻԱ, ՊԱՐՆ,  
ՂԵԻՏԱՅԻՔ

ՅՈՎԻԴԱՅԷ

Հապա օն Ազարիա, իցէ տաճարս ամրափակ:

ԱԶԱՐԻԱ

Հրաման ետու եւ առաջի իմ փակեցան դրունք համայն:

ՅՈՎԻԴԱՅԷ

Չիցէ աստ այլ ոք բաց ի քէն եւ ի սըբբոց քոց զընդաց:

ԱԶԱՐԻԱ

Երկիցս յաճեալ ըզսըբբու թեան սրահիւքըն շուրջ ելի յայց,  
Եւ չիք ոք, ամենեցուն երթեալ յանդարձ ի փախուստ.

Խուճապեցոյց երկիւղ ըզհօտն աւաղելի ցիր եւ ցան.

Ղեւտացւոցն եւեթ մընայ ազգ սուրբ ի սպաս Աստուծոյ.

Յորմէհետէ խոյս իսրայէլ ետ ի ձեռաց Փարաւոնի,

Արհաւիրս ուրեք երբէք չէր նա կըրեալ այսպիսի:

ՅՈՎԻԴԱՅԷ

Ո՛հ արգարեւ ազգ վատասիրտ ծընեալ յանարգ գերութիւն,  
Աստուածընդէմ եւեթ իսիզախ. բայց մեք ըզմերն առցուք զործ:  
Այլ զե՛նչ մանկտիոգ այդ, ո՛ զգոսա ունի դեռեւս աստ առ մեզ:

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Եւ զիտորդ, Տէր, իցէ մեզ մարթ մեկնեւ ի բաց առ ի ձէնջ.

Միթէ օտա՛րք ի տաճարի աստ Աստուծոյ իցեմք մեք.

Ո՛չ ահա հարք մեր եւ եղբարք կան միշտ աստէն ի սպասու:

ԱՅԼ ՈՄՆ

Աւաղ, ի վրէժ նախատանանցն իսրայելի եթէ ոչ  
իցեն բազուկք մեր բաւականք, որպէս երբեմն Յայելի,  
Զանիճապարտ վարսել ըզվլուխըս թընամեաց Աստուծոյ,  
Այլ զանձինըս կարիցեմք ի սպանդ նըմին նըւիրել:

Մինչդեռ բազուկք ձեր մարտիցեն ի սպահ նորայն տաճարի,  
Գէթ արտասուք մեր կարգասցեն զանուն նորա յօգնութիւն:



ՅՈՒՅԻՆՆԵՐ

Աւարտիկ, իմաստութիւն անբերնին, քո վրէժխնդիրը,  
 Ահա մանկունք եւ քահանայք ի կոխ քոյին զինուորեալ,  
 Բայց թէ դու նոցա հզօրիչ, ո՞ զդեմ ունեւ կարացե,  
 Կարող ես Տէր եւ ի շիրմաց կոչել ըզմեզ թէ կամիս .  
 Դու հարկանես եւ բժժըշկես, կորուսանես եւ վերկես .  
 Ոչ թէ յիւրեանց ինչ ի վաստակ իցեն դոքա ազատան,  
 Այլ ի յանուն քո ի վերայ նոցին յաւէժ կոչեցեալ,  
 Այլ ի յերդումն զքո երդուար սրբազունին յարքայս իւրեանց,  
 Այլ ի տաճարս յոր հանգչիս ի զուգասեւ արեգական :  
 Բայց ընդէր սիրտ իմ եռացեալ եւ սուրբ սարսուռ յիս ընթա-  
 րցէ թէ զսա դրաւէ հոգի աստուածեղէն յիս շնչեալ . [նայ,  
 Նոյն ինքն այո վառէ յիս հուր, խօսի եւ աչք իմ բանին,  
 Եւ ապագայ դարը ինձ մըլթինք ըստուերամածք ըուսանան :  
 Զօրավիզն ինձ ղեւտացիք լեքուք նուազացդ ի դանակս,  
 Ըստ այլակերպ ազգմանց նորին յարմարելով ըզգործիս .

ՊԱՐՆ նոսաբէ հոմանշան-իւն-իւն-իւն-իւն-իւն  
 նոսաբարանայ :

Աստուածային լեալ մեզ բարբառ լըսելի՝  
 Իցցեն ի սիրտս մեր պատգամք տերունի,  
 Արպէս գարնայնոյ  
 Այգուն զովարար  
 Ծաւալի ցողոյ  
 Շաղ ի դեզ դալար :

ՅՈՒՅԻՆՆԵՐ

Ըստ ինձ Երկին եւ դու երկիր ունկըն գիր .  
 Մի եւս ասեր թէ պահապան քո, իսրայել, կայ ի նիրհ .  
 Անօրինաց ջոկք ի խաւար զօղեսցին,  
 Զի դարթուցեալ է Տէր յամպոց զայրազին :  
 (Վիբոտին հոմանշան-իւն-իւն նոսաբարանայ զոր հոսոյ ընդ  
 հոսոյ ընդհատէ Յովիթայէ) :  
 Զիտրդ շայցառ ոսկին մարութր այլազունեալ ի կապար, . . .  
 Ո՞ քահանայդ մեծ դիտապատ ի տաճարին վեհասկայր . . .  
 Ողբա Սաղիմ, ողբա քաղաք տիրապրուծ  
 Մարգարէից սրբոց դահիճ խուժագուծ .  
 Ընկեց Աստուած քո դքեզ յիւրոց երեսաց,  
 Գարշի մերժի նա ի քոյոց կընդրբկաց :  
 Յո՞ ըզկանայսդ անէք ի քարչ, յո՞ ըզմանկտիգ աղածրի  
 Ո՞հ, ըզգըշխոյն քաղաքաց Տէր մատնեաց յաւեր ամայի .



Թագաւորաց անկեալ գահոյք, գերի վարեալ քահանայք .  
Չկամի ըզխումբս Տէր ածնից , գաղարեացն տարեկանք .

Սնկիր տաճար կործանեաց ,  
Հուր ցոլացի ի մայրեաց .

Սաղիմ , Սաղիմ սիրա իմ ի քեզ գելանի ,  
Ո՞ր ձեռն ըզբոյդ մերկեաց տեսիլ գեղանի .  
Իցիւ ի լալ ըզգառն աղէտբա քոյին  
Կըրկնավքտակ աչք իմ յաղբիւր դառնային :

Ա.Չ.Ա.Ր.Ի.Ա.

Ո՛վ սուրբ տաճար :

ՅՈՎՍՍԱՅԷԹ

Ո՛վ տուն Դաւթի :

ՊԱՐՆ

Քեզ , Տէր , Սիոն յուշ լիցի ,

Յուշ բարութիւնք քո առաջինք , անկցի քեզ դուժ ընդ նբմա :

( Դարչեալ հո՛մունչտա՛նիան նոսա՛գարնոց ե  
Գա՛նչեալ ընդ Գիլեադսն Յովկեղայե ) :

Երուսաղէմ զի հրաշագեղ

Վերկենցաղեալ յառնէ յերկիր անապատ

Անմահական բերեալ կընիք ի ճակատ ,

Չայն տուք ազնիք յերգոց գեղգեղ :

Ահա Սիոն վերածնանի քան ըզնախնին գերապանծ . . .

Ո՞՞ք են դոքա որ գան առ նա , թռուցեալ շորից ի ծագաց .

Գան ձագախառն երամովին որդիք զորս ոչ ինքն երկնեաց :

Սմբարձ , Սաղիմ , ամբարձ ըզգլուխ քո ահեղ

Հայեաց զարքայս շուրջ ի յակճիռս ի քո գեղ ,

Ըզբռունս ազանց գեանամանեալ առաջի

Գարշապարաց քոց համբուրել ըզփոշի .

Եւ զազգս համայն նախանձընգդէմ իրերաց

Դիմեալ ի լոյս քոյին գբնալ խռոնրնիժաց :

Յորոց ի սիրա հուր սուրբ սիրոյն Սիոնի

Բոցանըշոյլ վառեալ նոցուն երանի :

Յօղեա երկին ցօղ կենսաձիր

Եւ բըղխեցէ զազատարար իւր երկիր :

ՅՈՎՍՍԱՅԷԹ

Ո՛հ , եւ ուստի՛ անզուգական շնորհիս գայցէ մեզ պարգև ,  
Թագաւորաց եթէ սերունդ յորոց վերկշին պարա է գալ . . .

## ՅՈՎԻԳԱՅԷ

Յովսաբէթ, հանդերձեացիր ըզճոխ պըսակն արբունի,  
 Ձոր արբայն Դաւիթ տանէր յօծեալ իւրում գագաթան.  
 Եւ դուք, որդիք Ղեւեայ, ըզհեա իմ՝ օն եկայք զինուորիլ  
 Ուր մեկուսի յանսուրբ աշաց կան եւ պահին ըզգուշեալ  
 Ահաւոր մըթերք զինուց տէգք եւ նիզակք եւ սուսերք  
 Մըխեալք յարիւն փըղըշտացի՝ զորքս նոյն ինքըն մեծայաղթ  
 Թագաւորն անմահական փառօք պըճնեալ եւ ալեօք,  
 Սըբբեաց ի նուէր այնմ որ հըզօր աջողէ էր իւր հովանի.  
 Եւ ուր այլ արժանազոյն իցէ վարեւ մեզ նորօք.  
 Երթ իցուք, ցանկամ ինձէն ձեզ բաժանել զայնոսիկ:

## ՏԵՍԻԼ Ը

## ՍԱԼՈՄԷ, ՊԱՐ ԴՍՏԵՐԱՅ

## ՍԱԼՈՄԷ

Աղէտք ահա քորք սիրելիք աղէտք յոյժ  
 Եւ արհաւիրք մեզ հասանեն մահագոյժ.  
 Այս իցեն խունկք եւ պատարագք նախանուէր  
 Ձոր մեզ այսօր ձօնել արժան էր, ով Տէր:

## ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԻՆ

Ո վ յեղակարծ դէպք եւ տեսիլ ահարկու,  
 Ահա սուսեր եւ տէգ՝ գործիք մարտացու  
 Խաղաղութեան աստ ի յաւերժ օթարան  
 Վահանայից Տեառն ի ձեռին ցոլանան:

## ԱՅԼ ՈՄՆ

Ո՛հ, առ իմ՝ քաղաքըդ սուրբ լըռես դու  
 Յայսքան վըտանգ անկարեկիր ակնարկու.  
 Ձե՛, քորք իմ, քաջն Արեւններ կայ անմըռունչ  
 Ըզսըբբութեան տեղիս լըքեալ անտէրունչ:

## ՍԱԼՈՄԷ

Այլ յարբունիս ուր օրէնք  
 Ի բըռնութիւն չարանենդ,  
 Ուրանօր բարձ աւագութեան եւ պատիւ  
 Ձառածելոցն է զաշացու երկիւղիւ,  
 Ի՛բր իչխեացէ որ ըզբերան իւր բանալ,  
 Ի պաշտպանել զանմեղութիւն բըռնահար:

## ԱՅՈՒՄՆ

Պըսակդ այդ սուրբ ո՛ւմ հանդերձի տազնապաւ .  
Ուր Իսրայէլ հեծէ զայսբան աղմըկաւ :

## ՍԱԼՈՄԻ

Ահա Աստուած խօսեցաւ .

Մարգարէին իւրում յայտնեալ զայն կանխաւ .

Այլ իմաստից խորհրդօրէն բարբառոյդ :

Ո՛չ գիտացե առնել ըզմեզ խելամուտ .

Յօգնե՛լ արդեօք թէ ընդդէմ մեր ի դուպար

Յարիցէ Տէր առնուլ ըզզէն եւ զասպար :

## ՊԱՐՆ

Խոստումն աստի եւ սղառնալեաց անտի սասա ,  
Նըսեմաստուեր խորհուրդ դաղտնեաց ծածկեալ ասա .

Աւետաւոր մերթ բարեաց

Մերթ արկանէ գոյժ շարեաց :

Բարէ զիա՞րդ ճեմին ամուր միալուծ

Սէր այդպիսի ընդ այնքանոց ցասման ցոյց :

## ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԻՆ

Հուր ըզՍիոն դիցէ յայրեաց ի յաւեր ,

Ոչ եւս իցէ , կործանեսցի հիմն ի վեր :

## ԱՅՈՒՄՆ

Պաշտպանեսցէ Տէր ըզՍիոն յաւիտեան ,

Զեղեւ երբէք նորին խոստումն ընդունայն :

## ԱՌԱՋԻՆ

Մերկ ի զարդուէ զնա տեսանեմ եւ թափուր :

## ԵՐԿՐՈՐԳՆ

Փայլեալ ըզնա տեսանեմ շուրջ լուսափիւռ :

## ԱՌԱՋԻՆ

Խորասուզեալ ըզնա ի վիհս անդընդոց :

## ԵՐԿՐՈՐԳՆ

Բարձր ի ճակատ կըցեալ ըզնա ընդ ամպոց :

ԱՌԱՋԻՆՆ

ՈՎ ԹՐԽՐԱԳԻՆ ԿՈՐԱՆՔ :

ԵՐԿՐՈՐԴՆ

ՈՎ ՓԱՌՔ ԱՆՍԿԱՏՈՒՄ :

ԱՌԱՋԻՆՆ

ՈՎ ԳՊՎՔ ՈՂՔՈՅ :

ԵՐԿՐՈՐԴՆ

ՈՎ ԽՐՆԴՈՒԹԻՒՆ ԱՆՍՐՐՈՒՄ :

ԵՐՐՈՐԴ ՈՄՆ

ՄԻ ԽՈՈՎԼՆՍՅՈՒՔ՝ ԱՌԵԱԼ Ի ՏԷՐ ՄԵՐ ԽՐԱԽՂՅՈՒ .  
ԼՈՍԱՍՍՅԻՆ ՄԵՂ ՊԱՂՂԱՆԻՔ ՄԵ ՏԻ ԽՈՐՀԸՐՊՂՅՈՒ :

ԵՐԵՔԻՆ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ

ՍԱՍՏԻՅ ՆՈՐԻՆ ԱԿՆԱԾՈՒՔ

Ի ՍԷՐ ՆՈՐԻՆ յՈՍԱՍՍՅՈՒՔ :

ԱՅԼ, ՈՄՆ

ՍԻՐԱ Ի ՔՊԿՆ ՎԱՌ Ի ՍԷՐ

ԿԵՍՅ յԱՆԽՐՈՒՈՎ ԽԱՂՂԱՂՈՒԹԵԱՆ Ի ՔԵՂ ՏԷՐ .

ԱՆՈՆԵՍ ԱՆՃԻՆ ԽԻՐ Ի ՍՊԱՌ .

Ի ԿԱՄԸՍ ՔՈ յԱՄՆՆԱՅԻՆ ԿՅՅ ՎԱՏՈՒԿԱՌ .

ՉԻՔ Ի ՍՏՈՐԵՆ ԻՆՔ Ի ՎԵՐՈՅ ՔԱՆ ՊԱՐՓԻԻ

ԵՐՉԱՆԿՈՒԹԻՒՆ ՄԱՀՏԱՅՈՒԻ

ՔՐԱՆ ՊՅՅՆ յՈՐ ՍԻՐԱ ՀԱՆՊՅԻ ԸՅԵԿԱԼ ՍԻՐՈՎ ՔՈՎ

ԽԱՂՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՆԽՐՈՒՈՎ :

# Հ Ա Ն Դ Ի Ս Չ Ո Ր Ր Ո Ր Գ



## Տ Ե Ս Ի Լ Ա

ՅՈՎԱՍ, ՅՈՎԱՍԱԲԷԹ, ԶԱՔԱՐԻԱ, ՂԵԻՏԱՅԻՔ,  
ՊԱՐՆ

ՍԱԼՈՄԷ

Մանուկն Ելիակիմ՝ եղբարբս իմով մօրս առննթեր  
ձոխ ճեմելով հանդարտաբայլ այսրդ զիմեալ գան առ մեզ .  
Բայց քորք իմ զի՞նչ է զոր բարձեալ բերեն ի ձեռս ընդ քողով .  
Զի՞նչ եւ այն՝ որ յառաջոյ նոցին սուսերն ընթացեալ :

ՅՈՎԱՍԱԲԷԹ — Զ— Զ— Զ—

Որդեակ իմ զիր մեծարանօք այդր ի վերայ սեղանոյ  
Զահաւորըզ զայդ մատեան աստուածատուր օրինաց .  
Սիրեցեալ Ելիակիմ, մատիր եւ դու զիր նոյնպէս  
Զարբունականըզ զայդ պըսակ առ մատենիւրդ սրբբով .  
Եւ զայս զեւտացւոյդ քեզ Յովիդայէ հրամայէ  
Ըզգաւթեանն առ պըսակի նորին դընել ըզսուսեր :

ՅՈՎԱՍ

Առ ի՞նչ, իշխանուհի, նորատեսիլս հանդերձանք .  
Զի՞նչ մատեանդ այդ սուրբ եւ զի՞նչ սուր եւ պըսակդ արբունի .  
Յորմէ հետէ Տէր ի տաճար իւր ընկալաւ զիս ի սուրբ ,  
Զիք տեսեալ իմ աստանօր երբէք հանդէս այսպիսի :

( Ի փոքրէն Յովնաբէթայ զիւննն ի փոքրէն Յովնայ ) :

Ըզսրբագանըզ պըսակ էր փորձես ի գլուխ իմ տիկին .  
Ո՛հ, ինայեա, իշխանուհի, ինայեա ի փառքս թագիդ ,  
Ակն արբային յիշատակի աճ որ կըրէր զայդ ի գլուխ .  
Մանուկ հէք եւ սինըբօր յաւար արջուց ընկեցիկ . . .

ՅՈՎԱՍԱԲԷԹ

Թող ինձ, որդեակ իմ, կատարել զոր ինչ պատուէր ընկալայ :



ՅՈՎԱՍ

Ընդէր իցէ քեզ հառաչել, առ ի՞նչ յողոց ելանել.  
 Արտասուէն իշխանուհիդ, առ ի՞նչ յուզին դու թք ի քեզ.  
 Իցէ թէ հասանէ եւ ինձ այսօր ընծայիլ  
 Ձոհ երկնաւորին հանգոյն գըստերն Յեփթայեայ,  
 Յաճուցանել մահուամբ իմով զաստուածասաստ բարկու թիւն.  
 Ձեք ինչ որդւոյ զոր ոչ իւրում պարտիցի հօր, եղևիկ ինձ:

ՅՈՎԱՍԱՅԻԹ

Ահա կամացն երկնից թարգման որ զամենայն ցուցէ քեզ.  
 Մի երկընչիր, այլ մէք ելցուք աստի ի բաց, օն արիք:

ՏԵՍԻԼ Բ

ՅՈՎԻԴԱՅԷ, ՅՈՎԱՍ

ՅՈՎԱՍ

Հայր իմ:

ՅՈՎԻԴԱՅԷ

Ձի՞ է որդեակ:

ՅՈՎԱՍ

Ձի՞նչ հանդերձանքս այս իցեն:

ՅՈՎԻԴԱՅԷ

Պարտ եւ արժան է ինձ, որդեակ, մերկանալ քեզ զամենայն.  
 Քեզ առաւել քան զայլս ի դէպ է կանխադէտ գոլ շնորհին,  
 Ձոր պատրաստէ ժողովորդեան իւրում Աստուած, զոր եւ քեզ.  
 Քաջալերեաց եւ զօրացիր վառեալ զինուք հաւատոյ.  
 Ժամ է արդ հանդէս առնել քեզ տիրասէր նախանձուն  
 Ձոր ի մատաղ տիոց ի քեզ խընամ կալայ արձարծել.  
 Ժամ է արդ զի Աստուծոյ քում հատուցես զոր պարտիս,  
 Իցէ նախանձդ արիական, նախանձդ այդ վեհ ի սըրտիդ:

ՅՈՎԱՍ

Աւասիկ կամ տալ եւ ըզկեանս իմ մըտաղիւր թէ խընդրէ:

ՅՈՎԻԴԱՅԷ

Որդեակ իմ, աստ ի լուր քո ստեպ ընթերցան վէպք արքայից .  
 Ընդ որովք խիստ օրինօք կայ, յիշիցես, թագաւոր,  
 Առ ի թագին գոլ արժանի եւ վայելուչ ի դահուն :

ՅՈՎԱՍ

Արդար եւ զգօն թագաւոր, որպէս հրամանք են Աստուծոյ,  
 Ոչ յոսկի յուսայ եւ ոչ ի մեծութիւն ի սնտոի,  
 Կայ օրինաց նորին պատկառ, եւ երկիւղած յԱստուծոյ  
 Ի դատաստան նորին ի խիստ խոկայ ըզտիւ եւ զգիշեր,  
 Եւ ոչ ընդ տարապարտ լրծով զեղբարս իւր ընկճէ :

ՅՈՎԻԴԱՅԷ

Եթէ միում յարքայից հարկ լինէր քեզ երթալ ըզկնի,  
 Որդեակ իմ զո՞ ի նոցանէ առնուիր քեզ յօրինակ :

ՅՈՎԱՍ

Ինձ արքայից վեհից թլուի գոլ օրինակ գերագոյն  
 Աստուածանուէր սիրոյն ի փորձ հաւատարիմքն Գաւիթ :

ՅՈՎԻԴԱՅԷ

Զերթիցես ուրեմն ըզհետ զառածելոցն ի չարիս  
 Ամբարըշտին Ոքոզիայ եւ ուխտադրուծն Յովրամայ :

ՅՈՎԱՍ

Հայր իմ :

ՅՈՎԻԴԱՅԷ

Ասա իսկ համարձակ զիտրդ թուիցին նոքա քեզ :

ՅՈՎԱՍ

Կորիցեն հանգոյն նոցա նմանեալք նոցին թագաւորք :

(Յովիդայէ անկանի յոքս Յովրամայ) :

Զի՞ գործես հայր, զի՞ է ինձ յոտս իմ հայր ըզքեզ տեսանել :

ՅՈՎԻԴԱՅԷ

Հատուցանեմ զըսպաս զոր պարտ է ինձ իմումս արքայի .

Լէր յաջորդ արժանաւոր, Յովաս, նախնոյն քում Գաւթի :

ՅՈՎԱՍ

Ես Յովան :

ԳՈԹՈՂԻԱ

## ՅՈՎԻԴԱՅԷ ԵՐԵՄԻԱ

Լուիցես որով շնորհիւ Երկինք հրաշալեաւ  
 Ըզմուրեկան մօր ի դերեւ հանեալ զխորհուրդ չարութեան,  
 Մինչդեռ ահա ի սիրտ քոյին մըխէր դաշոյն իւր անգութ,  
 Ի միջոյ կոտորածին փրկեալ ըզքեզ բնկալաւ:  
 Բայց չեւ զերծեալ գտանիս ի սպառ ի զայրագին ցամամնէն .  
 Երկին կատաղութեամբ որով եւ վաղ իսկ ջանայր  
 կորուսանել ի սպառ ըզճեա որդւոյ իւրոյ ցարդ ի քեզ,  
 Մով զեռեւս անգբթութիւն իւր ի կորուստ կենաց քոց,  
 Եւ հալածէ զքեզ ընդ անուամբդ իսկ ընդ որով ծածկեալ կաս  
 Այլ գիտացի ես ընդ դրօշու քո վաղ խըմբել աստանօր  
 Բանակ հաւատարիմ պատրաստ ըզվրէժ քո խընդրել:  
 Քաջազունք յառաջ մատիք տոհմից սըրբոց ցեղապետք,  
 Վերապատուեալք կարգ ըստ կարգէ ի սըրբանուէր պաշտաւ  
 [մունս:

## ՏԵՍԻՒ Գ

ՅՈՎԱՍ, ՅՈՎԻԴԱՅԷ, ԱԶԱՐԻԱ, ԻՍՄԱՅԷԼ,  
 ԵՐԵՄԻ ԳԵՂԱՊԵՏՔ ԴԵՒՏԱՅԻՈՑ

## ՅՈՎԻԴԱՅԷ

Վերամարտիկք քոյին ահա քեզ նահատակք, տէր արքայ  
 Որդիք Դեւեայ, ահաւասիկ զոր խոստացայն ձեզ արքայ:

## ԱԶԱՐԻԱ

Բարէ, դա ինքն Ելիակիմ:

## ԻՍՄԱՅԷԼ

Դա այդ սիրուն պատանեակ:

## ՅՈՎԻԴԱՅԷ

Դա ինքն այո՛ է արքայիցն Յուդայ սերունդ եւ ժառանգ .  
 Հէքին Ոքողիայ կըրտսերագոյն ի յորդիս,  
 Քաջածանօթ ձեզ բուրբից ի բնիկ անուն իւր Յովաս:  
 Ըզվազահաս կորուստ նորին ի դեռափթիթ մանկութեան  
 Աշխարհաւ ելաց Յուդա, լացիք եւ դուք իսկ ըզնա,  
 Խառնիխուռն մահակից եղբարցն ըզնա համարեալ:  
 Այո՛ էաւ եւ նա զհարուած մարդախոշոշ երկաթոյն,

Այլ երկինք ըզմահացու հարուածն հանեալ ի դերեւ,  
 Եւ ըզլինեալն ի նմա գողցես պահեալ կայծակըն կենաց,  
 Յովսաբեթի ժամ ետ զհրակող աչքս դահճացըն պատրեալ  
 Զերծուցանել ըզնա ի դերկըս իւր արեամբ թաթաւեալ,  
 Եւ աւանգել ի տաճարի աստ դայեկաւ իւր ի պահ,  
 Գողցնին իւրոյ գիտակ զիս միայնակ ունելով:

## ՅՈՎՍՍ

Այդքանեաց բարեաց փոխան եւ հայրախնամ դորովոյ  
 Ո՛վ զիսորդ իցէ ինձ, հայր, հատուցանել քեզ արիաուր:

## ՅՈՎԻԴԱՅԷ

Այլում կացցէ ժամանակի երախտագէտ սըրտի ցոյց,  
 Այժմ ահա սա է թագաւոր ձեր, սա է յոյս ձեր միակ.  
 Իմ խնամարկեալ նրմա դաւանդն ողջիկ ձեզ ցարդ պահեցի,  
 Պաշտօնէիցըզ սըրբութեան մնայ արդ ըզգործն հանել յանդ.  
 Մարդախանձ դուտոր Յեզարելայ լեալ իրազէկ համբաւոյն  
 Զի կեայ Յովաս եւ տեսանէ զարեւ, հասցէ հուպ ընդ հուպ  
 Իջուցանել ըզնա ի ստուերքս դրժոխոց վերըստին,  
 Որ այժմէն իսկ վաղ կենաց անծանօթին դարանի:  
 Զեզ քահանայք սուրբք ձեզ է անկ զառաջս առնուլ ըզչարեաց,  
 Զամօթագարտ լուծ գերութեանն իսրայելի թօթափել,  
 Կանգնել զօրէնս, եւ զարքայից ձերոց խընդրել ըզվերէժ,  
 Ընդունելի առնել զարքայն իւրեանց ցեղիցն երկոցունց:  
 Բազմալտանդ եւ դրժուարին է մեզ ձեռնարկս այս անշուշտ,  
 Անդր ի դահիսս իւր ի բամբիշըն յարձակել ի գոռոզ,  
 Որոյ բանակ ահեղասաստ դըռոյթ դրօշու տայ ի չու  
 Այլազգեաց խուժան խիզախ եւ ուխտանենդ Հրէից ջոկ:  
 Այլ իմ Աստուած, յորոյ վերայ նահատակիմս, է հօրիչ.  
 Յուշ ձեզ զի յոյս իսրայելի կայ ի մանուկդ ապաստան.  
 Վրէժխընդիրն Աստուած խոռվէ ահա ըզսիրտ զըշխոյին.  
 Խաշ ըզնովաւ արարեալ վաղ իսկ այսր ըզձեզ կոչեցի,  
 Կարծէ նա զմեզ անպատըսպարս աստ եւ անզէնս ի կրօն,  
 Պըսակեսցուք օն ըզՅովաս արքայ ըզնա քարոզել  
 Եւ նորապսակ թագաւորիս վերամարտիկք անվեհերք  
 Գիմեսցուք խրախուսեալք յԱստուած մարտի ի տընօրէն:  
 Եւ ըզնիրհեալ հաւատս ի սիրտ ընդոստ ի քնոյ զարթուցեալ,  
 Յարձակեսցուք հետազօտել զոստին ի ընի անդ իւրում:  
 Եւ որ այն սիրտ խորասուղեալ ի թըմբու թիւն վատութեան  
 Որ ըզխրախոյս մեր զայս տեսեալ յերկնահարաւերն ի հանգէս,  
 Ոչ եւ ի նրբըն վառեսցի փողել ըզհեա մեր նահատակ.  
 Աստուած ընտիրն ընդ մեզ արքայ սընեալ ի տանն Աստուծոյ,



Եւ յաջորդն Ահարոնի, երիցանին ըզհետ իւր  
 Զօրավարէ որդւոց Ղեւեայ տալով նոցա ձայն ի մարտ,  
 Ի պատուական ձեռքս նոցին, զոր ժողովուրդն պաշտէ,  
 Զէնք ահաւորք սըրբազանեալք Տեառն ի Դաւթէ արքայէ -  
 Աստուած ինքնին ի թըշնամիս իւր արկանէ արհաւիրս .  
 Մի խնայէք թանալ ըզձեռքս ձեր յարիւն յանհաւատ,  
 Հարէք ըզտուրացին, զյարայելի հարէք զորդիս,  
 Յիշեցէք զի ղեւտացւոց առաքինեաց էք սերունդ,  
 Որք անգ ուրեմն յանապատին մինչ յեղեղուկն իւրայէլ .  
 Անօրինեալ խունկս արկանէր զիցըն պըղծոց Նեղոսի,  
 Մըրբաբար կոտորածիւ սիրելագոյն տոհմայնոց  
 Յարիւն ամբարբըշտաց ըզձեռս իւրեանց լըւացեալ,  
 Արիական ձեզ քաջու թեամբըն նաւթեցին ըզպատիւ .  
 Զեզ միայն աստուածայնոյն կալոյ ի սպաս սեղանոյ :  
 Այլ տեսանեմ ըզձեզ անժոյժս պժմէն ըզհետ իմ գալոյ .  
 Հնապա մատիք տալ նախ երդումն ի վերայ սուրբ մատենիս  
 Գոչ հաւատարիմ երկնապարզեւ արքայիդ,  
 Եւ ի վերայ նորին ճըղնել ի սպառ կենօք եւ մահու :

ԱԶԱՐԻԱ. — Ե՛րդնո՞ւն՝ յե՛րս ՚ի վերայ մարտնէն ունելով :

Մյո երդնումք աստ վասըն մեր եւ վասն եղբարցս համօրէն  
 Նըստուցանել ըզՅովաս արքայ յաթոռ նախնեացն իւրոց,  
 Եւ չեւ ըզվրէժ նորին խընդրեալ ի սպառ յիւրոց թըշնամեաց,  
 Զամիտիել զաստուածաւանդ մեզ ըզտուսերն ի պատեան :  
 Եւ որ ժըպրհի ուխտանենգ դըրժել երդմանըն զոր երդնու,  
 Աստուածասաստ ցասման քո, Տէր, տացէ ըզվրէժ եղեռան,  
 Եւ որդւովքն հանդերձ մերժեալ նա յերեսաց քոց տարազիք  
 Ընդ մեռեալս համարեցի անյիշատակս առ ի քէն :

ՅՈՎԻԿԱՅԷ

Եւ դու արքայ, ո՞չ երդնուցուս հաւատարիմ գոչ ի սպառ  
 Օրինացս յախտենից աւանդելոց քեզ ի կանոն :

ՅՈՎԱՍ

Քա՛ւ յինէն ըստերիւրել ինձ յօրինացդ յայդցանէ :

ՅՈՎԻԿԱՅԷ

Որդեակ, ներեա ինձ թէ իշխեմ գոչ քեզ դեռեւս որդեկոչ,  
 Կարեկից լեր գորովոյ սըրբիս եւ թող արտասուացս  
 Որ առ տագնապ հոգւոյս հոսնե վասըն քո ոչ վայրապար-  
 Զարգացելումք, աւանդ հեռի յարբունեաց չեւ են ծանօթ  
 Հրատոյրք աղիտարեր փառաց թագին թունալից,



Ոչ գիտես իբր ըզգլլիսէ զայր իշխանութիւն ինքնակալ,  
 Եւ ոչ զիտոր շողջորթից վատաց բարբառ վաղաքուչ:  
 Շքնթեցցեն յունկըն քո ընդ հուպ՝ զի սրբբագոյնք յօրինաց  
 Ռամկին եւեթ հրամայեն, զոն հըպատակ թագաւորաց .  
 Ձի արբայից չիք այլ օրէնք բաց ի յիւրոցըն կամաց .  
 Ձի գերագահ իշխանութեան պարտ է շնորհել զամենայն .  
 Ձի վատակ եւ հեծութիւն ժողովբողեան է բաժին .  
 Ձի երկաթեալ պարտ է հովուել զաւազանաւ ըզնոսա .  
 Եւ զի թէ ոչ նըւաճի՝ վաղ կամ անագան բրնանայ :  
 Այսպէս ըզբեզ հաղբից ի հաղբս արկեալ եւ խորս ի խորոց,  
 Ձեղձուցեն ըզգեղեցիկ բուսոյ բարուցդ ամբձութիւն .  
 Մինչև ապա զճըշմարտութիւն քեզ ատելի արարեալ,  
 Կերպացուցցեն զառաքինել քեզ զբժընդակ ի տեսիլ :  
 Այսպէս նորա զեղծուցին ո՛հ, զինաստնագոյնն յարբայից .  
 Երդուիր ապա ի սուրբ մատեանս յայս լու ի լու վըկայից  
 Երիցագոյն ունել խընամ պարտուց քոյոց առ Աստուած,  
 Գող ահաւոր անօրինաց, պատըսպարան անմեղաց,  
 ՁԱստուած ընդ քեզ եւ ընդ աղքատն ունել դատող ի միջի .  
 Յիշեա, որդեակ, զի եւ դու ինքն ընդ կրտաւեաւդ ընդ այդուիկ  
 Եղեր աղքատ իբր ըզնոսին, հանգոյն նոցին եղեր որբ :

ՅՈՎԱՍ առ «Իզանու՞ն՝ յերսս ՚ի վերայ մարեանն ունելով :

Երդնում պատկառ կալ օրինաց աստուածայնոց, եւ դու Տէր,  
 Եթէ երբէք խոտորեցայց ի քէն, պատժել պատժեա զիս :

ՅՈՎԻԴԱՅԷ

Եկ երթիցուք արդ օձանել ըզբեզ իւզով սրբբութեան :  
 Ժամ է արդ քեզ երեւելոց, եւ Յովսաբէթ յերեւան :

ՏԵՍԻԼ Դ

ՅՈՎԱՍ, ՅՈՎԻԴԱՅԷ, ՅՈՎՍԱԲԷԹ, ՉԱՔԱՐԻԱ,  
 ՍԱԼՈՄԷ, ԻՍՄԱՅԷԼ, ՂԵԻՏԱՅՈՒՔ ԵՐԵՔ, ՊԱՐՆ

ՅՈՎՍԱԲԷԹ ԳԻՐԻՍ ԵՆԻՍԼ ՅՈՎԱՍԱՅ :

Տէր արքայ, որդի Դաւթի :

ՅՈՎԱՍ

Մայր իմ, դու մայր իմ միակ :

Եկ սիրեցեալ Չաքարիա, մատիր ի գիրկս եղբօր քո :

ՅՈՎԱՍՏԵԻԹ ԵՎ ԶԳՏԱՐԻՍ :

Մատիբ որդեակ յոտս արքայի, անկիր երկիր պագ նըմա :  
Զգտարիս եւ Յովաս քրիստոսնն :

ՅՈՎԻԴԱՅԷ

Իցիւ, որդեակք, յաւերժանալ ձեզ անմեկնք յերերաց :

ՅՈՎԱՍՏԵԻԹ

Արդ գիտցես յոյր արենէ առեալ իցէ քո ըզկեանս :

ՅՈՎԱՍ

Գիտեմ իսկ յոյր ձեռն ի կորուստ գնացի [Ժէ դու ոչ էիր :

ՅՈՎԱՍՏԵԻԹ

ՄարԺ Ինձ ուրեմն իցէ կոչել ըզքեզ Յովաս յանուանէ :

ՅՈՎԱՍ

Եւ ոչ Յովաս ի սիրելոյ ըզքեզ երբէք վերջացի :

ՊԱՐՆ

Բարէ սա ինքն . . .

ՅՈՎԱՍՏԵԻԹ

Յովաս է սա . . . .

ՅՈՎԻԴԱՅԷ

Անսա լուիցուք զեւտացւոյդ :

### ՏԵՍԻԼ Ե

#### ՂԵԻՏԱՅԻ ՈՄՆ ԵՒ ՆՈՅՆՔ

ՂԵԻՏԱՅԻ

Դաւ աստուածընդդէմ պատրաստի՛ ոչ գիտեմ զինչ,  
Այլ փող ահագնագոչ շուրջ որոտայ սպառնալից .  
Հուր փայլատակէ դրօշուցն ընդ մէջ խիտ առ խիտ .  
Անշուշտ Գոթողեա կոչէ ըզզօր իւր ի գէն :  
Վաղ իսկ կալեալ են ելումուտք հասանելոյ մեզ ի նպաստ ,  
Եւ տա ճարիս վաղ իսկ սպատեալ սուրբ լեանն ի ժանտ տիւրացւոց :

Ո՞րք ի նոցանց շուրթն հայհոյիչ գոչէր այժմիկ ի լուր մեր,  
Զի ի շղթայս կայ Արեւնէր եւ ոչ կարէ օգնել մեզ:

ՅՈՎԱԾԻԹ ԽՈՒ ՅՈՒՄՈՒ

Ի զուր, որդեակ իմ սիրելի, ետուն Երկինք ինձ ըզքեզ.  
Ես իմովսանն ի փրկութիւն քո արարի, այլ աւանդ,  
Ոչ եւս Աստուած ըզհայր քոյն յիշատակէ ըզԴաւիթ:

ՅՈՎԻԴԱՅԷ

Չերկընչին ի տեղալոյ ցասման նորին ի գլուխ քո,  
Եւ ի գլուխ սիրեցելոյդ ի քէն ի սէր կաթողին.  
Եթէ անդարձ իսկ ի գրկաց քոց ըզմանուկոց բարձեալ,  
Կամէր շիջուցանել ի սպառ ըզճրագ տան Դաւթի,  
Ո՞չ ի վերայ լերինն կաս՝ լերին սըրբոյ ուր երբեմն  
Ամբարձ ըզձեռն իւր նախահայրն իսրայելի հնազանդեալ  
Անտրբտունջ մըխել յորդեակն անպարտական ըզտուեր,  
Ըզճերութեան իւրոյ զպըտուղ ի փայտակոյտ անդր ածեալ՝  
Յանձն ըզլըումն աստուածայնոյ խոտումանն ի նա առնելով,  
Ըղերձեալ բոլորանուէր ընդ սիրելոյ որդեկին,  
Ըզսահմանեալ զիւրոյ զարմին ըզյոյսն ի նմա միայնում:

Քաջազունք, բաժանեցուք ըզպահ, կալցի իսմայէլ  
Չարեւելից կողմն համօրէն, դու զհախախն պահէսճիր.  
Դու զարեւմուտս, հարաւակողմն ի պահ քոյն ապաստան:  
Մի յանխորհուրդ ոք ի նախանձ, թէպէտ իցէ ղեւտացի,  
Թէ քահանայ իսկ ոք իցէ, յարձակեցի դիմազբաւ,  
Տարածամ կանխեալ գաղանեաց իմոց լինել մատընտու:  
Վառեալք առ հասարակ նովին հոգևով քաջութեան,  
Կալարուք մինչեւ ի մահ զիւրաքանչիւր ըզկայս ձեր:  
Զաջացու սըրտմտութեամբն կուրացեալ թըչնամին,  
Համարի իբր ըզխաչինս ըզմեզ ի սպանդ պատրաստեալ.  
Կարծէ գտանել նա արհաւիրս եւեթ աստէն եւ խուճապ:  
Ազարիա, առ արքայի կացցես դու միշտ անմեկին.

(ԽՈՒ ՅՈՒՄՈՒ)

Իսկ դու սիրաբողբոջ քաջազարմից շառաւեղ,  
Ե՛կ յեռանդն ի նոր վառել ըզքո արի նահատակս.  
Ե՛կ աններել նոցին առնուլ ի գլուխ ըզթագն արբունի,  
Եւ մեռանել իսկ թէ իցէ հարկ՝ մեռանել իբր արքայ:  
Ե՛կ Յովսաբէթ դու զհետ նորին, եւ դու առ ինձ այսր ըզզէնս  
Իսկ դուք զանմեղ տուք, ով մանկտի, զարուօսր ի նուէր Աստուծոյ:

## ՏԵՍԻԼ Զ

## ՍԱԼՈՄԷ, ՊԱՐ ԴՍՏԵՐԱՅ

ՊԱՐՆ

Արիք որդիք Ղեւեայ երթայք,  
 Ոչ ուրեք ոչ մարտ գերասանձ  
 Քան զայս՝ ի զէն երբէք վառեաց  
 Բզնախաճարց ձերոց նախանձ .  
 Արիք որդիք Ղեւեայ երթայք  
 Տիրաճրաւեր ի յասպարէզ,  
 Վասն արքայիդ եւ Աստուծոյ  
 Առաջի կայ մարտընչեւ ձեզ :

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԻԷՆ

Ո՛ւր են, Աստուած Իսրայելի,  
 Տարաիք նետից քոց վրէժխընդիր,  
 Զոր ի յամպոցդ ազեղանէ  
 Ի քում ցասման տեղաս յերկիր .  
 Ո՛չ եւս իցես տէր նախանձոտ,  
 Թէ թուլացան աղեղըն քո,  
 Ո՛չ եւս ճայթէ նետ մաճաճոտ :

ԱՅԼ ՈՄՆ

Ո՛ւր են, Աստուած Իսրայելի  
 Նախնի խընամբ քո մըշտագեղ  
 Ի յարճաւիրըս վրտանդաց  
 Որ ըսպառնան ըզմեք աճեղ .  
 Մեթէ մեղանց եւեթ մերոց  
 Յունկըն քոյին ազդէ բողբ,  
 Ո՛չ եւրս գուժ քո որդեսէր  
 Ի մաղթանաց զիջցի յողբ :

ՊԱՐՆ

Ո՛ւր են Աստուած Իսրայելի  
 Նախնի խընամբ քո մըշտագեղ :

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԻԷՆ

Աճա ի քեզ լարեաց զաղեղն  
 Ամբարըշտաց ժողով ժբպիրճ :

Ի քեզ ի մարտս յայս յանդրգնեալ  
 Զրդէ ըզնեա իւր զրկալիւր :  
 Անցիշատակ յերկրէ աստի ,  
 Ասեն , լիցին տօնք նորին .  
 Ըզլուծ նորա թօթափեսցուք  
 Ըզմահացուաց բեռն ազին .  
 Ի սայր սրբոյ մեր ի տապաստ  
 Անկցի սրբոցն իւր երաստ .  
 Յաւեր դարձցին սեղանք խընկոց  
 Եւ խառնակոխ ի փողոց .  
 Փառաց ուանուանն առ Հասարակ  
 Բարձցի յաւերժ յիշատակ .  
 Ոչ ինքն եւ ոչ օծեալ նորա  
 Մի տիրեսցեն մեր վերայ :

ՊԱՐՆ

Ո՛ւր են , Աստուած իտրայելի ,  
 Տարափք նետից քոց վրէժխընդիր ,  
 Թէ թուլացա՛ւ աղեղ քոյին  
 Ո՛չ եւս տեղայ նետս ի յերկիր :

ՄԻԻՍ ՈՄՆ

Ո՛հրաշագեղ բընի զարմիդ  
 Դու վերջահաս վրթթեալ ճաղիկ ,  
 Թագաւորաց մերոց նըշխար  
 Մեզ պահեցար շարաբաստիկ :  
 Աւաղ , լիցի՞ մեզ ի սուսեր  
 Անկարեկիր քոյոյ ճնողիդ  
 Հայել ըզքեզ խոց միւսանգամ  
 Քամեալ գյետին արեան քո շիթ :  
 Աւքայորդիդ սիրասուն  
 Ասա մեզ տուր յսյտնութիւն .  
 Թէ յանմահից որ երկնառաք  
 Եկաց պաշտպան քեզ առընթեր ,  
 Եւ մահացու ի հարուածոց  
 Ըզթըշնամւոյն վրիպեաց սուսեր .  
 Կամ յաննըշոյլ ի դամբանէն  
 Զայն ի յերկնից կենդանածիր  
 Զածիւն քոյին վերկենցաղեաց  
 Ի մեռելոց դուլ կենսակիր :



## ԱՅԼ ՈՄՆ

Մի՛ Տէր, մի՛ ամա գրեացես զոճիրս  
 Ըզհետտելոցն ի քէն իւր հարց .  
 Մի՛թէ ի սպան թողցես ըզսա ,  
 Սըմա զնոցայն տան փոխադարձ :

## ՊԱՐՆ

Իտրայելին ով տէր Աստուած  
 Ա՛նր են իւրնամբ քո մըլտաղեղ  
 Ի յարհաւիրքս վըտանգաց  
 Որ ըսպառնան ըզմեօք ահեղ :

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ Ի ԲԷ-

ՈՏ, ո՛չ լըսէք քորք սիրուհիք  
 Ըզձայն փողոյն տիւրացի :

## ՍԱԼՈՄԷ

Ա՛յլ եւ զվայրագ զօրականին  
 Լըսեմ՝ զաղմուկ ի բացի .  
 ՈՏ, ի շողին զինուց նոցին  
 Սիրա իմ ի դող հարկանի ,  
 Օ՛ն փախիցուք մեք աստի  
 Պատըսպարել ի սրբութեանցն  
 Ամրածածուկ հովանի :

# Հ Ա Ն Գ Ի Մ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ



## Տ Ե Ս Ի Լ Ա

### ԶԱՔԱՐԻԱ, ՍԱԼՈՄԷ, ՊԱՐՆ

#### ՍԱԼՈՄԷ

Սիրեցեալ Զաքարիա, զի՞նչ լուր բերես դու առ մեզ :

#### ԶԱՔԱՐԻԱ

Առաւելեալ սրբոյ մըտօք պաղատեցէք առ Աստուած .  
Թըւի առ դուրքս մօտալուտ ահա հասեալ մեզ օրհաս .  
Պատերազմին մեծի արևեալ իսկ է հրաման , քոյր իմ, արդ :

#### ՍԱԼՈՄԷ

Իսկ Յովաս զի՞ գործէ :

#### ԶԱՔԱՐԻԱ

Յովաս եղաւ ըզթագ արքունի :

Քահանային մեծի թափեալ զիւղ սրբբութեան ի գլուխ նորին .  
Ոհ, զիւրդ դէմք բոլորից զըւարթացան անդ բերկրանօք,  
Ի տեսիլ թագաւորին զերծուցելոյ ի շիրմէ :

Ըսպիք վիրաց սրբոյն ի նմա, քոյր իմ, դեռեւս երեւին :  
Կայր անդանօր եւ ըստընտու հաւատարմին իւր դայեակ ,  
Որ լայնատարըր տաճարին յանկեան ուրեք մեկուսի  
Պահէր զաւանդըն ցանկալի , եւ բնաւ իսկ չէր ոք տեսող  
Վըկայ խնամոցըն մայրնի , բայց Տէր եւ մայրն իմ միայն :  
Ղեւտացիք խանդաղատեալք արտասուելով առ խընդին ,  
Ի ձայն հեկեկախառըն ցընծութեան գոչէին :

Եւ ի հըրճուանըս բոլորից՝ Յովաս համբոյր անհըպարտ  
Ումեմըն քաղցր աստ ակնարկեալ, սյլում անդ աջ կարկառէր .  
Հայրակոչ լինէր ոմանց, եղբարըս զսյլս յորջորջէր :

#### ՍԱԼՈՄԷ

Հըռչակեցան եւ արտաքոյ ապա իրացըն դաղտնիք :

## ԶԱՔԱՐԻԱ

Գաղտնիք իրացն ըզգուշութեամբ ի տաճարիս դեռ պահին .  
 Ղեւտացւոցն բազմութիւն ի խումբ ի խումբ բաժանեալ,  
 Կան առ ելլս տաճարիս կարգեալ ի խոր լուսութեան ,  
 Ամենուստ միահաղոյն յանկարծ ի դուրս յարձակել ,  
 Կեցցէ արքայ Յովաս կեցցէ , խրախոյս բարձեալ ի նըչան :  
 Հայր իմ արգել արքայի մի դիմագրաւել ի վրտանդ ,  
 Եւ զգոշ ի պահ նորին հրակել Աղարիսց կտ պատուէր :  
 Գոթողիա սուր ի ձեռին ծաղը ըզպղընձի դրամբքս առնէ  
 Բսպասեալ հասանելոյ աստակչական կազմածոց ,  
 Հարկանել ըզկարծեցեալսն խորտակել զամբուծիւնս ,  
 Եւ ըսպառնայ ածել նախճիրս արեան ածել աւերած :  
 Խրատ հօրն իմոց ետուն ոմանք յերիցանւոյն , քոյրիկ իմ ,  
 Ի ստորերկրեայ զանխուլ վայրի պեղեալ ի հարցն մերոց  
 Յապահովել ըզգանձն մեր ըզտապանակն Աստուծոյ .  
 Այլ հայրն իմ . վա՛շ աստուածանարգ եւ անարժան երկիւղիդ .  
 Տապանակն , ասէ , քանդիչ ահեղախորտս պարբսպաց ,  
 Այն որ զհոստան Յորդանանու նահանջեցոյց յետս ընդդէմ  
 Դիցն հեթանոսաց եղեալ ըստէպ յաղթական ,  
 Փախիցէ՛ արդ յերեսաց կընոջ ուրուք լըրբենւոյ :  
 Մայր իմ անդ առ արքայի յօրհասական ի տագնաոյ՝  
 Մերթ յարքայորդին , մերթ ի սեղանն աչս ածեալ ,  
 Ամբուռնչ ի յուզելոցն ընկճեալ ի կրից ոգեսպառ ,  
 Ըզխըստագոյն իսկ սիրտս ի գութ ածեալ շարժէր յարտասուս .  
 Իսկ արքայ սիտիէ ըզնա փարեալ ըստէպ ըզնովա :  
 Քորք սիրուհիք , եկայք ըզհետ իմ երթիցուք միաբան ,  
 Եւ թէ յերկնից կընքեալ այսօր իցէ վախճան արքայի ,  
 Օ՛ն երթիցուք , քորք իմ , եւ մեք լինել նրմին մահակից :

## ՍԱԼՈՄԷ

Ո՞ այդ ժըպիրհ ձեռն որ բաղխէ ըզդուռն ըստէպ , եւ ընդէր  
 Ղեւտացիքըզ գիրարեալ դիմն այդպէս խուճապաւ .  
 Յուամէ՞ ըզգուշացեալ ծածկեն դորա զղէնս իւրեանց ,  
 Մի արգեօք առաւ տաճարս ի թըչնամեաց :

## ԶԱՔԱՐԻԱ

ԶԱրեւններ այսր ածեն Երկինք :

Հանդարտ լեր ,

### ՏԵՍԻԼ Բ

ՅՈՎԻԴԱՅԷ, ԱԲԵՆՆԵՐ, ՅՈՎՍԱԲԷԹ, ԶԱՔԱՐԻԱ,  
ՍԱԼՈՄԷ, ՂԵԻՏԱՅԻՔ ԵՐԿՈՒ, ՊԱՐՆ

#### ՅՈՎԻԴԱՅԷ

Երա՞զք իցեն՝, Աբեններ .

Ի բազմամբոխ խռան թըշնամեաց որ զտաճարաւքս պատեն ,  
Ընդ որ ուղի անցըս զբտեալ հասեր մինչեւ այսր առ մեզ .  
Գոյժ հընչէր ամբարըշտի յեզարեւելեանըն դըտտեր  
Անագորոյն իւր խորհըրդոցն առ ի լըրուսն անվերէպ ,  
Զարիական ըզձեռքս քո պընդեալ յանարգ ի շըղթայս :

#### ԱԲԵՆՆԵՐ

Այո տէր, սիրտ իմ՝ անվեհեր եւ նախանձ խէթ են նըմա .  
Բայց այն ինձ դոյզն էր ի շարեաց պատրաստելոց ի նմանէ .  
Ի հրամանաց նորին արկեալ ի յարհաւիրքս բանտի ,  
Մնայի անդէն մինչեւ յաճիւն դատեալ նորա ըզտաճարս ,  
Գայր ապա , չեւ եւս յազեալ յայնչափ արեանց հեղեղէ ,  
Ազատել ի դըժպըհէ կենաց աստի զիս ի բաց ,  
Կարճեալ զաւուրս՝ որոց վախճան առնուլ ըիւրիցս էր արժան  
Յետ աղիտից կոտորածի զարմին իմոց արքայից :

#### ՅՈՎԻԴԱՅԷ

Եւ որով ըզքանչելեօք զազատութիւնդ ընկալար :

#### ԱԲԵՆՆԵՐ

- Խուժադուժ սըրտին գաղտնեաց Աստուած եւեթ է գիտակ .
- Բայց կացուցեալ զիս զառաջեաւ , ասէ ցասմամբ զայրագին .
- « Ահա տաճարդ այդ ի զօրաց իմոց անգերժ պաշարեալ ,
- » Եւ դարձուցէ զայն հուպ ընդ հուպ բոց վըթառու ի յաճիւն .
- » Աստուած քո ոչ թափել յիմոց զայն ի ձեռաց զօրեացէ .
- » Բայց միայն պաշտօնէից նորուն , թէ ոչ՝ դանդաղին ,
- » Մարթ իցէ փըրկել ըզկեանս իւրեանց երկու պայմանաւ .
- » Թէ ընդ մանուկն Ելիակիմ՝ տացեն ի ձեռս ինձ ըզգանձն ,
- » Յարքայէն ձերմէ երբեմըն մըթերեալ ի Գաւթէ
- » Եւ ընդ կընթով գաղտնեաց ի պահ տըւեալ պետին երկցանց ,
- » Իրազեկ գօլով նոցին՝ որպէս գիտեմ՝ հաւաստեաւ :
- » Երթ գօգջիր , կենաց նոցա շնորհեալ փըրկանք այս եւեթ » :

ԳՈԹՈՂԻՍ

## ՅՈՎԻԴԱՅԷ

Եւ զի՞նչ դու պարտ համարիցիս առնել, ով իմս Աբեններ:

## ԱՅԵՆՆԵՐ

Տալ զամենայն որ ինչ ոսկի արծաթ, [թէ գոյ արդարեւ,  
Եդեալ աստ առ ի Դաւթէ դանձ անձանօթ ի պահեստ,  
Եւ որ ինչ յաւարառու ձեռաց անյազ դըշխոյին  
Եղևւ հընար զերծուցանել քեզ ցանկալի ինչ եւ ճոխ.  
Կամիցին զի խուժան պիղծ յարձակեսցի հինարար  
Սուրբ ըզսեղանըն կործանել, հըրոյ մատնել ըզքերուբս,  
Ձեռն արկանել՝ ձեռըն ժըպիրհ՝ ի տապանակ անգր ի մեր,  
Եւ ի նախճիր արեան ձերոյ ըզբըբու [թիւնսըն պըղծել:

## ՅՈՎԻԴԱՅԷ

Այլ իցէ ազնուագութ սըրտի օրէն, Աբեններ,  
Ըզպատանակ հէք եւ [թըշուառ մատնել ի ձեռս հալածչաց.  
Ըզպատանակ՝ զոր ինքն ի խնամս իմ՝ յանձն արար ինքն Աս-  
Եւ դրաւաթ ափ ըզկեանըս մեր առնել նորին խկ կենօք: [տուած,

## ԱՅԵՆՆԵՐ

Եղուկ ինձ, ամենակալն Աստուած որ զսիրտ իմ զըննէ,  
Ի մոռացօնս ըզտղայն անմեղ տացէ բամբշանն արկանել,  
Եւ անողորմն յագեալ արեամբ Աբեններայ, [թըւեսցի  
Մահուամբս իմով զԵրկնից ցասումն յորմէ լըկի, զիջուցանել:  
Բայց զի՞նչ օգուտ իցէ մանկանն ի տարապարտ ճըզանց քոց.  
Ի կորընչել ամենեցուն ձեր ապրեսցի՞ արդեօք նա.  
Ձանհընարից հընարս Աստուած ոչ պահանջէ առ ի քէն.  
Վասն անողորբ բըճնաւորին չանսաստելոյ հրամանի,  
Ի մայրենի ձեռաց Մովսէս լեալ ընկեցիկ ի Նեղոս,  
Անդըստին ի խանձարրոց [թուէր յուղարկեալ ի կորուստ.  
Բայց Աստուած անակընկալ ըզնա յալեաց զերծուցեալ,  
Խնամակալ նմա ըզնոյն ինքն ըզբըճնաւորըն կացոյց,  
Ո՞ գիտէ զի՞նչ եւ արդ մանկանդ է պատրաստեալ ի նմանէ.  
Թերեւս արդեօք ի նմանափիշտ արկեալ ըզգա ի վըտանդ,  
Այժմէն իսկ ո՞ գիտէ, չիցէ նուաճեալ ի դու [թ անընդել  
Ըզվիրազն արխնարբու չուառաց մերոց արքայից.  
Ետես ըզնա եւ Յովսափէ [թ ընդ իս սակաւ ինչ յառաջ  
Մանկանն ի տես խանդաղատեալ զիջեալ ի խիտ ցասմանէն:  
Այլ դու, տիկին, ընդէր լըռես ի կարեւոր վըտանդին.  
Ժուժայցեն զի օտարի մանկանն ի սէր՝ ներեսցէ  
Յովիդայէ գըբզ եւ զօրդի քո, զժողովուրդդ համօրէն



Մրախողխող առնել ի զուր, եւ հրոյ ճարակ տալ ըզտաճարս,  
 Յորում միայն հաճի Բարձրեալն առնուլ յերկրի իւր պաշտօն:  
 Չինչ եւս առնել էր ձեզ յանկարծ եթէ մանուկդ անձանօթ  
 Թագազարմից նախնեաց ձերոց էր դա նըշխար ցանկալի:

ՅՈՎԸԱՅԷԹ ար ՅՈՒԴԱՅԷ Ի ԺՅՅՈՒՄ:

Տեսանեն ըզտիրասէր գութ իւր ընդ զարմ արքունի.  
 Եւ ընդէր ոչ յայտնես նրմին ...

ՅՈՎԻԳԱՅԷ

Ձեւ եւս է ժամն այն տիկին:

ԱՐԵՆՆԵՐ

Մեծագնոյ քան զոր կարծես են տէր վայրկեանքս այսորիկ .  
 Մինչ վարանիս դու աստ առնել պատասխանի դըշխոյին,  
 Մոլի հրացայտ կատաղութեամբ Մաթան կացեալ առ նրմա,  
 Ճեպէ նըշան տալ աղիտիցն, աճապարէ ի նախճիր .  
 Անկեալ թէ պարտ իցէ՝ առ ոտըս սըրբազանըս քոյին,  
 Երդ մեցուցեալ ըզքեզ ի վայրն սըրբութեան անմատոյց  
 Քեզ եւեթ բաց, վայր ահաւոր ուր Աստուծոյ հանգչին վառք,  
 Որչափ եւ խիստ իցէ եւ ծանըր քեզ հրաման դըշխոյին,  
 Ապրել ի յեղակարծ վտանգէ աստի խորհեսցուք .  
 Տուր ինձ պարապ, տուր ժամանակ ոգի եւեթ առնըրցոյ,  
 Եւ վաղորդայն՝ դիշերախառն իսկ հանդերձեալ կազմեցայց  
 Յազատութիւն տաճարիս ըզվըէժ նորին առ ի խընդրել:  
 Այլ տեսանեմ զի արտասուք իմ եւ աղերս ոչ զօրեն  
 Ազդել ի սիրտ ձեր, ողորքել զառաքիինիդ պընդութիւն .  
 Հապա առէք ինձ այսըր զէն, տուք մատուցէք ինձ սուսեր,  
 Եւ առ դրան անդ տաճարիս ուր թըշնամին ինձ մընայ,  
 Պատերազմաւ զէն ի ձեռին գոնեայ անկցի Արեններ:

ՅՈՎԻԳԱՅԷ

Հաւանիմ, խորհորդ ինձ քաջ ի միտս արկեր Արեններ .  
 Ըզբազմաղէտ ըսպառնալեացն հապա զառաջըս կայցուք .  
 Կարի իսկ քաջ, է յաւանդի աստանօր գանձ ինչ Դաւթի  
 Հաւատարիմ ինամոցս իմոց յանձնեալ այո՝ այն ի պահ,  
 Հրէից տառապելոց յուսոյ վերջին ասպաւէն,  
 Չոր պահէի ես ցարդ ինամով անտես յաչաց ի ծածուկ .  
 Այլ արդ զի հարկ է դըշխոյին քում ցուցանել զայն այսօր,  
 Կամ ի հաճել ըզնա, բացցին նրմա դըրունք տաճարիս .  
 Եկեացէ իւրովք ընտիր զօրականօքըն մըտցէ .  
 Բացց այլազգի իւրոյ յանդուզըն խուժանին ժըպրհութեան

Խնայեցե՛ք մի զսրբութիւնքս մեր մասնել յոտընկոխ .  
 Մի տեսցեն աչք իմ՝ զարհաւիրս աւարառուաց տաճարիս :  
 Ի մանկբուռոյ , ի յերկցանց իցէ՛ նրմա ինչ երկիրդ .  
 Խորհրդո՞վ քով կարգեցէ զթիկնապահաց իւրոց թիւ :  
 Իսկ ըզմանկանն , որ երկեղուկս այնչափ ի նա արկանէ ,  
 Իրաւախոհ արդարութեան քո քաջ տեղեակ՝ Աբեններ ,  
 Լու ի լու բամբշանըն քեզ ցուցից ըզգարմ՝ եւ ըզսերունդ .  
 Տեսցես յայնժամ՝ թէ՛ օրէ՛ն իցէ ըզնա տալ նմա ի ձեռս .  
 Ընդ դըշխոյն եւ ընդ մանուկըն դու կացցես դատաւոր :

ԱՖԵՆՆԵՐ

Քաջ է , այժմէն իսկ ընդունիմ՝ ըզնա 'նդ իմովքքս խնամօք .  
 Թող զամենայն երկիրդ ի բաց : Այլ ես փութամ՝ առ դըշխոյն :

ՏԵՍԻԼ Գ

ՅՈՎԻԴԱՅԷ , ՅՈՎԱՍԱԲԷԹ , ԶԱՔԱՐԻԱ , ՍԱԼՈՄԷ ,  
 ԻՍՄԱՅԷԼ , ՂԵԻՏԱՅԻՔ , ՊԱՐՏ

ՅՈՎԻԴԱՅԷ

Ժամ է արդ , Տէր կարող , ահա՛ անեալ ոսոխ քո առ քեզ .  
 Լուր իսմայել . ( Իժօնի տա նա 'ի Զաֆուս ) :

ՅՈՎԱՍԱԲԷԹ

Ամենակալ Տէր իշխեցող եթերաց ,  
 Արկ վերբասին զաչօք նորա դբողն իւ հաներ ի դերեւ .  
 Զո՛ճիր նորին , եւ զգոհն ի գիրկս իմ՝ թագուցեր ըզմատաղ :

ՅՈՎԻԴԱՅԷ

Երթ դու ըզգօնդ իսմայել , երթ դու եւ մի յապաղեր ,  
 Տես լընուլ անթերի զոր ինչ պատուէր ընկալար .  
 Տես մանաւանդ զի ի մտանել նորին ի ներքս ի տաճարս ,  
 Ընդ ուր ուրեք եւ անցանէ , լիցի խորին լքուութիւն :  
 Իսկ դուք , մանկունք , գահ արքունի պատրաստեցէք Յովասայ ,  
 Որ ահա գայ շորջափակեալ յաստուածանուէր ի զընդէն .  
 Այսք եւ դայեակն հաւատարիմ եկեացէ կալ առ նրմա :  
 Եւ դու տիկին , կաց ի լալոյ , սրբբեա զարտօսք աչաց քոց :  
 ( առ Ֆեռնս 'ի Ղեփոցոց )

Իսկ դու ի գալ դըշխոյն գոռօզութեամբ խելայեղեալ ,  
 Մինչ յանցանել նորա ընդ սեամբս տաճարիս փակին եւք ,

Տուր իսկ եւ իսկ ի ձայն փողոյ ի պատերազմ եւ ի զէն  
ԱՏ ի բանակըն թընամեաց յանկարծակի արկանել,  
Եւ հրաւիրել ըզժողովուրդն ի նպաստ իւրոյ արքայի .  
Մինչեւ անդր ի լրսելիս նորա ուժգին հընչեցո  
Ըզմեծահրաշ ըսքանչելիս ըզփրկուլթեանն Յովասայ .  
Ահա նա ինքն :

## ՏԵՍԻԼ Դ

ՅՈՎԱՍ, ՅՈՎԻԴԱՅԷ, ՅՈՎԱՍԱԲԷԹ, ԶԱՔԱՐԻԱ,  
ՍԱԼՈՄԷ, ԱԶԱՐԻԱ, ԴԱՍ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ  
ՂԵԻՏԱՅԻՈՅ, ՊԱՐՆ

### ՅՈՎԻԴԱՅԷ

Որդիք Ղեւեայ եւ քահանայք Աստուծոյ,  
Դարանամուտ պահ ըզվայրօքըս կալարուք անմըռունչ  
Ժոյժ կալեալ, վարել զեռանդըն ձեր ի խնամս իմ թողեալ .  
Մնալով ի կոչ հրաւիրանաց իմոց զալըյ յերեւան . (Յաճկն) :  
Տէր արքայ, օրէն ըղձից քոց համարիմ՝ յուսալ զայս ,  
Մատիբ՝ առ ոտըս քո զոտիս քո տեսանել կործանեալ,  
Որոյ զայրոյթ նորին քոյումըդ դարանէր մանկուլթեան .  
Ահա նա սյսըր մեծաքայլ դիմէ ածել քեզ կորուստ,  
Այլ դու մի զանգիտիցես , յիշեա զի դքեւ շուրջ ի պահ  
Հրեշտակըն սատակիչ արձանացեալ կայ ընդ մեզ .  
Մատիբ բազմեաց , ել ի գահայս . այլ դուռն ահա ճըռնչէ .  
Թող ինձ վայրկի մի աստ ըզքեզ վարագուրաւըս ծածկել .  
(Յգէ վճարաբոյրն) .

Տիկին , ընդէր այլագունիս :

### ՅՈՎԱՍԱԲԷԹ

Ո՛հ ի՛նչ իցէ անվըրդով  
Տեսանել ըզխուժանին ի տաճար այսըր խըռնել .  
Ո՛չ տեսանես զամբոխ մեծ թիկնապահացըն դըշտոյի :

### ՅՈՎԻԴԱՅԷ

Տեսանեմ զի տաճարիս սըրբոյ դըրունք փակեցան .  
Յապահոյեալ է ամենայն :

# ՏԵՍԻԼ Ե

ԳՈԹՈՂԻՍ, ՅՈՎԱՍ, ՅՈՎՍՍԱՐԷԻԹ, ԱՐԵՆՆԵՐ,  
ԹԻՎՆԱՊԱՀՔ ԳՈԹՈՂԻՍՅ

ԳՈԹՈՂԻՍ, առ Յուդիթայե

Այսպէս դու ով շարանիւթ

Դաւ եւ զբրժանըս նիւթելոյ շարեացապարտ առաջնորդ,  
Որ ի խոռով աղմըկայոյզ եւեթ ըզյոյս քո եղեալ,  
Գերակայից իշխանութեանց հանուրց ոստիդ ես անհաշտ,  
Որ յանդուզն եւ հետ՝ յԱստուած քո խորխտացեալ պանծայիր,  
Եղեր արդ պատիր յուսոյ քո նանրութեան խելամուտ,  
Ահա եթող նա ըզտաճար իւր եւ ըզքեզ ի ձեռս իմ:  
Արժան էր ինձ արդ ի սեղան անդր ուր զըսպանդսրդ զենուս,  
Եւ ըզքեզ . . . այլ խոստացեալըդ փրկկանօք շատանամ:  
Կացո զխոստումըն քո, ո՛ւր են, անձ այսր ըզգանձն եւ զմանուկ:

## ՅՈՎԻԴԻՍՅԷ

Այժմ իսկ լըցցին իղձք քո, եւ զոյգ զերկարանշիր ցուցից քեզ:  
( Բանի վարաբոյրն եւ տիւնանի Յովա Բազմալ ի գահ, եւ յազմե  
նորա սորոսն նորին ի Յովնիս, եւ Ազարեա սոսաբարաբիլ արձանա  
ցեալ ի Յովիթ, եւ առ նովա Չաբարիա եւ Սալոմե ի գահն ի վե  
րայ սորիճանայ գահոսն, եւ Բազմալիւն զնորացոյց սոր ի Յի  
սին իացեալք սորի եւ անրի ):

Երեւեաց մանկիկ մերոց ճեւտ արժանի արքայից .  
Ճանաչես, դըշխոյ, զժառանգ սրբազունին ի յարքայս,  
Եթէ ոչ զոնեա ծանիր ըզտուսերիդ քո զըսպիս:  
Ահա որդի քո եւ արքայ, ահա ժառանգ Որոզիայ .  
Տես ժողովուրդ, տես Արեններ, ծանիր զարքայն ձեր Յովաս:

## ԱՐԵՆՆԵՐ

Երկինք:

ԳՈԹՈՂԻՍ

Դրուժան:

## ՅՈՎԻԴԻՍՅԷ

Տեսեր եւ զկինդ հաւատարիմ հրէուհի,  
Դու ինքըն քաջ իսկ ճանաչես ըզդա ստընտու տրդայոյն,  
Որ մուրզին ի ցասմանէդ զերծաւ ի ձեռն Յովսարեթի .  
Ըզնա տաճարս այս ընկալաւ, Աստուած ըզնա պահպանեաց,  
Այս ի գանձուցըն Դաւթի այս եւեթ մընայ ինձ աւանդ:



ԳՈԹՈՂԻՍ

Կենդ քո , դըրժող դաւաճան , լիցի մանկանդ այդ ի կորուստ .  
Զօրականք , բարձէք յաշացս ըզդըժպլէճիդ զայդ ճիւղալ :

ՅՈՎԻԴԱՅԷ

Զօրք Աստուծոյ կենդանւոյ օն ապրեցուցէք զարքայն ձեր :  
( Բանին խոր + Բարիւնն և Երևի ներդնալողն որոճարին և  
զնորացի + Խոռժին ամենուստ 'ի որսւլարանն ) :

ԳՈԹՈՂԻՍ

Ո՛հ , ո՛ր իցեմ , դաւ է ս՛հ դաւ , եղուկ հիբիս դըլխոյի ,  
ի թըշնամեաց եւ ի զինուց գտանիմ յանկարծ պաշարեալ :

ՅՈՎԻԴԱՅԷ

Զի վայրապար շուրջ աշտ անես , չիք քեզ հընար փախըստի .  
Անխուսելի ըզքեզ Աստուած իմ ամենուստ պաշարեաց .  
Աստուած զոր դու նըշկահէիր ' ըզքեզ ի ձեռս իմ մատնեաց .  
Տուր արդ նըմա , հատա զհամար արեանցն իւ ցարդ արբեցար :

ԳՈԹՈՂԻՍ

Վա՛շ անարի զօրականիս , որ սասանեալ կան ահիւ .  
Ով վատարանց գու Աբեններ , յոր որոգայթ արկեր զիս :

ԱՅԵՆՆԵՐ

Դըլխոյ տիկին , գիտէ Աստուած . . .

ԳՈԹՈՂԻՍ

Թող արդ զԱստուածդ , անօրէն ,  
Եւ առ ըզվրէժ իմ :

ԱՅԵՆՆԵՐ

Եւ յուժմէ՞ , ի Յովասայ տեառնէ իմն :

ԳՈԹՈՂԻՍ

Դա՛ իցէ տէր քո , դա Յովաս , տես անօրէն , յուշի լեր  
Զ ի ի զօրաց իմոց դեռ կաս շուրջանակի պաշարեալ .  
Ահա լըսեմ զի բարձրագոչ բանակն ողջոյն կարդան զիս .  
Ահա հասեալ գան պաշտպանել ինձ , սարսեւջէք ապրտամբք :



## ՏԵՍԻԼ Զ

ԻՍՄԱՅԷԼ, ՅՈՎԱՍ, ՅՈՎԻԴԱՅԷ, ԳՈԹՈՂԻՍ,  
ԵՒ ԱՅԼՔ

ԻՍՄԱՅԷԼ — ՅՈՎԻԴԱՅԷ

Չերծաւ տաճարս, ոչ եւս ուրեք, տէր, երեւին թըշնամիք .  
Այլազգիք փախեան ի բաց, նըւաճեցան համազգիք .  
Որպէս ծուխ հողմավարեալ ցընդի անհետ ընդ այեր, .  
Նոյնպէս բանակն հալածական եղև ի ձայն Հըզօրին .  
Ղեւտացիք մեր ի բարձանց սըրբարաննիս ձայն բարձեալ  
Քարողէին ժողովըրդեան զՅովաս որդի Ոքոզիայ,  
Պատմէին զերծեալ ի սրոյ ըզնա ի տիս մանկութեան,  
Եւ ըզդրստերն Աքաաբու անկանել աստ յորոզայթ .  
Չուզածայն նոցին եւ փողք շուրջանակի հընչէին,  
Եւ շառաշիւն նոցին եւ ձայն աղաղակի ղեւտացոց  
Յահաբեկեալ անդր ի բանակն արկին ըզնոյն արհաւիրս,  
Իւ անդ ուրեմըն Գեդէոն ըզխրոխտն եհար Մադիամ .  
Տիւրացիք վահանընկէցք եւ զինաթափք նոքին նախ՝  
Տարադէմ՝ ընդ այլ եւ այլ ուղի գնացին փախըստեայ .  
Յերբայեցոց իսկ կէսք ահիւ խուճապեցան ի փախուստ,  
Բայց այլոց ըսքանչացեալ ընդ վերնախնամ տեսչութիւն,  
Մեծաձայն աղաղակաւ անցին ի կողմն Յովասու .  
Եւ ժողովուրդն առ հասարակ ծերք եւ մանկունք եւ տըղայք  
Գիրկս առ խընդին արկեալ միմեանց՝ օրհնեն ըզՏէր եւ զոր նայն  
Երգելով զորդին Դաւթի ի մեռելոց յարուցեալ : [եւ,  
Ի սոսկումն է Բահաղու անուն ի սուրբ քաղաքիս  
Եւ մեհենի նորին պըղծոյ դրունք խորտակեալ փըշրեցան .  
Արախողխող կորեաւ Մաթան :

ԳՈԹՈՂԻՍ

Հրէիցք Աստուած, յաղթեցեր .

Այո Յովաս է դա . ի զուր հնարիմ ես զանձն իմ պատրել .  
Տեղիք վերացըն վեկայեն ուր զնա ետու հարկանել,  
Տեսիլ դիմաց Ոքոզիայ, նոյն ախպք եւ նոյն կերպարանք  
Համայն ի յուշ զարիւն եւ զգարմըն զըժպըհի ինձ ածեն .  
Յաղթեաց Դաւթ որդին Յեսեայ, Աքաաբու տուն ի յաւեր .  
Դու միայն դու, Աստուած անգութ, դու զամենայն նխութեցեր .

Դու զիս ի յոյս դիւրապատրաստ վրէժխնդրութեան հրապու-  
 ի միում աւուր բիւրիցս եղեր անձին զիս ոսոխ . [բեալ,  
 Մերթ առ գուժ մանկանն ի խէթ խըղճի հարեալ լըլկեցեր,  
 Մերթ փարթամ՝ գանձուցդ ի փայլ շըլացութեամբ հարեալ  
 կաշկանդեցեր ահիւ գնալոյ նոցին յաւար եւ ի հուր : [զիս,  
 Թող արդ մանուկդ այդ իշխեսցէ քո ձեռասուն սիրելի,  
 Եւ իւրոյ նորապըսակ արքայութեանն ի հանդէս  
 Ըզդաշոյն արիւնարբու տացի նըմա մըխել յիս .  
 Այլ զայս նըմին ի մեռանել իւրում մաղթէ մայր նորին .  
 Զի իսկ մաղթել, նա աւանիկ ակն իսկ ունի եւ յուսայ,  
 Զի յօրինաց քոց տաղտկացեալ, եղեալ ի քէն լըծընկէց,  
 Ըստ արժանի Աքաաբու արեան զոր առ նա յինէն,  
 Հաւուն իւրոյ համանրման, հանգունատիպ հօր իւրոյ  
 Օտարատրթ եղեալ ժառանգ Գաւթի եւ ժանտ շառաւեղ  
 Բարձցէ զպաշտօն քոյին ի բաց եւ պըղծեսցէ ըզսեղան  
 Աքաաբու, Յեզարեայ եւ Գոթողեայ վրէժխնդիր :

ՅՈՎԻԴԱՅԷ

Քարէնցի հանցի արտաքս ի տաճարէս վաղ ընդ փոյթ,  
 Եւ մի տեղոյս սրբոյ արեամբ նորին լիցի շաղախել .  
 Արիք արդար վրէժխնդիրք մահուան ձեռոց արքայից,  
 Յաճուցանել զարեան նոցա մահուամբ դորին ըզբողոք .  
 Եւ որ յանդուզն որ զտազով անօրինին գոլ ժըպրհի,  
 Ի սայր սրբոյդ զպրացելոյ հարցի եւ նա անխնայ :

ՏԵՍԻԼ Է

ՅՈՎԱՍ, ՅՈՎԻԴԱՅԷ, ՅՈՎՍԱԲԷԹ, ԱԲԵՆԵՆԵՐ  
 ԵՒ ԱՅԼԻՆ

ՅՈՎԱՍ ԻՎԷՄԷՆՆԷՆ

Տեր ծածկագէտ, որ զդառնութիւն սըրտիս եւ զվիշտ տեսանես,  
 Յըրեա զդորա զանէծս յինէն եւ մի թողուր զի լըցցին .  
 Հար եւ կորո՞ զՅովաս մինչեւ նորա ըզքեզ մոռացեալ :

ՅՈՎԻԴԱՅԷ — ՂԵՐՄԵՆԷ

Ձայն տուք գալ ժողովըդեան զարքայն իւրեանց տեսանել,  
 Եւ առաջի նորա երզնուլ նըմա աննենդ ըզհաւատս .  
 Օ՞ն քահանայք եւ ժողովուրդք ընդ արքայի երթիցուք  
 Շնորհապարտ սըրտիւ պընդել զուխտն Յակոբու առ Աստուած ,

Ընդ զարտուղի գընացըս մեր ամաչեցեալ սրբբութեամբ,  
Երգուիցուք նըմա դարձեալ զանձինըս մեր ի ճառայս .  
Աբեններ, մատիր ունել առ արքայի զքո տեղի :

### ՏԵՍԻԼ Ը

#### ՂԵԻՏԱՅԻ ՈՄՆ ԵՒ ՆՈՅՆՔՆ ԱՌԱՋԻՆՔ

##### ՅՈՎԻԴԱՅԷ

Ընկալաւ ըզպատուհաս իւր ամբարիշտն , ասա ճն :

##### ՂԵԻՏԱՅԻՆ

Չեղեռնաւոր կենաց նորին քաւեաց երկաթ զարհաւիրս .  
Մոլեգնութեան նորա 'նդերկար եղեալ Սաղիմ խաղալիկ ,  
Եւ աստ ուրեմն ի գըժպըհի ազատացեալ ի լըծոյն ,  
Հըրճուանօք ի ճապաղիս արեան նորին ակնարկէ :

##### ՅՈՎԻԴԱՅԷ


Ըստ արժանի եղեռնութեանցն ահեղ նորին կորըստեամբ .  
Ուսարուք արքայք Յուդայ , դիք անմոռաց ի մըտի ,  
Չի է թագաւորաց յերկինըս խիստ դատաւոր ,  
Ի վրէժիքնդիր անմեղութեան , է որբոց հայր խնամակալ :













ՀՀ Ազգային գրադարան



NL0685857

